

ЦЗЧЦЧЦЦ

РШШШ

2-3' 95

АЙКАКАН БАНАК





ՋԻՆԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության մարշալներ, Խորհրդային Միության կրկնակի հերոս
Հովհաննես Բրիատափորի Բաղրամյան և Խորհրդային Միության քառակի
հերոս Գեորգի Կոնստանտինովիչ ժուկով

БРАТСТВО ПО ОРУЖИЮ

Маршалы Советского Союза, дважды Герой Советского Союза Ованнес
Христофорович Баграмян и четырежды Герой Советского Союза Георгий
Константинович Жуков



ԱՅՎԱԿԱՆ ԲԱՆԱԿ ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում
1995 թվականից
տարին վեց անգամ

Выходит в свет
с 1995 года
шесть раз в год

2-3 1995

ՈՍՉՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՄ ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ

Մտայողական օգտագործման համար • Для служебного пользования № 000503 *

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԿՈԼԵԳԻԱ

- Տեր-Գրիգորյանց Ն. Գ. (նախագահ)
- Քոթանջյան Հ. Ս. (հանդեսի գլխավոր խմբագիր)
- Աբրահամյան Ա. Ս. Ավագյան Ռ. Հ. Ավետիսյան Մ. Վ. Գորդիենկո Ի. Վ. Հայրապետյան Վ. Ա. Հարոյան Հ. Վ. Հարությունյան Ա. Թ. Հարությունյան Մ. Հ. Մարդանյան Ա. Գ. Մարտիրոսով Լ. Ա. Միրզոյան Ս. Վ. Ծահսովարյան Ս. Ն. Պետրոսյան Ա. Ա. Պետրոսյան Ա. Ս. Պետրոսյան Գ. Լ. Սարգսյան Ա. Գ. Սարգսյան Ա. Ե. Սարգսյան Մ. Ս. Տեր-Թադևոսով Ա. Ի. Օհանջանյան Մ. Վ.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Կ. Ա. Հարությունյան, Հայ ժողովրդի ավանդը ֆաշիստի դեմ տարած հաղթանակում 3
- Գ. Ա. Գրիգորյան, Ստալինգրադի հերոսամարտը հայ ժողովրդի ճակատագրում 15
- Գ. Ա. Աբրահամյան, Հայկական Թամանյան դիվիզիայի մարտական ուղին 21
- Խմբագրության կողմից 26

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Հ. Ա. Քոթանջյան, Ղարաբաղյան վիճված հակամարտության կարգավորման և լուծման քաղաքագիտական հիմնահարցերը (մարդասիրական-իրավական, ռազմաքաղաքական և դիվանագիտական տեսանկյուններ) 29

ՕԳԵՐԱՏԻՎ ԱՐՎԵՍ

- Լ. Ա. Մարտիրոսով, Չորքերի քողարկումը պաշտպանության մեջ 39

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- Ն. Գ. Տեր-Գրիգորյանց, Պաշտպանության մեջ ստորաբաժանումների կառավարման հիմունքները 43

ՌԱԶՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

- Ա. Ե. Սարգսյան, Հայաստանի Հանրապետությունում ռազմագիտական աշխատանքի համակարգի մասին 50

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

- Բ. Ն. Հարությունյան, Նոր մտեցումներ Հայաստանի Հանրապետության վիճված ուժերի բժշկական ապահովման գործում . . . 53

ՀՕԳ-Ի ԶՈՐՔԵՐՈՒՄ

- Ս. Ս. Խոջոյան, Ձևափոխությունների կառուցվածքը, մարտական հնարավորությունները և կիրառման սկզբունքները 58

РЕДАКЦИОННАЯ
КОЛЛЕГИЯ

Тер-Григорьянц Н. Г.
(председатель)
Котанджян Г. С.
(главный редактор
журнала)
Абрамян А. С.
Авакян Р. О.
Аветисян М. В.
Айрапетян В. А.
Ароян А. В.
Арутюнян А. Т.
Арутюнян М. А.
Гордиенко И. В.
Марданян А. Г.
Мартirosов Л. А.
Мирзоян С. В.
Оганджян М. В.
Петросян А. А.
Петросян А. С.
Петросян Г. Л.
Саркисян А. Г.
Саркисян А. Е.
Саркисян М. С.
Тер-Татевосов А. И.
Шахсуварян С. Н.

СОДЕРЖАНИЕ

ВОЕННАЯ ИСТОРИЯ

К. А. Арутюнян. Вклад армянского народа в победу над фашизмом	66
Г. А. Григорян. Сталинградская битва в судьбах армянского народа	77
Г. С. Абрамян. Боевой путь Армянской Таманской дивизии	83
От редакции	88

ВОЕННАЯ ПОЛИТИКА

Г. С. Котанджян. Политологические проблемы урегулирования и разрешения Карабахского вооруженного конфликта (гуманитарно-правовой, военно-политический и дипломатический аспекты)	91
--	----

ОПЕРАТИВНОЕ ИСКУССТВО

Л. А. Мартirosов. Маскировка войск в обороне	100
--	-----

ТАКТИКА

Н. Г. Тер-Григорьянц. Основы управления подразделениями в обороне	103
---	-----

ОРГАНИЗАЦИЯ ВОЕННОЙ НАУКИ

А. Е. Саркисян. О системе военно-научной работы в Республике Армения	112
--	-----

ВОЕННАЯ МЕДИЦИНА

Б. Н. Арутюнян. Новые подходы в медицинском обеспечении Вооруженных сил Республики Армения	115
--	-----

В ВОЙСКАХ ПВО

С. С. Ходжоян. Организация, боевые возможности и принципы применения зенитно-ракетных войск	120
---	-----

Շապիկի տաշին էջում. Մարմարաշատի հուշահամալիրի մի հատված:
Ճարու րաշխ՝ Ռ. Իսրայելյան, քանդակագործ՝ Ա. Հարությունյան:

На первой странице обложки: фрагмент Сардарапатского мемориального комплекса. Архитектор Р. Израелян, скульптор А. Арутюнян.



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՎԱՆԴԸ ՖԱՇԻՉՄԻ ԴԵՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ

Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայ ժողովրդի մասնակցությունը Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմին» խմբի ղեկավար

1939 թ. սեպտեմբերի 1-ին ֆաշիստակալ Գերմանիայի պորքերի Լեհաստան ներխուժումով սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Օգտվելով արևմտյան տերությունների պասիվ դիրքից՝ Հիտլերը շուտով իրեն ենթարկեց ոչ միայն Լեհաստանի մի պզտի մասը, այլև Բելգիան, Հոլանդիան, Դանիան, Ֆրանսիան, Հարավսլավիան և Հունաստանը: Մինչ այդ Գերմանիան իրեն էր միացրել Չեխոսլովակիան և Ավստրիան: 1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան, խախտելով 1939 թ. օգոստոսի 23-ին ԽՍՀՄ-ի հետ 10 տարի ժամկետով կնքված չհարձակման պայմանագիրը, հանկարծակի հարձակվեց Խորհրդային Միության վրա՝ նպատակ ունենալով կայծակնային պատերազմի միջոցով մի քանի շաբաթվա ընթացքում ոչնչացնել աշխարհի 1/6 մասը կազմող հսկա տերությունը, ստրկացնել նրա ժողովուրդներին և ստեղծել գերմանական մեծ կայսրություն:

Դեռևս Լեհաստանի վրա հարձակումից մի քանի օր առաջ, 1939 թ. օգոստոսի 22-ին Օրենպայթբուրգում Երրորդ Ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ Հիտլերը հատուկ ցուցում էր տվել իր պորավարներին, որ առաջիկա պատերազմում անխնա բնաջնջեն սլավոնական ժողովուրդներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքի վրա: Մյժմ, մեր ժամանակներում, այնու ո՛վ է հիշում 1915 թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին¹, իր գեներալներին ոգևորելու համար ցինիկաբար ասել էր Ֆյուրերը: Ուստի պատահական չէր, որ պատերազմն սկսվելու առաջին իսկ օրերից հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու համար իր գոյությունը, որովհետև նա պարզ գիտակցում էր, թե ինչ վտանգ է սպառնում իրեն, եթե Գերմանիան հաղթի Խորհրդային Միությանը և ռազմական գործողությունների թատերաբեմը տեղափոխվի Անդրկովկաս: Չէ՛ որ հենց պատերազմի սկզբին Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ վուտակել էր 26 սպառազեն դիվիզիա և հարմար պահի էր սպա-

սում այնտեղ ներխուժելու համար²: Հայ ժողովրդի հիշողության մեջ դեռևս թարմ էին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայի դաշնակից Թուրքիայի կողմից Արևմտյան Հայաստանում հայերի նկատմամբ կիրառված անբարեխառն կոտորածները: Ցեղասպանության այդ բարբարոսական ակտի հետևանքով Արևմտյան Հայաստանում գաղանաբար սպանվեցին ավելի քան 1,5 միլիոն հայեր, իսկ մոտ 800 հազարը բռնեց գաղթի ճանապարհը³, սփռվելով աշխարհով մեկ: Ստալինգրադին և Կովկասին ֆաշիստական պորքերի մոտենալուն պես՝ Թուրքիայում գլուխ բարձրացրին պանթուրքիզմի գաղափարախոսները, որոնց հրապարակած աշխատություններում և քարտեզներում բացակայում էր Հայաստան անունն ընդհանրապես: Մեծ Թուրքիայի սահմանները ձգվում էին մինչև Իթիլ (Վոլգա) — Ուրալ, Արիմ, Միջին Ասիա — Յակուտիա, գրել է թուրքական «Բոլ կուրդ» («Գորշ գայլ») ամսագիրը 1941 թ. հուլիսի 11-րդ համարում, «Թուրքիզմը սպասում է՝ հողվածում՝ դրան կցելով Մեծ Թուրքիայի» քարտեզը նշված սահմաններով⁴:

«Հայ ժողովուրդն իր բավադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար զավթիչների հարձակումներին, — նշել է այն տարիներին ԽՍՀՄ առաջատար թերթ «Պրավդան» իր «Հայ ժողովուրդը՝ Խորհրդային Միության ապատագրական պատերազմի մարտական մասնակից» առաջնորդող հոդվածում: — Նա գիտե, թե ինչ բան են կոտորածը, ջարդերը, սովը, բռնությունները: Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որը կազմակերպել էր արյունոտուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Այդ պատճառով էլ, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որն սկսեց մարդակեր Հիտլերը Խորհրդային Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի

² Տես Մ. Մ. Երեմենկո, Գլխավոր շտաբը պատերազմի տարիներին, գիրք առաջին, Ե., 1970, էջ 69:

³ Տես "Геноцид армян в Османской империи", сборник документов и материалов, Е., 1982, с. 12.

⁴ Տես «Օգնությունը հայաստանի և պրոպագանդիստին», 1944, հ. 24, էջ 20:

¹ Տես «The New York Times», Nov. 24, 1943, p. 7.

կանգնեց պաշտպանելու համար հայրենիքը¹:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1941 թ. հունիսի 22-ին հրամանագիր ընդունեց ընդհանուր պորահավաքի մասին, համաձայն որի բանակ էին պորակոչվում 1905—1918 թթ. ծնվածները: Այնուհետև բանակ են պորակոչվել 1919—1925 թթ. և նույնիսկ, առանձին դեպքերում՝ 1926 թ. ծնվածները: Այսպիսով, 1941—1945 թթ. բանակ են պորակոչվել 22 տարիքային հասակի պորակոչիկներ²: Սակայն բանակում քիչ չէին նաև ավելի մեծ տարիք ունեցող պիճառայողները (1895—1904 թթ. ծնվածները): Եթե նրանց ավելացնենք 1938, 1939 և 1940 թթ. Հայաստանից բանակ պորակոչվածներին, որոնց թիվը ըստ ՀՀ պինդորական կոմիսարիատի տվյալների կազմել է 28384 մարդ³, ապա մեր հաշվումներով դուրս է գալիս, որ միայն Խորհրդային Հայաստանից պատերազմին մասնակցել է շուրջ 320000 մարդ, որը կազմում էր հանրապետության ամբողջ բնակչության 20-23 %-ը: Համեմատության կարգով նշենք, որ համաձայն նորահայտ վերջին տվյալների ողջ ԽՍՀՄ-ից բանակ է պորակոչվել 34476700 մարդ⁴, որը կազմում էր երկրի բնակչության 18-20 %-ը: Հանրապետությունից պորակոչվածների 87-90 %-ը, այսինքն՝ շուրջ 300 հազար մարդ, կազմում էին հայերը: Եթե այս թվին գումարենք ԽՍՀՄ այլ հանրապետություններից բանակ պորակոչված հայերի թիվը, ապա մեր հաշվումներով ստացվում է, որ պատերազմին ԽՍՀՄ-ից մասնակցել են ավելի քան 500 հազար հայեր: Եթե դրան ավելացնենք նաև արտասահմանյան երկրների բանակ պորակոչված ավելի քան 50 հազար հայերին, ապա պարզվում է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցել են ավելի քան 550 հազար հայեր:

Իր երեքհարյուրամյա պատմության ընթացքում հայ ժողովուրդը թերևս առաջին անգամ էր նման քանակությամբ մարդ պորակոչում բանակ: Ակբընադբյուրներից հայտնի է, որ հայկական ամենամեծ բանակը եղել է Տիգրան 2-րդ թագավորի ժամանակ (95—55 մ. թ. ա.), որը կազմել է շուրջ 300 հազար մարդ, պորթի կեսը եղել են հայեր, մնացածը՝ այլազգիներ⁵: Հայ Արշակունի-

ների թագավորության ժամանակ (1—4-րդ դարեր) հայոց պորթը ըստ Ջորանամակի (Հին Հայաստանի ռազմական ուժերի քանակի և դասակարգման մասին պետական փաստաթուղթ, հրովարտակ) կազմել է 124 հազար մարդ, որից 84 հազարը՝ հեծելազորում (այրուձի)⁶: Բագրատունիների հայկական թագավորության ժամանակ (9—11-րդ դարեր) հայոց պորթը բաղկացած էր 80 հազար⁷, իսկ Կիլիկիայի հայկական պետության (11—14-րդ դարեր) բանակը՝ 60 հազար⁸ հոգուց: Դրանից հետո հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը, Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի, ապա Պարսկաստանի և Թուրքիայի միջև, որի հետևանքով հայերը գրկվեցին գնեք կրելու իրավունքից:

Միայն 19-րդ դարի սկզբներին Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո հայ ժողովրդի մի հատվածը ոչ միայն փրկվեց ֆիզիկական ոչնչացումից, այլև կրկին իրավունք ստացավ բանակ պորակոչվելու և, որպես դրա արդյունք, նաև գնեք կրելու: Հայ ժողովրդի զավակները իրենց սխրանքներով աչքի ընկան ինչպես 1812 թ. Հայրենական, այնպես էլ հետագա բոլոր ռուս-թուրքական և այլ պատերազմներում: 19-րդ դարի ռուսական բանակում կային 20-ից ավելի հայազգի գեներալներ (գեներալ-լեյտենանտներ Վ. Գ. Մադաթով, Ա. Հ. Տեր-Ղուկասով, Մ. Տ. Լոռիս-Մելիքով, գեներալ-մայորներ Վ. Բ. Բեյբութով, Բ. Մ. Շելկովնիկով, ծովակալ Լ. Մ. Սերբոբյակով (Արծաթագործյան) և ուրիշներ), որոնք իրենց արժանի ավանդը ներդրեցին ռուսական բանակի տարած հաղթանակներում, նպաստեցին ռուսական գնեքի փառքի տարածմանը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսական կայսրության մեջ բնակվող 2 միլիոն 54 հազար հայերը ցարական բանակին տվեցին մոտ 250 հազար պինդոր: Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի բանակներ պորակոչված հայ մարտիկների թիվը անցնում էր 50 հազարից⁹:

1918 թ. մայիսի 28-ին, երբ վերականգնվեց հայոց պետականությունը, Հայաստանի Հանրապետությունը ստեղծեց նաև իր բանակը, որը 1918, 1919 և 1920 թթ. իր շարքերում ուներ համապատասխանաբար 16000, 18000 և 40000 մարդ¹⁰:

¹ "Правда", 25 августа 1941 г.

² Յուրաբանյուր պորակոչային տարիքում միջին հաշվով կար 13000 մարդ (տես ՀՀ ՀՔԳՊ ՊԿԱ, ֆ. 1, ց. 31, գ. 306, թթ. 250, 297):

³ Տես Մ. Գ. Սահակյան, Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում, Ե., 1981, էջ 22:

⁴ Տես "Гриф секретности снят. Потери вооруженных сил СССР в войнах, боевых действиях и военных конфликтах", М., 1993, с. 139.

⁵ Տես Հ. Սանատրյան, Տիգրան Երկրորդը և Հոմեր, Ե., 1940, էջ 116 - 119:

⁶ Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ.3, Ե., 1977, էջ 704:

⁷ Տես Սատթոնու Որոհայեցի, Ժամանակագրություն, Վարդապատ, 1898, էջ 17, Թովմա Արծրունի, Պատմություն տանն Արծրունյաց, Տիֆլիս, 1917, էջ 382:

⁸ Տես Տմբա Տարաթեմ. Տյւթեբնիկ, Ե., 1958, с. 82.

⁹ Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Ե., 1981, էջ 547:

¹⁰ Տես Կ. Ա. Հարությունյան, Հայկական ազգային պորակոչվորումները 1918—1945 թթ., պատմական գիտությունների

Եթե Առաջին համաշխարհային պատերազմին հայերի մասնակցության պոպուլյար ակտիվությունը բացատրվում էր Արևմտահայաստանը թուրքական լծից ազատագրելու նպատակով, ապա Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմին վանգվածաբար մասնակցելը մեր կարծիքով ոչ միայն նորաստեղծ հայրենիքի և արտասահմանյան երկրների (որտեղ նրանք ապաստան էին գտել՝ թուրքական կոտորածներից փրկվելով) օրինավոր քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների դրսևորում էր, այլև, հավանական է, որ դա 1915 թ. Մեծ եղեռնը հովանավորած Գերմանիայի վրեժխնդիր լինելու ազգային բարձր ինքնագիտակցության պոռթկում էր:

Պատերազմին հայ ժողովրդի մասնակցության բարձր ակտիվությունը դրսևորվեց ոչ միայն բանակին ավելի քան կես միլիոն վիճվոր տալով, այլև տարբեր պորտեսակների կազմում բոլոր նշանակալից ճակատամարտերում, պաշտպանական և հարձակողական գործողությունների ժամանակ հայ ռազմիկների ցուցաբերած հերոսությամբ, կրտսեր, միջին, ավագ և բարձր հրամանատարական կազմում ունեցած հայերի բարձր տեսակարար կշռով:

Ըստ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կադրերի գլխավոր վարչության կազմած տեղեկատու նյութերի, որոնք պահվում են այդ նախարարության կենտրոնական արխիվում (քաղաք Պոդոլսկ), Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայերից մեկը՝ Իվան Քրիստափորի Բաղրամյանը, եղել է ռազմաճակատի (1-ին Մերձբալթյան և 3-րդ Բելոռուսական, 1944—1945 թթ.), երեքը՝ բանակի (Ի. Ք. Բաղրամյանը՝ 16-րդ, 11-րդ գվարդիական, Ս. Ա. Խուդյակով-Սանֆերյանը՝ 1-ին և 12-րդ օդային, Ս. Ա. Պարսեղովը՝ 40-րդ բանակների), հինգը՝ կորպուսի (Ս. Ա. Մարտիրոսյանը՝ 50-րդ և 73-րդ, Հ. Հ. Մարտիրոսյանը՝ 90-րդ, Բ. Ի. Առուշանյանը՝ 14-րդ և 11-րդ գվարդիական հրաձգային, Վ. Ս. Տամրուչին (Դամուրչյանը)՝ 22-րդ մեքենայացված, Հ. Խ. Բաբաջանյանը՝ 11-րդ գվարդիական տանկային կորպուսների), քսաներկուսը՝ դիվիզիայի հրամանատար, երկուսը՝ ռազմաճակատի քաղվարչության պետ (Ս. Ֆ. Գալաշը՝ 1-ին Բելոռուսական, Ս. Գ. Կապրինսկը՝ 3-րդ Բելոռուսական ռազմաճակատների), մեկը՝ ռազմաճակատի հրետանու հրամանատար (Ս. Ա. Պարսեղով՝ Հարավ-արևմտյան և 2-րդ Հեռավորարևելյան ռազմաճակատների) և այլն: Պատերազմի տարիներին ԽՍՀՄ ռազմածովային նավա-

դրկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 1994, էջ 20:

տորմի գլխավոր հրամանատարի 1-ին տեղակալն է եղել ծովակալ Ի. Ս. Իսակովը, իսկ հրետանու գեներալ-լեյտենանտ Ի. Գ. Վեքիլովը եղել է Հարավ-արևմտյան ուղղության պորքերի հրետանու հրամանատարի տեղակալ, ապա Կարմիր բանակի հրետանու շտաբի պետի տեղակալ¹:

Վերոհիշյալ արխիվում ավելի քան 25 տարի մեր կատարած ուսումնասիրություններից պարզվել է, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայերից 25 հոգի եղել է բրիգադի, իսկ շուրջ 100-ը՝ գնդի հրամանատար: 1945 թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով պատերազմին մասնակցել է 60 հայ գեներալ, որոնցից մեկը՝ բանակի գեներալ (Ի. Ք. Բաղրամյան), մեկը՝ ավիացիայի մարշալ (Ս. Ա. Խուդյակով-Սանֆերյան), մեկը՝ նավատորմի ծովակալ (Ի. Ս. Իսակով): Այդ թիվը համեմատաբար ավելի մեծ կլիներ, եթե 1937—1940 թթ. ստալինյան բռնաճնշումներին զոհ չգնային Կարմիր բանակի հայ պորապետներ՝ կորհրամներ Հայկ Դմիտրիի Բժշկյանը (Գայը), Գրիգոր Դավթի Սախանյանը, Գասպար Կարապետի Ոսկանյանը, Անդրեյ Պավելի Մելիք-Շահնապարովը, 1-ին կարգի բանակային կոմիսար Հայկ Ալեքսանի Հովսեփյանը, 2-րդ կարգի բանակային կոմիսար Օսիկ Արզումանի Սահակյանը, դիվիզիայի կոմիսարներ Գեվորգ Սադաթի Սաֆրապեհկյանը, Իվան Աբգարի Վարդանովը, Խորեն Հարությունի Աբրահամյանը և ուրիշներ²: Հետպատերազմյան տարիներին հայ գեներալների թիվը մեր հաշվումներով անցել է 130-ից: Այդ տարիներին փոխ-ծովակալի կոչում է շնորհվել նաև պատերազմի մասնակցի 4, իսկ դեր-ծովակալի կոչում՝ 5 հայորդիների: Պատերազմի մասնակցներից բանակի գեներալ Ի. Ք. Բաղրամյանին 1955 թ. շնորհվել է Խորհրդային Միության մաիշալի կոչում: Նույն թվականին Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում է շնորհվել Ի. Ս. Իսակովին: 1975 թ. պրահատանկային պորքերի գլխավոր մարշալի կոչում է շնորհվել Հ. Խ. Բաբաջանյանին: Ավելի վաղ՝ 1944 թ. ավիացիայի մարշալի կոչում էր շնորհվել Ս. Ա. Խուդյակով-Սանֆերյանին³:

¹ Տես ԼՃԱՄՕ ՐՓ, Ինվ. N 6404, Список командиров СД; Ինվ. N 7395, Справочник на командиров; Ինվ. N 7175, Командующие обще-войсковыми, танковыми и воздушными армиями; Ինվ. N 211, Командование направлений и фронтов в 1941—1945 гг.

² Տես Ս. Մալխասյան, Սովետական բանակի հայ գործիչները, Ե., 1963, էջ 54—163 (հետագայում բռնաճնշումների ենթարկվածները բոլորն էլ արդարացվել են):

³ Տես "Советская военная энциклопедия", т. 8, М., 1980, с. 398; "Военный энциклопедический словарь", М., 1984, с. 798.

Հետաքրքիր է, որ դեռևս 1943 թ. Կարմիր բանակի գլխավոր քաղվարչության կողմից կազմված՝ «ԽՍՀՄ ժողովուրդները Հայրենական մեծ պատերազմում» տեղեկատուում նշված է, որ գնեքարալների թվով ռուսներից հետո գալիս էին ուկրաինացիները, բելոռուսները, ապա՝ հայերը: Ավիացիոն զորքերի սպայական կազմի մեջ ռուսներից, ուկրաինացիներից և բելոռուսներից հետո տեղ էին վրադեցնում հայերը՝ 1079 ավիացիոն հրամանատար, թաթարները՝ 1041, վրացիները՝ 800, չուվաշները՝ 400 և այլն: Կարմիր բանակի հրետանու բարձր և ավագ հրամանատարների մեջ բացարձակ թվերով, ըստ կարգի, ռուսներից հետո տեղ էին գրավում ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, թաթարները, վրացիները, մորդվանները, մոլդավները, դալախները, բաշկիրները և այլն: Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան ավարտած սաների մեջ, որոնք ներկայացնում են 42 ազգեր, ըստ թվի առջևում էին ռուսները, ապա՝ ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, վրացիները և այլն¹:

Ավելի ամբողջական և հետաքրքիր փաստեր է պարունակում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կադրերի գլխավոր վարչության պարզևատրաման բաժնի 1947 թ. նոյեմբերի 1-ի տեղեկատուում՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ջրանշաններով ու մեդալներով («Միության համար» և «Մարտական ծառայությունների համար») պարգևատրվածների մասին. հայեր՝ 66802 մարդ, վրացիներ՝ 49106, ադրբեջանցիներ՝ 36180 հոգի և այլն²:

Խորհրդային Միության հերոսների թվով ևս հայերը գրավում են առաջնակարգ տեղ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 103 հայի, որոնցից 4-ին՝ 1939—1940 թթ. խորհրդա-ֆիննական պատերազմում աչքի ընկնելու համար: Երկրորդ համաշխարհային պատերազմում առաջին հերոսը տանկիստ, շարքային Կարապետ Միմոնի Միմոնյանն էր (15.1.1940): Խորհրդային Միության մարշալ Ի. Բ. Բաղրամյանին և 47-րդ գրոհային ավիացնդի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի: Հետպատերազմյան տարիներին ունեցած աչքի ընկնող ծառայությունների համար Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել ևս 4 հայի: Այսպիսով 1940—1991 թթ.

այդ բարձր կոչմանն են արժանացել 107 հայեր³: Ի դեպ, 1995 թ. փետրվարին Ռուսաստանի Դաշնության ազգային հերոսի կոչում է շնորհվել տանկիստ Սուրեն Համբարձումի Տաշինին⁴: Համեմատության համար նշենք, որ Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել 91 վրացի, 43 ադրբեջանցի և այլն: Նրանցից ոչ մեկին այդ կոչումը կրկնակի չի շնորհվել⁵:

Պատերազմի տարիներին կատարած սխրանքների համար 27 հայ ռազմիկ, պարզևատրվելով Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանի ջրանշաններով, դարձել են զինվորական փառքի այդ պատվավոր ջրանշանի լրիվ ասպետներ, որոնց իրավունքներն ու արտոնությունները ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1967 թ. սեպտեմբերի 6-ի հրամանագրով հավասարեցվել են Խորհրդային Միության հերոսների իրավունքների ու արտոնությունների հետ⁶:

Պատերազմի տարիներին 13 հայրդայիներ արժանացել են սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Ինժեներատեխնիկական ծառայության գնեքարալ-գնդապետ Արտեմ Իվանի Միկոյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի⁷: Հետպատերազմյան տարիներին հայրենիքին մատուցած աչքի ընկնող ռազմագիտական ծառայությունների համար սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսներ են դարձել նաև տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր Սամվել Գրիգորի Բոչարյանը⁸, որի հուշարձանը հետմահու կանգնեցված է Արգամա-16 քաղաքում, և ակադեմիկոս Վիկտոր Համազասպի Համբարձումյանը: 1994 թ. հոկտեմբերի 11-ին Վ. Հ. Համբարձումյանին շնորհվել է նաև Հայաստանի ազգային հերոսի կոչում⁹: Նրա առաջարկած ինվարիանտության սկզբունքը, որի հիման վրա մշակվել է պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, օգտագործվել է ռազմական նպատակներով:

Հայ ժողովրդի ավելի քան 67 հազար վավակներ պատերազմին մասնակցել են հայկական պատերազմի «Книга о героях», Е., 1985; «Герои Советского Союза», тт. 1, 2, М., 1987, 1988, և ՌԳ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվների տվյալների հիման վրա:

⁴ Шу "Голос Армении", 25 февраля 1985 г.

⁵ Шу "Герои Советского Союза", М., 1984, с. 245 (ադրբեջանցի հերոսների մեջ կան նաև թալիշներ, թաթեր, քրդեր, եզդիներ, լեռնային հրեաներ և այլն, որոնց ազգությունը չի նշվել):

⁶ Шу "Ордена и медали СССР", М., 1974, с. 252.

⁷ Шу "Советская военная энциклопедия", т. 5, М., 1978, с. 279.

⁸ Шу «Հայաստանի Հանրապետություն», 1993 թ. հոկտեմբերի 26, էջ 3:

⁹ Шу «Հայաստանի Հանրապետություն», 1994 թ. հոկտեմբերի 12, էջ 1:

¹ Шу ЦАМО РФ, ф. 32, 65607, д. 7, лл. 76—94.

² Шу "Красная звезда", 28 марта 1967 г.

³ Հաշվումները կատարված են համապատասխան գրակա-

գային դիվիզիաների շարքերում¹: Գրանից Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը կազմավորվել էր Հայաստանում 1920—1922 թթ., Հայաստանի Հանրապետության բանակի, այսպե՛ս Հայկական Կարմիր բանակի վերակառուցման հետևանքով 1938—1940 թթ. վերակազմավորվել էր ոչ ազգային միավորման, 1941 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 22-ը, համալրվելով Հայկական ԽՍՀ մարդկային և նյութական միջոցներով, կրկին ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը: Դիվիզիայի 16-հազարանոց անձնակազմից շուրջ 14 հազարը կազմում էին հայերը²: Դիվիզիան աչքի ընկավ հատկապես ստալինգրադյան ճակատամարտում (1942 թ. հուլիսի 17—1943 թ. փետրվարի 2) և վերակազմավորվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի: Այնուհետև գվարդիականներն ակտիվորեն մասնակցեցին Կուրսկի ճակատամարտին (1943 թ. հուլիսի 5—օգոստոսի 23), Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ապստամբանը (1944—1945 թթ.)³: Հայկական 390-րդ հրաձգային դիվիզիան 1942 թ. փետրվար—մայիս ամիսներին Ղրիմի ռազմաճակատի 51-րդ բանակի կազմում մասնակցեց Կերչի ծանր մարտերին, որոնց ընթացքում ապրիլի 2-ին հերոսաբար պոստից դիվիզիայի հրամանատար, գնդապետ Միմոն Գևորգի Չաքիյանը: Նա հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով: Նրա աճյունը տեղափոխվեց Երևան և ապրիլի 5-ին թաղվեց Երևանի Ս. Կիրովի անվան պողոտայում: Այնտեղ կանգնեցվեց նաև հերոս հրամանատարի հուշարձանը⁴:

Հայկական 408-րդ հրաձգային դիվիզիան 1942 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Անդրկովկասյան ռազմաճակատի 47-րդ բանակի կազմում՝ Նովոռոսիյսկ—Տուապսե շրջանում մեծ պոհերի գնով փակեց հակառակորդի ճանապարհը դեպի Անդրկովկաս⁵: Սոփոկի մոտից Կուրբանի, ՈՒկրաինայի, Մոլդովայի տարածքներով դեպի Ռուսինիա, Հուսգարիա, Ավստրիա և Չեխոս-

լովակիա ձգվեց Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին: Դիվիզիային շնորհվեց «Կիրովգրադյան-Բրատիսլավյան» պատվավոր անվանումը, նա պարգևատրվեց նաև Բոգդան Խմելնիկոյու 2-րդ աստիճանի շքանշանով⁶:

Կովկասյան նախալեռներից՝ Գրոպու մատույցներից, Կուրբանի, Թամանի, Կերչի, Ղրիմի վրայով դեպի Լեհաստան և Գերմանիա ձգվեց Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի մարտական ուղին, որն ավարտվեց խորհրդային զորքերի կողմից Բեռլինի գրավմամբ և Էլբայի ափ դուրս գալով: Դիվիզիային շնորհվեց «Թամանյան» պատվավոր անվանումը, նա պարգևատրվեց Կարմիր աստղի, Կարմիր դրոշի և Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշաններով: Նրա 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերին շնորհվեց «Սաստոպոլյան» պատվավոր անվանումը: Դիվիզիայի անձնակազմից 9 հոգի արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ 8-ը դարձան Փառքի շքանշանի լրիվ ասպետ: Խորհրդային Միության հերոսների թվում էին ավագ սերժանտներ Հուսան Մակիչի Ավետիսյանը և Սուրեն Սմբատի Առաքելյանը, որոնք իրենց մարմնով փակեցին հակառակորդի դպօսի հրակետուղ և նպաստեցին մարտական առաջադրանքի կատարմանը⁷:

Պատերազմի տարիներին նման սխրանքներ կատարեցին և մատրոսովականներ դարձան ևս երեք հայորդիներ՝ 15-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 44-րդ գվարդիական հրաձգային գնդի ջոկի հրամանատար, գվարդիայի սերժանտ Ապավեն Վասիլի Ռոստոմյանը⁸, իտալական «Գուլդո Բոսկայա» պարտիզանական բրիգադի պարտիզան Գևորգ Աղաբեկի Քոլոպյանը⁹ և շարքային Ավանես Հովհաննիսյանը¹⁰:

Հայկական 261-րդ հրաձգային դիվիզիան պատերազմի տարիներին մնաց Հայաստանում, պաշտպանում էր Թուրքիայի հետ պետական սահմանը, միաժամանակ երթային վաշտեր ու գումարտակներ էր պատրաստում և ուղարկում ռազմաճակատ¹¹:

Բացի վերոհիշյալ դիվիզիաներից Հայաստանում կազմավորվեցին կամ համալրվեցին 61-րդ,

¹ Shu ЦАМО РФ, ф. Закавказского фронта, оп. 999, д. 53, л. 109; ф. Крымского фронта, оп. 1119, д. 3, лл. 289—294; ф. 45-й армии, оп. 9458, д. 24, лл. 496—504; ф. 261-й СД, оп. 1, д. 1, лл. 7—10; ф. 408-й СД, оп. 1, д. 13, лл. 1—5; ф. 51-го п. СД, оп. 1, д. 2, лл. 1—3.

² Shu ЦАМО РФ, ф. 51-й гв. СД, оп. 1, д. 2, лл. 1—3; А. Н. Гервасиев. Версты мужества, Кишинев, 1976, с. 18—112.

³ Ավելի մանրամասն տես Կ. Ա. Հարությունյան, 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին, Ե., 1980: Դիվիզիան հայկական է համարվել նաև Քորիթային ռազմական հանրագիտարանում (տես «Советская военная энциклопедия», т. 5, М., 1978, с. 553.

⁴ Shu «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3, Ե., 1977, էջ 677—678:

⁵ Ավելի մանրամասն տես Ս. Մ. Սարգսյան, Այրվող անտառ, Ե., 1965, С. М. Саркисян. 408-я Армянская стрелковая дивизия в битве за Кавказ, Е., 1985; Ս. Մ. Հակոբյան, Հերոսական մարտերում, Ե., 1975:

⁶ Shu «Боевой путь 409-й стрелковой Кировоградско-Братиславской ордена Богдана Хмельницкого армянской дивизии (1941—1945 гг.)», сборник документов и материалов, ч. I и II, Е., 1980, 1981 гт.

⁷ Shu «Боевой путь 89-й Армянской Таманской стрелковой орденов Красного знамени, Кутузова 2-й степени, Красной звезды дивизии (1942—1945 гг.)», сборник документов и материалов, Е., 1985.

⁸ Shu «Герой Советского Союза», т. 2, М., 1988, с. 373.

⁹ Shu «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 12, Ե., 1986, էջ 473:

¹⁰ Shu ЦАМО РФ, Справочник—Матросовцы.

¹¹ Shu Ս. Ն. Մապախանյան, Միասնական շարքերում, Ե., 1975, էջ 71:

136-րդ (15-րդ գվարդիական), 138-րդ (70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 320-րդ, 406-րդ հրաձգային դիվիզիաները, մի շարք այլ զորամասեր, որոնց անձնակազմերի մի պզալի մասը հայեր էին: Այսպես, Լենինականում (այժմ Գյումրի) համարված 320-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմը 1942 թ. սեպտեմբերի 16-ի տվյալներով բաղկացած էր 9124 մարդուց, որից հայեր էին 7978-ը (87,5 %)՝: 61-րդ հրաձգային դիվիզիան, որը լրակազմվել էր Երևանում, 1941 թ. դեկտեմբերին, 70 %-ով համարված էր հայ ռազմիկներով, որի համար հաճախ այս միավորումը համարվել է հայկական²: Հայկական բոլոր դիվիզիաներում և այն միավորումներում ու ռազմաճակատներում, որտեղ հայեր շատ կային, հայերեն լեզվով հրատարակվել են 16 ռազմաճակատային թերթեր:

Հայ ռազմիկները ակտիվորեն մասնակցել են պատերազմի բոլոր շրջանների բոլոր օպերայիաներին:

1941 թ. հունիսի 22-ից մինչև դեկտեմբերի 31-ը տեղի ունեցած ծանր մարտերում կատարված սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց 4 հայորդու: Հայրենական մեծ պատերազմում առաջին հերոսը Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի 38-րդ առանձին ավիագնդի ավիատեխնիկայի կոմիսար, գումարտակային կոմիսար, ջրանշանակիր օդաչու Լապար Սերգեյի Չափշխովն էր, որը 59 օդային մարտում անձամբ ցած էր գցել հակառակորդի 8, իսկ խմբի կազմում՝ 19 ինքնաթիռ³: Մինչ այդ խիպախ օդաչուն 1941 թ. նոյեմբերի 27-ին պարզևատրվել էր Լենինի ջրանշանով⁴: Պատերազմի առաջին օրը՝ 1941 թ. հունիսի 22-ին, ֆաշիստական «Յուսկերս-88» ինքնաթիռ ցած գցեց 8-րդ տանկային դիվիզիայի 8-րդ զենիթահրետանային դիվիզիոնի հրանոթի նշանառու էֆրեյտոր Ավետիս Գալուստի Աղայանը, որի համար նա պարզևատրվեց Կարմիր աստղի ջրանշանով⁵: Հունիսի 22-ին թշնամու գերազանց ուժերը հետ մղելիս հերոսաբար զոհվեց 6-րդ հեծյալ դիվիզիայի 94-րդ հեծյալ գնդի հրամանատար փոխգնդապետ Նիկոլայ Գրիգորի Պետրոսյանը, որը մինչ այդ աչքի էր ընկել Հեռավոր Արևելքում ճապոնական սամուրայների դեմ մղված մարտերում և պարզևատրվել Լենինի, Կարմիր դրոշի և Կարմիր աստղի ջրանշաններով, «ԲԳԿԲ 20 տարին» մեդալով⁶: Հունիսի 24-ին իր

արվող ինքնաթիռը գիտակցաբար թշնամու տանկային շարասյան մեջ մխրճեց 31-րդ խորհրդայն ռազմաճակատի ավիագնդի Էսկադրիլիայի հրամանատար, խորհրդա-ֆիննական պատերազմում Կարմիր դրոշի ջրանշանի արժանացած ավագ քաղնկ Սարգիս Միքայելի Հայրապետովը⁷: Կապիտան Նիկոլայ Գաստելոն նման սխրանք կատարեց երկու օր անց՝ հունիսի 26-ին: Հետագայում այդպիսի անձնակազմի հերոսական սխրանք կատարեցին լեգենդար օդաչու, կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը, օդաչուներ Արտյուշ Օհանջանյանը, Էդիկ Բունիաթյանը, Աշոտ Անտոնյանը և Պատրիկ Գալապյանը: Ֆիննական ծոցում անմահ սխրանք կատարեց ականորս նավերի բրիգադի 3-րդ դիվիզիոնի գրահանավակների օդակի հրամանատար լեյտենանտ Վահան Մեմյոնի Ալոպովը՝ իր կյանքի գնով փրկելով 14 ականորս նավեր անխուսափելի կործանումից: Խիպախ ծովայինը հետմահու պարզևատրվեց Կարմիր դրոշի ջրանշանով⁸, իսկ նրա անունը առհավետ գրանցվեց ստորաբաժանման անձնակազմի ցուցակում⁹: Պատերազմի տարիներին հետմահու այսպիսի բարձր պատվի արժանացան նաև Խորհրդային Միության հերոսներ Հունան Մակիչի Ավետիսյանը, Գարեգին Շեգիի Բալայանը, Հրանտ Առաքելի Օհանյանը, Սերգեյ Անդրանիկի Օգանովը և Լենինի ջրանշանակիր սակրավոր Մեսրոպ Միմոնի Ղազարյանը¹⁰: 1941 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 20-ը Բրեստի անմահ կայսերի շարքերում մարտնչեցին 200 հայ քաջորդիներ, որոնց կեսից ավելին զորակոչվել էին Ղափանի շրջանից:

Պատերազմի առաջին օրերին Հարավարևմտյան և Հարավային ռազմաճակատներում կատարված սխրանքների համար 6 հայորդիներ պարզևատրվեցին Լենինի ջրանշանով: Նրանց թվում էր 30-րդ հրաձգային դիվիզիայի 59-րդ թեթև հրետանային գնդի 4-րդ ականանետային մարտկոցի հրամանատար լեյտենանտ Քրիստափոր Իվանի Իվանյանը¹¹ (հետագայում հրետանու գեներալ-լեյտենանտ): Խիպախ հրետանավորը Լենինի երկրորդ ջրանշանով պարզևատրվեց 1943 թ. նոյեմբերի 17-ին, 18-րդ բանակի 195-րդ գվարդիական ականանետային գնդի հրամանատար եղած ժամանակ: Հետագա սխրանքների համար նա պարզևատրվեց նաև

¹ Шу ЦАМО РФ, ф. 56, оп. 12214, д. 405, л. 278.

² Шу "Народный подвиг в битве за Кавказ", М., 1981, с. 319.

³ Шу "Герои Советского Союза", т. 2, с. 710.

⁴ Шу ЦАМО РФ, ф. Северо-западного фронта, оп. 1386, д. 65, л. 13 - 14.

⁵ Шу ЦАМО РФ, ф. 33, оп. 682524, д. 475, л. 207.

⁶ Шу նույն տեղում, Личное дело подполковника Н. Г. Петросяна, N 229094.

⁷ Шу Г. Холопов. Первый Гастелло, "Во славу Родины", 27 февраля 1942 г.

⁸ Шу ЦВМА, ф. 88, оп. 2, д. 173, л. 52.

⁹ Шу "Навечно в строю" (альбом), вып. I, М., 1971, с. 56.

¹⁰ Տվյալները վերցված են ՌԳ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի գիտատեղեկատու գրադարանի հատուկ տեղեկատու գրքից:

¹¹ Шу ЦАМО РФ, ф. 33, оп. 682524, д. 523, л. 65.

Կարմիր դրոշի, Սուվորովի 3-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով¹:

Հայրենական մեծ պատերազմում առաջին խոշոր ճակատամարտը, որտեղ ջախջախիչ պարտություն կրեց մինչ այդ անպարտելի համարվող գերմանաֆաշիստական բանակը, Մոսկվայի ճակատամարտն էր, որը տեղի ունեցավ 1941 թ. սեպտեմբերի 30-ից մինչև 1942 թ. ապրիլի 24-ը:

Մոսկվայի մոտ տարած հաղթանակը Հայրենական մեծ պատերազմի առաջին տարվա ռազ-



Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյան, գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս, ազատագրված Կիևի առաջին պարեն
Саргис Согомонович Мартиросян, генерал-лейтенант, герой Советского Союза, первый комендант освобожденного Киева

մաքաղաքական վճռական իրադարձությունն էր, — իր հուշերում նշել է այդ ճակատամարտի ակտիվ մասնակից, Խորհրդային Միության մարշալ, կրկնակի հերոս Ի. Բ. Բաղրամյանը: — Դժվար է գերազնահատել նրա հետևանքները պատերազմի հետագա ընթացքի վրա: Վերջնականապես տապալվեց կայծակնային պատերազմի հիտլերյան պլանը, պատկապերձ եղավ հիտլերյան բանակի անհաղթելիության մասին եղած կեղծ առասպելը: Աշխարհի ժողովուրդներն առաջին

¹ Այժմ էլ քաջարի վորապետը շարքում է և իր հարուստ մարտական փորձն է հաղորդում Հայկական բանակի երիտասարդ ազատամարտիկներին: Հայրենականում ստացած նրա մարտական պարգևներին 1944 թ. դեկտեմբերին ավելացավ ևս մեկը՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մարտական խաչ 1-ին աստիճանի շքանշանը (տես «Արցախ» (օրացույց), Ե., 1994, էջ 102):

անգամ հավատացին ագրեսորին սանձելու հնարավորությանը²:

Այդ ճակատամարտում տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև հայ ժողովրդի զավակները: Գեներալ-մայոր Ի. Բ. Բաղրամյանը Հարավ-արևմտյան ռազմաճակատի աջթևյան միավորումներից ստեղծված օպերատիվ-շարժական զորախմբի շտաբի պետն էր, նույն ռազմաճակատի հրետանու պետն էր գեներալ-լեյտենանտ (հետագայում գեներալ-գնդապետ), խորհրդա-ֆիննական պատերազմում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած Միքայել Արտեմի Պարսեղովը, նրա տեղակալն էր գնդապետ Իվան Դավթի Վեքիլյանը (հետագայում հրետանու գեներալ-լեյտենանտ), ռազմաճակատի քաղվարչության պետն էր բրիգադային կոմիսար Սերգեյ Թեոդորոսի Գալաջը (հետագայում գեներալ-լեյտենանտ), Արևմտյան ռազմաճակատի 33-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետն էր գնդապետ Ստեփան Իլյայի Կինոսյանը (հետագայում գեներալ-լեյտենանտ, պատերազմի վերջին փուլում եղել է 49-րդ բանակի շտաբի պետ), 340-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարն էր փոխգնդապետ Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը (հետագայում Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ, 1943—1945 թթ.՝ 50-րդ և 73-րդ հրաձգային կորպուսների հրամանատարը), 239-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարն էր գնդապետ Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանը (հետագայում գեներալ-մայոր, պատերազմի վերջին փուլում եղել է 90-րդ հրաձգային կորպուսի հրամանատարը) և շատ ուրիշներ:

Հայ ժողովրդի զավակները ակտիվ մասնակցություն ունեցան նաև Ստալինգրադի, Կովկասի, Կուրսկի ճակատամարտերին, Կերչի և Ղրիմի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լենինգրադի, Մերձբալթիկայի, Մոլդովայի և Անդրբլեռնի ազատագրմանը:

Ստալինգրադի ճակատամարտում Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց 17-րդ օդային բանակի 288-րդ կործանիչ ավիացիոն դիվիզիայի 866-րդ կործանիչ ավիացիոն էսկադրիլիայի հրամանատար ավագ լեյտենանտ Սերգեյ Ավդեյի Բուռնապյանին, որն անձամբ ցած էր գցել թշվամու 22 ինքնաթիռ, երկուսին էլ խփել էր խմբային թռիչքի ժամանակ:

Կովկասի ճակատամարտում հերոսի կոչման արժանացան 5 հայրողիներ՝ 4-րդ օդային բանակի 230-րդ գրոհային ավիադիվիզիայի էսկադր-

² Ի. Բ. Բաղրամյան, Այսպես է սկսվել պատերազմը, Ե., 1975, էջ 677:

³ Шу ЦАМО РФ, ф. 33, оп. 793756, д. 7, лл. 159-160.

րիլիայի հրամանատար, կապիտան Սամսոն Մովսեսի Սկրտումյանը, 159-րդ առանձին հրաձգային բրիգադի 3-րդ առանձին գումարտակի հրամանատար ավագ լեյտենանտ Ղուկաս Կարապետի Մադոյանը, Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի քաջարի պիլոտներ Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը և Ջահան Կարախանյանը (վերջին երեքը՝ հետմահու):

Կուրսկի ճակատամարտում հերոսի կոչում շնորհվեց 11-րդ գվարդիական տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ գնդապետ Գրիգոր Շահումի Կարուստովին և դասակի հրամանատար գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Իոնոսյանին (երկուսին էլ՝ հետմահու):

Կերչի և Ղրիմի համար մղված մարտերում հերոսի կոչում շնորհվեց 10 հայրողիների:

Ուկրաինայի ազատագրման մարտերում իրենց սխրանքներով առավել աչքի ընկած 41 հայերի շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում, նրանցից 18 հոգի այդ բարձր կոչմանն արժանացան Դնեպրը հաղթահարելու համար: Հերոսների թվում էին 20-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի հրամանատար, գվարդիայի գնդապետ Հ. Ն. Բաբաջանյանը, 74-րդ հրաձգային գվարդիայի հրամանատար գեներալ-մայոր Անդրանիկ Աբրահամի Ղազարյանը, 315-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի շարային գծով տեղակալ գնդապետ Ասքանազ Գևորգի Կարապետյանը (հետագայում գեներալ-մայոր), 69-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գնդապետ Լևոն Խնկանուսի Գարբիլյանը և ուրիշներ:

Բելոռուսիայի ազատագրման մարտերում հերոսի կոչման արժանացան 9 հայրողիներ, որոնց թվում 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար բանակի գեներալ Ի. Բ. Բադրամյանը:

Լենինգրադի և Մերձբալթիկայի համար մղված մարտերում հերոսի կոչման արժանացան 5 հայրողիներ, նրանցից 47-րդ գրոհային ավիագնդի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ Ն. Գ. Ստեփանյանին հետմահու շնորհվեց կրկնակի հերոսի կոչում:

Անդրբեռում՝ Պետսամոյի (Պեչենգայի) շրջանում կատարած սխրանքի համար հերոսի կոչման արժանացավ 14-րդ բանակի 7-րդ գվարդիական առանձին տանկային բրիգադի «Տ-34» տանկի հրամանատար, գվարդիայի կրտսեր լեյտենանտ Աշոտ Մինասի Ասրիյանը:

Հայ ժողովրդի զավակներն այնուհետև ակտիվորեն մասնակցեցին ֆաշիստ լծից Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների ժողովուրդների ազատագրման մարտերին, գրո-

հեցին Բեռլինը և Ռայխստագի պատերին գրեցին իրենց անունները: Այս վերջին մարտերում հայ ռազմիկների ցուցաբերած խիստաշունչ մասին է վկայում այն, որ նրանցից 35-ին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում, իսկ 23-ը դարձան Փառքի շքանշանի լրիվ ասպետներ: Բեռլինը գրավողների առաջին շարքերում էին՝ 11-րդ գվարդիական տանկային կորպուսի հրամանատար, Խորհրդային Միության հերոս, գվարդիայի գնդապետ Հ. Ն. Բաբաջանյանը, որը ներկայացվեց կրկնակի հերոսի կոչման, սակայն պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի շքանշանով (նրան շնորհվեց նաև տանկային փորքերի գեներալ-մայորի կոչում)¹, 35-րդ մեքենայացված բրիգադի հրամանատար, գեներալ-մայոր Հմայակ Գրիգորի Բաբայանը, որին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում², 23-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 66-րդ գվարդիական հրաձգային գնդի ավտոմատավոր, գվարդիայի շարքային Սարիբեկ Սողոմոնի Չիլինգարյանը, որը 1945 թ. ապրիլի 23-ին առաջիններից մեկը հաղթանակի դրոշմ բարձրացրեց Բեռլինի կենտրոնում գտնվող ամենաբարձր շենքի տանիքին՝ արժանանալով հերոսի կոչման³:

Բեռլինի գրավման մարտերում աչքի ընկնելու համար Կուտուկովի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվեց Հայկական 89-րդ Թամանյան Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիան, նրա հրամանատար գեներալ-մայոր Նվեր Գևորգի Սաֆարյանը նույնպես արժանացավ նման պարգևի⁴: Գերմանիայի և Չեխոսլովակիայի տարածքներում մղված մարտերում 73-րդ հրաձգային կորպուսի գործողությունները հմտորեն ղեկավարելու և այդ ընթացքում ցուցաբերած անձնական խիստաշունչ մասնակցության համար Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը (հետագայում գեներալ-լեյտենանտ)⁵:

Ռումինիայի, Հունգարիայի, Ավստրիայի և Չեխոսլովակիայի ազատագրման մարտերին ակտիվ մասնակցություն ունեցավ հայկական 409-րդ հրաձգային Կիրովոգրադյան Բոգդան Խմելնիսկու 2-րդ աստիճանի շքանշանակիր դիվիզիան, որին 1945 թ. ապրիլի 4-ին Սլովակիայի մայրաքաղաքն ազատագրելու համար շնորհվեց «Բրատիսլավյան» պատվավոր անվանումը⁶:

¹ Шу ЦАМО РФ, ф. 33, оп. 793756, д. 4, л. 1.

² Шу նույն տեղում, թ. 38:

³ Шу նույն տեղում, գ. 53, թ. 238:

⁴ Шу ЦАМО РФ, ф. 33, оп. 686046, д. 167, л. 251.

⁵ Шу ЦАМО РФ, ф. 33, оп. 793756, д. 30, л. 92.

⁶ Ավելի մանրամասն տես Կ. Ա. Հարությունյան, Հայ ռազ-

Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադի մատույցներում 1944 թ. հոկտեմբերի 7—8-ը տեղի ունեցած մարտերում հերոսաբար զոհվեց 309-րդ գվարդիական հրաձգային գնդի վաշտի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Արամ Հովակիմի Սաֆարյանը: Ռումինական Ռոման քաղաքից 10 կմ հյուսիս գտնվող Ռոտունդա Աժյուդենի ջրջանում Սերետ գետի հաղթահարման և նրա աջ ափին հենակետ գրավելու մարտերում ընկավ 71-րդ տանկային գնդի վաշտի հրամանատար կապիտան Հրանտ Առաքելի Օհանյանը: Հուլիսից առկա Սոլունկ քաղաքից հյուսիս-արևելք՝ Պետրոկա գյուղի ջրջանում 1944 թ. հոկտեմբերի 25—26-ին Տիսա գետն անցնելու և նրա աջ ափին հենակետ գրավելու մարտերում քաջաբար զոհվեց 81-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 233-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատարի շարային գծով տեղակալ, գվարդիայի փոխգնդապետ Թադևոս Արշակի Եղիապարյանը: Երեք հայորդիներն էլ հետմահու արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման¹:

Հայ ժողովրդի վավակները ակտիվ մասնակցություն ունեցան նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի եզրափակիչ մարտական գործողություններին Հեռավոր Արևելքում, որոնց հետևանքով 1945 թ. օգոստոսի 9-ից մինչև սեպտեմբերի 2-ը ջախջախվեց ֆաշիստական Գերմանիայի դաշնակից միլիտարիստական ճապոնիան և ավարտվեց պատերազմը:

Անդրբայկալյան ռազմաճակատի 12-րդ օդային բանակի հրամանատարը ավիացիայի մարշալ Արմենակ Արտեմի Խանփերյանցն էր, իսկ 10-րդ օդային բանակի հրամանատարի տեղակալը՝ ավիացիայի գեներալ-մայոր Գրիգոր Միհրանի Տոլմաջյանը, որոնք պարզատրվեցին Կարմիր դրոշի ջբանջանով²: Գիրին, Չանչուն և Խարբին քաղաքներն ազատագրելու համար Սուվորովի 2-րդ աստիճանի ջբանջանի արժանացավ 1-ին Հեռավոր-արևելյան ռազմաճակատի 5-րդ բանակի 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, Խորհրդային Միության հերոս գեներալ-մայոր Անդրանիկ Աբրահամի Ղազարյանը³: Ճապոնական միլիտարիստների ջախջախման մարտերին ակտիվորեն մասնակցեցին 2-րդ Հեռավոր-արևելյան ռազմաճակատի հրետանու հրամանատար, Խորհրդային Միության հերոս գեներալ-գնդապետ Միքայել Արտեմի Պարսեղովը, 6-րդ

գվարդիական տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ, տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Հայկ Ղազարոսի Ռումանյանը, 84-րդ հեծյալ դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Տիմոֆեյ Վլադիմիրի Դեդեկոյյանը, 361-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գնդապետ Առաքել Կարապետի Հովհաննիսյանը (հետագայում գեներալ-մայոր), Սերձովյան բանակի հակաօդային պաշտպանության պետ հրետանու գեներալ-մայոր Գևորգ Բրիտտափորի Չայլախյանը, 39-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու պետ, փոխգնդապետ Գավրիլ Ստեփանի Կամոնը (հետագայում հրետանու գեներալ-մայոր), 213-րդ բանակային թնդանոթահրետանային բրիգադի հրամանատար գնդապետ Ռաֆայել Անտոնի Հայրապետովը, 56-րդ ծանր ակնանենտային բրիգադի հրամանատար գնդապետ Սամվել Միմոնի Հարությունյանը, 72-րդ ծովային հետևակի բրիգադի հրամանատար գնդապետ Բագրատ Սարգսի Միտոյանը և շատ ուրիշներ:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև հայ պարտիզանները: Միայն ՈՒԿրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200 հայ պարտիզաններ: ՈՒԿրաինայում լեգենդար Կովպակի պարտիզանական միավորման կազմում մարտնչել է «Հաղթանակ» ջոկատը՝ Սերգեյ Հարությունյանյի, գեներալ Նաումովի միավորման կազմում՝ 250 հոգուց բաղկացած Ա. Ի. Միկոյանի անվան ջոկատը՝ Արամայիս Հովսեփյանի, Ֆրանսիայում 1200 նախկին ռազմագերիներից կազմված հայկական պարտիզանական առաջին գունդը՝ Ալեքսանդր Ղազարյանի, Հունաստանում 1000 հայերից կազմված «Ապատություն» ջոկատը՝ Բաբկեն Ներսիսյանի գլխավորությամբ և այլն⁴:

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց ծանրակշիռ ավանդը ներդրեցին նաև սփյուռքահայերը: Պատերազմի տարիներին նրանց ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիքը և համախմբվեց ազգային ճակատի կազմակերպությունների մեջ՝ նյութական ու բարոյական օգնություն ցուցաբերելով

⁴ Հայ պարտիզանների մասին մանրամասն տես՝ Ե. Մ. Խաչեյան, Հայ ժողովրդի վավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, Ե., 1975, *նույնի*, Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից, Ե., 1981, *նույնի*, Թշնամու թիկունքում, Ե., 1990, Վ. Ն. Ղազարխեյան, Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, Ե., 1955, Մ. Գ. Մահալյան, Սովետական ռազմիկների մարտական եղբայրությունը Լենինգրադի համար մղված մարտերում, Ե., 1986 և այլն:

միկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում (1944—1945 թթ.), Ե., 1983, էջ 96:

¹ Տես «Книга о Героях», Ե., 1985, ց. 142—143, 151—152, 159—160.

² Տես ЦАМО РФ, ф. 33, оп. 686196, л. 7745 л. 156.

³ Տես նույն տեղում, գ. 7745, թ. 68:



«Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ռազմիկները մարտում
 Бойцы танковой колонны "Давид Сасунский" в бою

մարտնչող հայրենիքին: Սփյուռքահայերի հանգանակած միջոցներով կառուցվեց «Սասունցի Դավիթ» առաջին տանկային շարասյունը, որը 1944 թ. փետրվարին մարտերի մեջ մտավ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի (որի հրամանատարն էր գեներալ Բաղրամյանը) 119-րդ առանձին տանկային գնդի կազմում: Իրանահայերի հանգանակած միջոցներով կառուցվեց «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը: Հազարավոր սփյուռքահայեր ֆաշիզմի դեմ պայքարում էին նաև Վենքը ձեռքներին արիությամբ կատարելով իրենց քաղաքացիական պարտքը այն երկրների բանակների կազմում, որտեղ ապաստան էին գտել 1915 թ. եղեռնից հետո: Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչել են շուրջ 20000 հայեր: Լեյտենանտ Երվանդ Դերվիշյանը արժանացավ ամերիկյան բարձրագույն պարգևին՝ «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանին, որով պատերազմի տարիներին ԱՄՆ-ի բանակում պարգևատրվել են ընդամենը 87 մարդ¹: Ամերիկյան բանակի գեներալներ դարձան Ջորջ Մարտիկյանը և Հայկ Շեքերջյանը:

Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի բանակներում կային շուրջ 30 հազար հայեր, որոնք զորակոչվել էին Եգիպտոսից, Միրիայից, Լիբանանից և այլ երկրներից: Մի քանի հազար սփյուռքահայեր ընդգրկված էին դիմադրական-պարտիզանական պայքարի մեջ: Իր անմար սխրանքով Ֆրանսիայում

¹ Տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 8, Ե., 1970, էջ 160:

հռչակվեց բանաստեղծ Միսաք Մանուշյանը:

Ավելի քան 300 հայորդիներ ընկան Հունաստանի պարտիզանական կռիվներում: Ամբողջ Բուլղարիայով մեկ թնդայ հերոսուհի պարտիզան Սաշկայի (Հերմինե Ռազգրադյան) անունը, որին ֆաշիստները մատնությամբ բռնեցին և տանջամահ արեցին: Հարավսլավիայում պարտիզանների մեջ հռչակված հերոսներից էր Վարդուշ Սուքիասիչը (Սուքիասյան), Չեխոսլովակիայում՝ Արտյոմ Պետրոսյանը, Հոլանդիայում՝ Հմայակ Բաղալյանը և ուրիշներ:

Սփյուռքահայության միայն մի չնչին մասը չմիացավ ազգային ճակատի առաջադեմ ուժերին: Այդպիսիները 1942 թ. դեկտեմբերին Բեռլինում ստեղծեցին «Հայ ազգային խորհուրդը» Արտաշես Արեղյանի նախագահությամբ և սկսեցին օգնել գերմանական հրամանատարությանը՝ հայ ռազմագերիներից նրա ստեղծած Հայկական լեգեոնի գումարտակներ հավաքագրելու գործում (պատերազմի տարիներին գերմանական բանակի կազմում ստեղծվել էին նաև վրացական, ադրբեջանական, Կովկասի լեռնականներից բաղկացած լեգեոններ, ստեղծվել էր նաև Թուրքեստանյան լեգեոնը, որը համալրված էր դապիս, ուլբեկ, թուրքմեն, կիրգիզ և տաշկի ռազմագերիներով, ավելի քան 300-հազարանոց ռուսական «պատագրական» բանակ էր ստեղծել ռուս ռազմագերիներից գեներալ Վլասովը): Սակայն գերմանաֆաշիստական հրամանատարությունը չկարողացավ Հայկական լեգեոնը

օգտագործել իր նպատակների համար: Հայ լեզեոնականների մեծ մասը թշնամաբար էր տրամադրված հիտլերյան Գերմանիայի նկատմամբ, և երբ առաջին գումարտակները ուղարկվեցին Արևելյան ռազմաճակատ, նրանց մեծ մասը, հարմար պահ գտնելով, անցավ պարտիզանների կողմը: Այսպես ստեղծվեց Ա. Ի. Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը ՈՒկրաինայում: Հետագայում, երբ ֆաշիստները այդ գումարտակներն ուղարկեցին Բաղկաններ և Ֆրանսիա, այնտեղ ևս հայ լեզեոնականները միացան այդ երկրների պարտիզաններին՝ ստեղծելով 1-ին պարտիզանական գունդը Ֆրանսիայում, «Ապստոթյուն» ջոկատը Հունաստանում և այլն: Մի խոսքով, Հայկական լեզեոնի ստորաբաժանումները ոչ միայն չծառայեցին ֆաշիստական վերմախտին, այլև դարձան ուկրաինական և բելոռուսական պարտիզանական միավորումների, ֆրանսիական, հունական, հոլանդական դիմադրական շարժման ջոկատների համալրման յուրահատուկ աղբյուր¹:

Սակայն հետպատերազմական առաջին տարիներին բավարժիվ հայ լեզեոնականներ, ովքեր ավելորդ են մարտնչել էին ֆաշիզմի դեմ, ստալինյան վարչապետության ասպարատի կողմից ենթարկվեցին անհիմն բռնաճնշումների՝ որպես հայրենիքի դավաճաններ (քանի որ Ստալինը գտնում էր, որ բոլոր ռազմագերիները, անկախ այն բանից, թե նրանք ինչ պայմաններում են գերվել, դավաճաններ են), քստրվեցին Ալթայի երկրամաս կամ Սիբիր: Նրանցից շատերը չլիմայան անարդարացի հալածանքներին, վիրավորանքին ու բռնություններին և իրենց մահկանացուն կնքեցին քստրավայրերում: Միայն Ստալինի մահից հետո, Ն. Ս. Խրուշչովի օրոք լեզեոնականներն արդարացվեցին:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը: Չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին ու վրկանքներին, ռազմաճակատից ստացվող հարապատների մահվան բոթը գուժող «սև թղթերին» Հայաստանի աշխատավորության հերոսական ջանքերի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում շահագործման հանձնվեց 30 նոր արդյունաբերական ձեռնարկություն, որոնց թվում ավիացիոն, կոմպրեսորների, ժամացույցների, շարժիչավերանորոգման, ավտոդողերի և այլն: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակների արտադրությունը, այդ թվում 10 տեսակի վիճակագրի, ականանետների, ականների, նռնակ-

ների, ավիառումբերի կորպուսների, ինքնաթիռների, ռեպինատեխնիկական իրերի, կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, հեղուկ քլորի, քրոմի անհիդրիդի, քլորոֆորմի արտադրությունը և այլն²:

1942 թ. հոկտեմբերից Երևանի հ. 447 գործարանը (այժմ՝ Հայէլեկտրամեքենաշինական) ըսկըսեց վերանորոգել վնասված ինքնաթիռներ: Այնուհետև գործարանը սկսեց արտադրել «ՅԱ-93» կործանիչ ինքնաթիռի թևեր ու շասսի, որոնք ուղարկվում էին Թբիլիսի, որտեղ և հավաքվում էր վերջնական արտադրանքը: Պատերազմի վերջին շրջանում գործարանը սկսեց արտադրել «ՈՒՏ-2Ս» ինքնաթիռներ, որոնք տեղում փորձարկվելուց հետո ուղարկվում էին ռազմաճակատ³:

Գյուղատնտեսության աշխատավորների ջանքերով ամբողջ պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալի չափով ավելացան: Դեռ ավելին. գյուղատնտեսական ավանդական կուլտուրաների հետ մեկտեղ սկսեցին արտադրվել մեծ քանակությամբ նոր տեխնիկական կուլտուրաներ՝ ծխախոտ, ճակնդեղ, ինչպես նաև երկրորդ հայրը՝ կարտոֆիլ: Մեծ չափով ավելացան հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները, ինչը հնարավորություն տվեց հացի ներմուծումը հասցնելու նվազագույն չափերի: Աշխատավորների խնայողությունների հաշվին կառույվեցին «Հայաստանի կոլտնտեսական», «Զանգեզուրի լեռնագործ» տանկային շարայուները, «Մովետական Հայաստան» վրահագնացքը, «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» և «Մովետական Հայաստան» ավիատեխնիկաները և այլն:

Այսպիսով, պատերազմի առաջին իսկ օրերից սկսած մինչև նրա հաղթական ավարտը Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում կանայք, տարեցներն ու դպրոցականները, պատերազմի հաջմանդամները, հանրապետությունը վերածվեց իսկական ռազմական ճամբարի, խորհրդային բանակի մարտական վինաւոցի, որտեղից, «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով, ամեն օր տասնյակ գնացքակազմերով ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն⁴:

² Տես Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊԳԱ), ֆ. 113, ց. 33, գ. 5, թ. 3-34:

³ Տես ՀՀ ՆՊԳԱ, ֆ. 313, ց. 1, գ. 8, թ. 104:

⁴ Տես «Советская Армения в годы Великой Отечест-

¹ Տես Գ. Ա. Հարությունյան, Հայկական լեզեոնը, «Գարուն» ամսագիր, 1994, հ. 7, էջ 68-70:

Ռազմաճակատում մարտնչող հայ ռազմիկները մարտերի ամենածանր պահերին և ամենուրեք մշտապես պզուց էին թիկունքի աշխատավորության աջակցությունը, ստանում էին նրանց ինչպես կյուրակալան, այնպես էլ բարոյական օգնությունը, ինչն ավելի էր պարտավորեցնում նրանց պատվով կատարելու հայրենիքի պաշտպանության սրբապան պարտքը: Այս առումով հիշատակության է արժանի հայ ժողովրդի հայրենասիրական նամակ-կոչը ռազմաճակատում մարտնչող իր պավակներին, որի տակ ստորագրել էին 335316 մարդ¹: Այն վառ կերպով արտահայտում էր հայ ժողովրդի ջերմ հայրենասիրությունը, հիշեցնում նրա մարտական հարուստ ավանդույթների մասին, կոչ էր անում հայ ռազմիկներին տուն վերադառնալ միայն հաղթանակով: Նամակը 1943 թ. փետրվարին հրատարակվեց առանձին գրքույկով, բազմահապարտապքանակով, հայերեն և ռուսերեն լեզուներով և տարածվեց բոլոր ռազմաճակատներում: Այն հրապարակվեց նաև «Պրավդա», «Իվկեստիա», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Կրասնայա պվեդա» և բազմաթիվ այլ կենտրոնական, հանրապետական ու ռազմաճակատային թերթերում: Նամակը լայն արձագանք գտավ հայ ռազմիկների շրջանում, որոնք երդվեցին, որ «սուրը պատյան չեն դնի, մինչև չհասնեն լիակատար հաղթության»²:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում պզալի ավանդ ներդրեցին նաև ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում, ռազմական արդյունաբերության և տնտեսության տարբեր ճյուղերում աշխատող հայ պետական գործիչները, գիտնականները, կոնստրուկտորները և այլն: Բավական է թվարկել միայն նրանցից մի քանիսի անուններն ու վարած պաշտոնները, և ավելի պարզ կդառնա մեր ասածը: Անաստաս Իվանի Միկոյան. 1941 թ. հունիսի 30-ից մինչև 1945 թ. սեպտեմբերի 4-ը եղել է Պաշտպանության պետական կոմիտեի անդամ, 7 հոգույ բաղկացած, արտակարգ լիազորություններով օժտված այս պետական բարձրագույն մարմնի ձեռքում էր կենտրոնացված ԽՍՀՄ ողջ իշխանությունը: Իվան Թևատրոսի Թևոյան. 1940—1948 թթ. եղել է սև մետալուրգիայի ժողկոմ և նախարար: Արտեմ Իվանի Միկոյան. 1940—1978 թթ. եղել է ՄիԳ կործանիչ ինքնաթիռների ստեղծման կոնստրուկտորական բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր: Համո Սերգեյի Յոլյան. 1940—1954 թթ. եղել է հ. 92 հրետանային

венной войны (1941—1945)", сборник документов и материалов, Е., 1975, с. 55—388.

¹ Տես «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր պավակներին», Ե., 1943:

² Տես «Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին», Ե., 1944:

գործարանի տնօրեն: Ստեփան Հակոբի Ակոպով. եղել է ԽՍՀՄ միջին մեքենաշինության ժողկոմ և նախարար: Սուրեն Իվանի Աղաջանով. 1941—1945 թթ. եղել է հ. 21 ավիագործարանի տնօրեն: Հարություն Սկրաչի Տեր-Մարգարյան. 1941—1945 թթ. եղել է Նովոսիբիրսկի ավիացիոն գործարանի գլխավոր ճարտարագետ: Պարույր Հաբեթանկի Պետրոսյան. 1941—1971 թթ. եղել է Մտալինգրադի «Կրասնի Օկտյաբր» մետաղամշակման գործարանի տնօրեն: Բագրատ Նիկոլայի Հարությունով. 1939—1946 թթ. եղել է ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների ժողկոմի առաջին տեղակալ: Լևոն Աբգարի Օրբելի. բժշկական ծառայության գեներալ-գնդապետ, ակադեմիկոս, 1925—1950 թթ. եղել է Ս. Ս. Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիայի ֆիզիոլոգիայի ամբիոնի պետ, 1943—1950 թթ.՝ նույն ակադեմիայի պետ: Նրա եղբայրը՝ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, 1934—1951 թթ. եղել է Լենինգրադի պետական Էրմիտաժի տնօրեն, պատերազմի սկզբին կազմակերպել Էրմիտաժի գեղարվեստական արժեքների փոխադրումը Սվերդլովսկ, 1943 թ. նոյեմբերին ընտրվել է ՀԽՍՀ նորաստեղծ գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, 1944 թ. հունիսին վերադարձել է Լենինգրադ և դեկավարել Էրմիտաժի վերանորոգման աշխատանքները, 1946 թ. մասնակցել է Նյուդընբերգի դատավարությանը որպես մեղադրության վկա՝ երկայնելով ֆաշիստական բարբարոսների հանցագործությունները Լենինգրադի նկատմամբ, և ուրիշներ:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ հայ ժողովուրդը, մեծ պոհողությունների գնով, պզալի ավանդ է ներդրել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմում առաջադեմ մարդկության ղեկավար թշնամի ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում: Հայ ժողովրդի պավակները մարտնչել են բոլոր ռազմաճակատներում և տարբեր պորտեսակների կազմում, ինչպես Խորհրդային Միության, այնպես էլ նրա դաշնակից երկրների բանակների, պարտիզանական և դիմադրական շարժման ջոկատների շարքերում, իրենց ռազմական արվեստով, ունակություններով ու խիզախությամբ բարձր պահել հայ ժողովրդի պատիվը, նոր փառքով հարստացրել նրա մարտական ավանդույթները: Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում ակտիվորեն մասնակցել են նաև թիկունքի աշխատավորները և սփյուռքահայերը՝ դրանով իսկ նպաստելով ոչ միայն դարչնագույն ժանտախտ տարածող հիտլերյան Գերմանիայի ջախջախմանը, այլև հայ ժողովրդի մի նոր եղևոնի կանխմանը:

ՄՍՍԻՆԳՐԱԳԻ ՀԵՐՈՍՄԱՐՏԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿՍԱԳՐՈՒՄ

Գ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Հայրենական մեծ պատերազմը խորհրդային ժողովուրդների համար ծանր փորձություն էր, հերոսական պայքարի փառապանծ մի էջ:

Այն հանգամանքը, որ Խորհրդային Միությունը պատրաստ չէր պատերազմի, ֆաշիստական Գերմանիային թույլ տվեց պատերազմի սկսելու իր ձեռքը վերցնելու ռազմավարական նախաձեռնությունը և խորանալու խորհրդային երկրի տարածքը: Գերմանական գլխավոր հրամանատարությունը ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու վերաբերյալ մշակված «Բարբարոս» պլանով նախատեսում էր մինչև 1941—1942 թթ. ձմռան գալը ջախջախել խորհրդային զինված ուժերը:

Երբ Հիտլերը վավթեյ իշխանությունը, «Արշավանք դեպի Արևելք» («Դրանց նախ Օստեն») կարգախոսը դարձավ ֆաշիստական Գերմանիայի արտաքին քաղաքականության անկյունաքարը: Գերմանական միլիտարիզմն իր առջև նպատակ էր դրել ոչ միայն վավթելու խորհրդային երկրի հողն ու հարստությունը, այլև ստրկացնելու խորհրդային երկրի ժողովուրդներին ու գերմանացնելու երկիրը: Ֆաշիստական կուսակցության պառակային ջոկատների «Դաս շվարցե Կոր» թերթը, որը ՄՄ-ի ռայսաֆյուրերի օրգանն էր, բացեիբաց գրում էր. «Մեր խնդիրն է ոչ թե Արևելքը գերմանացնել բառիս հնացած իմաստով, այսինքն՝ բնակչությանը պատվաստել գերմանական լեզուն, գերմանական օրենքները, այլ հասնել այն բանին, որ Արևելքում ապրեն միայն գտարյուն գերմանացիներ»¹:

Հիտլերը ցինիկորեն հայտարարում էր. «Գերմանացիների համար բավական չէ պարզապես ջախջախել ռուսական բանակը և գրավել Լենինգրադը, Մոսկվան, Կովկասը: Մենք պետք է աշխարհի երեսից ջնջենք այդ երկիրը և ոչնչացնենք նրա ժողովրդին»²:

Գերմանական «արևելյան քաղաքականություն» մեջ առանձնապես կարևոր տեղ էր տրվում Կովկասին՝ «Բարձի մարս» անվանումով: Այն որպես պետական միավորում պետք է մտներ «Գերմանական դաշնության» մեջ, գերմանացի լիպոնի գլխավորությամբ, ոչ մի ժողովրդի նկատմամբ վիճողականություն չէր ցուցաբերվելու³: Գերմանիան խոստանում էր Կովկասը հետագայում հանձնել Թուրքիային, պայմանով, որ այն շարունակի օգտագործել Գերմանիան⁴: Գերմանացի

պատմաբան Գոլո Մաննը գրում է, որ անյայդ պատերազմում Գերմանիան իր առջև դրել էր «անարդար նպատակ, ամենաանարդարը, որը երբևէ իր առջև դրել է քրիստոնյա ազգը»⁵:

Չնայած կորուստներին՝ Կարմիր բանակը հերոսաբար դիմադրում էր մինչև ատամները զինված թշնամուն: Գերմանացիների հարձակումը հեշտ ու հանգիստ չէր ընթանում: 1941—1942 թթ. ձմռանը խորհրդային բանակի հարձակումը և Մոսկվայի ճակատամարտում տարած փայլուն հաղթանակը ձախողեցին «Բարբարոս» պլանը: Դա գերմանական ռազմական մեքենայի առաջին լուրջ ճգնաժամն էր, որից լիովին դուրս գալ նրան այլևս չհաջողվեց:

ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ա. Մ. Վասիլևսկին հետագայում նշել է, որ թշնամու ամառային մտադրությունների վերաբերյալ խորհրդային գլխավոր հրամանատարության և գլխավոր շտաբի ղեկավարության սխալ հաշվարկների հետևանքով խորհրդա-գերմանական ռազմաճակատի հարավային թևում 1942 թ. իրադրությունը կտրուկ փոխվեց հոգուտ ֆաշիստական բանակի⁶: Ընդ որում հակառակորդը հաշվարկել էր, որ հարավում գերմանական գլխավոր հարվածից հետո ԽՍՀՄ-ը կթուլանա, կզրկվի կովկասյան նավթից, Դոնեցկի և Ստալինգրադի արդյունաբերական շրջաններից, իսկ գերմանական զորքերի մուտքը Կովկաս խորհրդային երկիրը կանջատի արտաքին աշխարհից, այդ թվում Իրանից, կարագայնի պատերազմում Գերմանիայի կողմում Թուրքիայի հանդես գալը⁷:

Վուլգայի ափերը դուրս գալու համար ֆաշիստական հրամանատարությունը կանգ չէր առնում ո՛չ մարդկային փոհերի, ո՛չ տեխնիկայի կորուստների առջև: 1942 թ. հունիսին թշնամու զորքերին հաջողվեց դուրս գալ Վուլգայի և Դոնի միջագետքը: Կատաղի մարտեր ծավալվեցին անմիջականորեն Ստալինգրադի համար: Սկսվեց պատմության մեջ իր մասշտաբներով նմանը չունեցող Ստալինգրադի ճակատամարտը:

Ինչպես Հայրենական պատերազմի մյուս ռազմաճակատներում, այնպես էլ Ստալինգրադի հերոսամարտում իրենց արժանապատվորեն դրսևորեցին հայ ժողովրդի վավակները:

1942 թ. ամռանը թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ դեպի հարավ նահանջող խորհրդային զորամասերի մեջ էին նաև Հայաստանի

¹ Шу «Нюрнбергский процесс», т. 2, М., 1958, с. 521.
² Шу «Красная Звезда», 11 ноября 1945 г.
³ Шу «Совершенно секретно! Только для командования! Стратегия фашистской Германии в войне против СССР», документы и материалы, М., 1967, с. 98.
⁴ Шу նույն տեղում, էջ 178:

⁵ Шу «За рубежом», 1962, N 45, с. 6.
⁶ А. М. Василевский. Победа, немеркнущая в веках, «Двести огненных дней», М., 1968, с. 14.
⁷ Шу «Военно-исторический журнал» 1965, N 10, с. 13.

տարածքից ռազմաճակատ մեկնած 76-րդ¹ (նախկին հայկական), 136-րդ² և 138-րդ³ հրաձգային դիվիզիաները, որոնք մինչև վերջ մասնակցեցին Ստալինգրադի համար մղվող արյունահեղ մարտերին և փայլուն էջ գրեցին հերոսամարտի տարեգրության մեջ: Ստալինգրադի հերոսամարտին մասնակցած համարյա բոլոր խորհրդային զորամասերում կային հայ ռազմիկներ:

Ստալինգրադի գրավումը Գերմանիայի համար ոչ միայն ռազմավարական, այլև քաղաքական նշանակություն ուներ: Ահա թե ինչու ֆաշիստական հրամանատարությունը կրակի քուրա էր նետում նորանոր դիվիզիաներ: Հիտլերը, Գեբելսը, Ռիբենտրոպը «մշակում էին» Թուրքիայի և Ճապոնիայի դեսպաններին՝ ձգտելով արագացնելու նրանց պետությունների ներգրավումը Խորհրդային Միության դեմ մղվող պատերազմի մեջ⁴:

Պատերազմի ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը և տնտեսությունը վերակողմնորոշված էին դեպի ֆաշիստական Գերմանիա: Թուրքիայի Գերմանիա էր տարվում քրոմ. 1943 թ. արդյունահանված 100 հազար տոննա հանքաքարի 47 հազարն ուղարկվել է Գերմանիա⁵: Գերմանական ռազմաօդային թույլատրվեց անցնել Դարդանելի նեղուցով: Պատերազմում իրեն միանալու դեպքում Գերմանիան Թուրքիային խոստանում էր Ղրիմը⁶: Թուրքական կառավարությունը խորհրդային սահմանի մոտ կենտրոնացրել էր 26 դիվիզիա և սպասում էր հարմար պահի՝ ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու համար⁷:

¹ 76-րդ Հայկական կարմրադրոշ Կ. Ե. Վորոշիլովի անվան լեռնահրաձգային դիվիզիան կազմակերպվել է 1921-1922 թթ. Հայկական հավաքական բրիգադի բազայի վրա: Սակայն 1938 թ. բոլոր ազգային զորամասերը վերակազմվել են ընդհանուր զորամիավորումների, որոնց թվում նաև 76-րդը: Նա սկսում է համալրվել այլ ազգությունների մարտիկներով: Բայց Հայրենական պատերազմի առաջին ամիսներին, երբ դիվիզիան համալրվեց հանրապետության մարդկային և նյութական ռեսուրսներով, դարձյալ նրա անձնակազմի կեսից ավելին կազմում էին հայերը (տես ԱՄՄՈ ՓՓ, ֆ. 51-Յ ԳՎ. (76-Յ) стрелковой дивизии, оп. 17, д. 2, л. 29):

² Ֆինլանդիայի դեմ պատերազմն ավարտվելուց հետո 136-րդ դիվիզիան, երկրի հարավային սահմանների անվտանգության ապահովման նկատառումով, տեղափոխվեց Լենինական: 1941 թ. հունիսի 22-ից դիվիզիան 135 կմ ճակատով պաշտպանություն գրավեց խորհրդային թուրքական սահմանում (տես ԱՄՄՈ ՓՓ, ֆ. 15-Յ ԳՎ. (136-Յ) стрелковой дивизии, оп. 480858, д. 1, л. 2): Միևնույն ժամանակ դիվիզիան համալրվեց Լենինականից և նրա մոտակա շրջաններից փորակոչվածների հաշվին, որից հետո դիվիզիայի կազմը 10208-ից հասավ 14857-ի (տես ԱՄՄՈ ՓՓ, ֆ. 15-Յ ԳՎ. (136-Յ) стрелковой дивизии, оп. 104841, д. 1, л. 3): Այսպիսով դիվիզիայում հայերի թիվը աճեց 32 %-ով:

³ 138-րդ հրաձգային դիվիզիան համալրվեց Լոռու շրջանից փորակոչվածների հաշվին:

⁴ Шу В. Чушков. Начало пути, М., 1967, с. 3.

⁵ Шу «Մովետական Հայաստան», 1944 թ. օգոստոսի 8:

⁶ Шу «Правда», 27 марта 1947 г.

⁷ Шу А. Самсонов. Сталинградская битва, М., 1968, с. 48.

Հարավից Թուրքիայի հարձակումով ռազմական թատերաբեմ կղառնար Հայաստանը: Այդ հարձակումով իրագործվելու էր թուրքական կառավարող շրջանների վաղեմի երազանքը՝ ավարտին հասցնել 1915 թ. հայերի դեմ գործադրված եղեռնը⁸, Կովկասում, Ղրիմում և Միջին Ասիայում մինչև Ուրալ տարածել թուրքական տիրապետությունը⁹: 1942 թ. աշնանը Թուրքիայում կատարվեց պրահավաք և որոշում ընդունվեց ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու մասին: Երկրի վեց վիլայեթներում մտցվեց արտակարգ դրություն, իսկ ԽՍՀՄ-ին սահմանակից վիլայեթներում՝ ռազմական դրություն: Պատերազմ հայտարարելու ժամկետը կապված էր Ստալինգրադի ընկնելու մասին Բեռլինից տեղեկություն ստացվելու հետ¹⁰:

Ստալինգրադում վճռվում էր նաև հայ ժողովրդի բախտը: «Պրավդա» թերթը գրել է, որ «ոչ միայն Կովկասի նախալեռներում, այլև Ստալինգրադի մոտ անհաշտ պայքար էր մղվում Հայաստանի համար: Հայ մարտիկները հերոսական Կարմիր բանակի շարքերում ոչնչացնում էին ֆաշիստական դիվիզիաներին ինչպես կատաղած շների ոհմակի»¹¹:

Ռազմաճակատում գտնվող իր փավակներին ուղղած նամակում հայ ժողովուրդը գրում է. «Մենք հպարտանում ենք, որ հարձակվող Կարմիր բանակի շարքերում կռվում եք դուք՝ մեր ժողովրդի հավատարիմ փավակները ... Ոչ մի բուլե մի մոռացեք, որ հիտլերյան արյունաքրու բորենու դեմ մղվող պատերազմում վճռվում է Խորհրդային Միության բախտը, հայ ժողովրդի բախտը ... Մեր ժողովրդի պատության վրա նորից իրենց արյունաթաթախ ձեռքն են բարձրացրել հին ու յիսերիմ թշնամիները»¹²:

Հետագայում «Յուժանիտե» թերթը «Իսկ ո՛վ է այժմ հիշում հայկական եղեռնը՝ հողվածում գրել է. «Ստալինգրադը, որը խորհրդային ժողովրդի հաղթանակի մարմնացումն էր, կանգնեցրեց թուրքների ռազմատենչ մղումները և փրկեց հազարավոր հայերի Թուրքիայում և Հայաստանում»¹³:

Ինչպես խորհրդա-գերմանական բոլոր ռազմաճակատներում, այնպես էլ Ստալինգրադի հերոսամարտում վառ կերպով դրսևորվեցին մեր ժողովրդի սերն ու ձգտումը պատության ու անկախության նկատմամբ: Հայ ժողովրդի փա-

⁸ Шу «L' Humanite», 23.4.65.

⁹ Шу Э. Корхмазян. Турецко-германские отношения в годы Второй мировой войны, Е., 1977, с. 95.

¹⁰ Шу Х. М. Ибрагимбейли. Крах «Эдельвайса» и Ближний Восток, М., 1977, с. 59.

¹¹ «Правда», 4 февраля 1943 г.

¹² «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր փավակներին», Ե., 1943, էջ 5-10:

¹³ Шу «L' Humanite», 23.4.65.

վակները լավ էին հասկանում, թե ինչի և ում համար են իրենք մարտնչում ռազմաճակատներում:

Այդ օրերին գումարտակային կոմիսար Ս. Խաչատրյանը 51-րդ բանակի թերթում գրել է. «Հայրենիք, քեզ համար մարտի են գնում քո զավակները և տալիս են ամենաթանկը՝ կյանքը: Բո սերն ուժեղ է մահից»¹:

Ռազմաճակատային «Կրասնոյն վնամյա» թերթում 343-րդ հրաձգային դիվիզիայի գնդապետ օջականյի Խ. Բաղդասարյանը գրել է. «Այստեղ՝ Դոնի տափաստաններում, ես օգնում եմ քեզ, հայրենի Կովկաս: Մենք զենքեր կդարձնենք թշնամու արյունը, որպեսզի ես նորից կարողանամ վերադառնալ իմ երեխաների ու իմ կնոջ մոտ, իմ ծաղկող խաղողի այգին, իմ արևաշող հարազատ Հայաստանը»²:

«Երբ ես տեսնում եմ, թե ինչպես Հիտլերի ֆաշիստական հորդաները ձգտում են զավթել Խորհրդային Հայաստանը և այնտեղ սահմանել իրավաբկություն և ստրկության օրենքներ, արյունը եռում է իմ երակներում», գրել է ավագ լեյտենանտ Ս. Հակոբյանը³:

«Գերմանական դահիճները ձգտում են զավթել իմ սիրելի հայրենիքը, — գրում է լեյտենանտ Մակիչ Բայլանը, — մորեխի նման խցկվում են Կովկասի լեռները, բայց մենք թույլ չենք տա գերմանացու պիղծ ոտքը տրորի մեր լեռներն ու դաշտերը»⁴:

Ահա դրվագներ հերոսամարտի մասնակից հայ ռազմիկների սխրանքներից:

Կոպանյա բնակավայրը գրավելու համար թշնամու 24-րդ տանկային կորպուսի տասնյակ տանկեր շարժվում են գվարդիականների դիրքերի վրա: Նրանք 14-ն էին և կասեցրին թշնամու հարձակումը: Սակայն գոհվեցին բոլորը: Նրանց մեջ էին հայ ռազմիկներ Արամ և Գուրգեն Բարսեղյանները, Մանուկ Ավետիսյանը⁵: Այդ սխրանքն արձագանք գտավ Ի. Էրենբուրգի հողվածներից մեկում: Նա գրում է. «Արագածի լանջերից եկել էին երկու եղբայրներ՝ Արամ և Գուրգեն Բարսեղյանները: Նրանք եկել էին տափաստան, Դոն: Գերմանական 33 տանկեր շարժվում էին դեպի խուտոր: Արամը և Գուրգենը շքեր նետեցին տանկերի վրա: Հերոսները գոհվեցին, բայց տանկերը չանցան»⁶:

Օգոստոսի 23-ի կրեկոյան հակառակորդը, ճեղքելով մեր պորքերի սլաշտպանությունը Ռինկ — Ալատովկա շրջանում, հայտնվեց Ստա-

լինգրադի հյուսիսային դարպասների մոտ՝ տրակտորի գործարանի մոտակայքում: 63-րդ բանակի 13-րդ առանձին կործանիչ հակատանկային բրիգադը վարժական պարապմունքներով էր զբաղված, երբ անհավասար մարտի բռնվեց թշնամու դեմ: Բրիգադի դիվիզիոնի հրամանատար կապիտան Սարգսյանը կազմակերպում է մարտը, որը տևում է մի քանի ժամ, և հաղթանակով դուրս գալիս գոտեմարտից: Նկարագրելով կապիտան Սարգսյանի մարտական կազմակերպվածությունը և անօրինակ սխրանքը՝ Ստալինգրադյան ռազմաճակատի հրամանատար Ա. Երյոմենկոն իր «Ստալինգրադ» աշխատության մեջ, երեք էջ նվիրելով Սարգսյանի սխրանքին, գրում է. «Շոգ ամառային օրվա այդ դեպքը մեզանից յուրաքանչյուրի վրա խոր տպավորություն թողեց, որը ժամանակն անկոր է ջնջելու»⁷: Կապիտան Աշխույժ Սարգսյանը դարձավ Վ. Գրոսմանի «Հանուն արդար գործի» գրքի հերոսներից մեկը: Նրա մասին գրվեց ռազմաճակատային թերթերում և ռազմական ամփոփագրերում:

Մայր Մաթևոս Մադաթյանի 36-րդ գվարդիական գունդն աչքի էր ընկել պատերազմի սկզբից, և՛ գունդը, և՛ Մադաթյանը պարգևատրվել էին Կարմիր դրոշի շքանշանով: Նրա գունդը հերոսաբար մարտնչեց նաև Ստալինգրադում, այտեղ ցուցաբերած խիպախության համար Մադաթյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով⁸:

76-րդ հրաձգային դիվիզիայի 207-րդ գնդի հրամանատար Սամվել Բարսեղյանի մասին վինվորական լրագրող Հրաչյա Քոչարը գրել է. «Ժամանակն անկոր կլինի ջնջելու Ստալինգրադի ճակատամարտի մասնակից ու ականատես մարդկանց հիշողությունից Սամվել Բարսեղյանի հերոսական սխրագործությունը»⁹:

Քաջի համբավ էր վայելում 136-րդ հրաձգային դիվիզիայի ականանետային դիվիզիոնի հրամանատար մայր Սամվել Հարությունյանը, որին դիվիզիայում անվանում էին «Մասունցի Դավիթ»: Արհամարհելով մահը՝ նա օգոստոսի 21—23-ը Դուբովի Օվրագի եկեղեցու վանգակատունն ընտրեց որպես դիտակետ, ղեկավարեց արյունահեղ մարտը և հաղթանակով ավարտեց այն¹⁰:

138-րդ հրաձգային դիվիզիայի 295-րդ հրետանային գնդի մարտկոցի հրամանատար Կոստյա Վարդևանյանը Վերին Ելանկայի շրջանում օգոստոսի 31-ին խիճեց թշնամու վեց տանկ, սակայն նույն օրն էլ գոհվեց թշնամու ուժա-

¹ «Сын Отечества», 4 августа 1942 г.

² «Красное Знамя», 26 октября 1942 г.

³ «Красная Армия», 5 декабря 1942 г.

⁴ «Боевой товарищ», 18 сентября 1942 г.

⁵ Shu «На защиту Родины», 9 августа 1942 г.

⁶ «Красная Звезда», 5 ноября 1942 г.

⁷ А. Еремко. Сталинград, М., 1961, с. 143.

⁸ Shu ՀՀ ԳԱԱ Հայրենական պատերազմի պատմության կրթնետի արխիվ (ՀԳԳԱ) ֆ. 184, գ. 3, թ. 5:

⁹ «Սովետական Հայաստան», 1942 թ. հոկտեմբերի 5:

¹⁰ Shu ЦАМО РФ, ф. 33, оп. 682525, л. 172, л. 215.

կոծությունից! Նա և նրա երկու ընկերները դիվիզիայում առաջինն արժանապան Լենինի շքանշանի (հետմահու):

Միայն 13-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայում Ստալինգրադի փլատակների մեջ մարտնչում էին 389 հայ ռազմիկներ²: Դիվիզիայի տարածքում էր գտնվում նշանավոր «Պավլովի տունը»: Քաղղեկ Վաչե Ավակիմովը ամեն ինչ արեց այդ ռազմավարական օբյեկտը թշնամուն չհանձնելու համար: Քաղաքի պաշտպանության արյունահեղ օրերին Վոլգայի աջ ափի ժայռապատի վրա Վաչեի ձեռքով ձյուրով գրվեց. «Այստեղ մահվան դեմ-հանդիման կանգնեցին Ռոդիմյեի գվարդիականները», իսկ Ստալինգրադի հաղթանակից հետո նա ավելացրեց. «Աներեք կանգնելով՝ հաղթեցին մահվանը»:

Միայն հոկտեմբերի 18—19-ի մարտերի ընթացքում 343-րդ հրաձգային դիվիզիայի գնդապրորդ Խաչիկ Բաղդասարյանը ոչնչացրեց 74 հիտլերական³: «Գնդապրորդ Խաչիկ Բաղդասարյանը,—գրում է «Կրամոյե վամյա» թերթը,—ոչնչացրեց թշնամու 245 պիկտոր և սպա: Փա՛ռք ու պատիվ խորհրդային դյուցազնին՝ արևաշող Հայաստանի պավակին»⁴:

64-րդ բանակի «Ձա Ռոդինու» թերթը դեռ օգոստոսի 25-ին տպագրեց 29-րդ հրաձգային դիվիզիայի 106-րդ վաշտի հրամանատար Վարպեդատ Ներսիսյանի նկարը: Արգաններով բնակավայրի մոտ նա մարտիկ Արատյեի հետ մի մարտում ոչնչացրել էր 300 հիտլերական և պարզևատրվել Կարմիր դրոշի շքանշանով⁵:

37-րդ գվարդիական դիվիզիայի քաղբաժնի հրահանգիչ Գեորգի Խարախաշյանը հոժարակամ մնաց 109-րդ հրաձգային գնդում որպես հրամանատարի քաղգծով տեղակալ և ապահովեց բանակի պաշտպանությունը Վոլգայի հ. 62 գետանցում: Մարտերից մեկում Խարախաշյանն անձամբ ոչնչացրեց թշնամու 3 տանկ և 50 հիտլերական⁶:

Վոլգային սեղմված՝ կիսաշրջապատման մեջ արյունահեղ մարտեր մղեցին 138-րդ հրաձգային դիվիզիայի ռազմիկները: Միայն նոյեմբերի 11-ին դիվիզիան հետ մղեց թշնամու վեց գրոհ: Նոյեմբերի 13-ի արյունահեղ մարտը տևեց 11 ժամ: Գերմանացիները 1500 հոգով սկսեցին հարձակումը և մեծ կորուստներով նահանջեցին: Այդ օրը թշնամու 70 ավտոմատավորներ ներխուժում են դիվիզիայի դասավորության շրջանը և վտանգ

սպառնում հրամանատարական կետին: Բայց այդ պահին մի բուռ քաջեր՝ 18-20 հոգով կրակով և սվինամարտով ոչնչացնում են ֆաշիստներին և վերականգնում դրությունը⁷: Այդ խմբի մեջ էին հայ ռազմիկներ Աշոտ Բարսեղյանը, Սամուել Տեր-Միմոնյանը և Սուրեն Ավետիսյանը: Սուրենն այդ մարտում սվինահարեց երկու հիտլերականի: Չնայած վիրավորված լինելուն՝ նա շարունակեց կռվել թշնամու դեմ⁸: Սուրենի նկարը տպագրվեց Միության կենտրոնական մամուլում: Փառաբանված ռազմիկը գոհվեց 1945 թ. գարնանը Օդերի ափին:

Ստալինգրադում աչքի ընկան բազմաթիվ հայ օդաչուներ:

Սերգեյ Բուռնապյանը Ստալինգրադում կատարեց 198 մարտական թռիչք, ոչնչացրեց հակառակորդի 14 ինքնաթիռ⁹, պարզևատրվեց Լենինի շքանշանով: Նա 1944 թ. օգոստոսի 2-ին հետմահու արժանապատ Խորհրդային Միության հերոսի կոչման:

Ստալինգրադյան երկնքում թշնամու 12 ինքնաթիռ ոչնչացրեց հայազգի օդաչու Նիկոլայ Գորնը՝ 181-րդ ավիացիոն գնդի հրամանատարը: Նրա գունդն արժանապատ «Ստալինգրադյան» անվանմանը, և ինքն էլ պարզևատրվեց երկրորդ Կարմիր դրոշի և Ալեքսանդր Նևսկու շքանշաններով: «Գորնի ստալինգրադյան օրերի մասին կարելի է մի ամբողջ գիրք գրել», նշում է «Օգոնյոկ» հանդեսը¹⁰:

Միայն 16-րդ օդային բանակում մարտնչում էին 37 հայ օդաչուներ¹¹:

Խորհրդային զորքերի 1942 թ. նոյեմբերյան հակահարձակումը ռազմական արվեստի պատմության մեջ նոր էջ էր ուժեղ, տեխնիկապես հանդերձված թշնամու մեծ խմբավորման շրջապատման և լրիվ ջախջախման ռազմավարության և մարտավարության տեսակետից: Այդ հակահարձակման ժամանակ մեծ քննություն բռնեց հրետանին: «Ստալինգրադում նոյեմբերյան հարձակման ժամանակ,—գրում է Կարմիր բանակի հրետանու գլխավոր հրամանատար մարշալ Ն. Վորոնովը,—ինձ հետ միասին հրետանին ակտիվորեն նախապատրաստում էր Իվան Վեքիլովը»¹²: Որպես Կարմիր բանակի հրետանու շտաբի պետի տեղակալ գեներալ Վեքիլովը ակտիվորեն զործեց Հայրենական պատերազմի ընթացքում և դարձավ խորհրդային պինված ուժերի ակնավոր զորապետերից մեկը՝ հասնելով գեներալ-լեյտենանտի աստիճանի:

¹ Шу ЦАМО РФ, ф. 70-й гв. (138-й) ст. див., оп. 1., д. 3, л. 18.

² Шу ЦАМО РФ, ф. 220, оп. 242, д. 10, лл. 225—226.

³ Шу «Героический поход», 20 октября 1942 г.

⁴ Шу «Красное Знамя», 26 октября 1942 г.

⁵ Шу «За Родину», 25 октября 1942 г.

⁶ Шу ЦАМО РФ, ф. 37-й гв. СД, оп. 1, д. 21, л. 9.

⁷ Шу ЦАМО РФ, ф. 70-й (138-й) гв. СД, оп. 1., д. 1, л. 12.

⁸ Шу ЦАМО РФ, ф. 33, оп. 682526, д. 63, л. 24.

⁹ Шу ՀՀ ԳԱԱ ՀՊՊՎԱ, Ս. Բուռնապյանի ֆ., գ. 1, թ. 1:

¹⁰ «Огонек», 1945, N 23, с. 10.

¹¹ Шу ЦАМО РФ, ф. 368, оп. 6512, д. 8, л. 123.

¹² И. Воронов. На службе военной, М., 1963, с. 291.

Գոնի ռազմաճակատի քաղվարչության պետ Սերգեյ Գալաշևը Կարմիր բանակի հմուտ զորավարներից էր: Մարշալ Կ. Կ. Ռոկոսովսկին գրում է. «Ս. Ֆ. Գալաշևը հիանալի, բազմակողմանի պատրաստված քաղաշխատող էր և հրաշալի ընկեր: Նա տոգորված էր կրակոտ էներգիայով և նախանձելի կենսախնդությամբ, որը գնահատելի հատկություն է հատկապես զորքերի ծանր ապրումների պահերին»¹: Նա հսկայական աշխատանք տարավ հատկապես նոյեմբերյան հակահարձակման օրերին: Հետագայում Ս. Գալաշևը հասավ գեներալ-լեյտենանտի աստիճանի, դարձավ ԽՍՀՄ պինված ուժերի ցամաքային զորքերի քաղվարչության պետ:

5-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ էր գեներալ-մայոր (հետագայում գեներալ-լեյտենանտ) Հայկ Թումանյանը: 5-րդ տանկային բանակը մեծ գործ կատարեց Ստալինգրադում թշնամու խմբավորման շրջապատման և ջախջախման օրերին: Այդ օպերայիաներում բանակին տրվեցին ամենածանր և վճռական տեղամասերը: Թումանյանն անձամբ լինում էր զորամասերում և մոբիլիպացնում անձնակազմին բանակի առջև դրված խնդիրներն իրագործելու նպատակով²:

Գնդապետ Գևորգ Տեր-Գասպարյանը (հետագայում գեներալ-լեյտենանտ) ստալինգրադյան հերոսամարտում սկզբում ստանձնեց 96-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի, այնուհետև 21-րդ բանակի հրամանատարի տեղակալի պաշտոնները: Նա իր ավանդն ունեցավ Վոլգայի ափերին բանակի հաղթարշավի մեջ:

Գեներալ Վոլսկու 4-րդ մեքենայացված կորպուսի զորամասերը, կոտրելով թշնամու դիմադրությունը, Սովետսկիի շրջանում ընդառաջ դուրս եկան Հարավ-արևմտյան ռազմաճակատի տանկիստներին և փակեցին շրջապատման օղակը: Այդ հարձակման ժամանակ մեծ դեր խաղաց կորպուսի 60-րդ մեքենայացված բրիգադը, որի հրամանատարն էր փոխգնդապետ Ասքանապ Կարապետյանը: Ստալինգրադյան մարտերին ակտիվորեն մասնակցելու համար բրիգադը վերանվանվեց 9-րդ «Ստալինգրադյան» գվարդիական: Կարապետյանը պարզևատրվեց Կարմիր դրոշի ջրանշանով: Հետագայում նա արժանացավ գեներալ-մայորի աստիճանի ու Խորհրդային Միության հերոսի կոչման:

Նոյեմբերի 20-ին 38-րդ հրաձգային դիվիզիային առաջադրանք տրվեց գրավելու շրջապատի վրա իշխող 128,2 բարձունքը: Այդ օրվա մարտում խիպսեց դիվիզիայի 48-րդ հրաձգա-

յին գնդի 2-րդ գումարտակի հրամանատար, լեյտենանտ Անդրեյ (Անդրանիկ) Խաչատուրովը: Նրա գումարտակի մարտիկներն առաջինը հասան բարձունքի գագաթը: Հենց այդտեղ էլ դրոշն ամրացնելիս մահացու վիրավորվեց Խաչատուրովը: Հետմահու նա պարգևատրվեց Լենինի ջրանշանով: Այդ օրերից սկսած՝ դիվիզիայում սկսեցին երգել իրենց հիմնը, որը նվիրված էր դիվիզիայի գոհված չորս քաջերին: Նրանցից մեկը Ա. Խաչատուրովն էր³:

Հարավ-արևմտյան ռազմաճակատի «Սովետսկի վոյին» թերթը նոյեմբերի 25-ին գրել է. «Գեներալ Թավարքիլաձեի մարտիկները (76-րդ հրաձգային դիվիզիայի. — Գ. Գ.) ցուցաբերում են վանգվածային հերոսություն: Հավվագյուտ և պարմանալի երևույթ է, երբ դժվարանում ես վերհիշել առանձին խիպսեցների: Բոլորն էլ հերոսներ են ու քաջեր»: Ահա նրանցից մի հայրողու սխրանքը: 216-րդ հրաձգային գնդի նշանառու Արգամ Հակոբյանը դեկտեմբերի 10-ին Դմիտրիևկա բնակավայրի շրջանում դիպուկ կրակով խփեց թշնամու 4 տանկ⁴:

Ստալինգրադյան հերոսամարտում ցուցաբերած արիության և տոկունության համար 76-րդ հրաձգային դիվիզիան 1942 թ. նոյեմբերի 23-ին վերանվանվեց 51-րդ գվարդիական, իսկ 1943 թ. հունիսի 19-ին պարգևատրվեց Լենինի ջրանշանով:

Ստալինգրադի հերոսամարտի փառաբանված սակրավորներից էր Գրիգորի (Գուրգեն) Խաչատուրովը: Անթիվ են նրա սխրանքները: Նշանավոր գրող Վ. Գրոսմանը գրել է. «Մարտիկ Խաչատուրովը թշնամու կրակի տակ վնասապերծեց 142 ական, նա այդ թեմայով կարող է ապատ դասախոսություն կարդալ»⁵: Խաչատուրովը զոհվեց հունվարյան մարտերից մեկում:

407-րդ կապի առանձին գծային վաշտի լեյտենանտ Համլետ Դալլաքյանը իր դասակով պահպանեց կապը 57-րդ բանակի և Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբների միջև: Իսկ ռազմաճակատի հրամանատարական կետը Վոլգայի ձախ ափը տեղափոխվելուց հետո, անասելի դժվարություններ հաղթահարելով, կապ անցկացրեց նաև Վոլգայի վրայով⁶:

Հերոսամարտում մեծ գործ կատարեցին հայ բժիշկները, բուժքույրերը, սանիտարական աշխատողները: 1943 թ. դեկտեմբերի 4-ին «Պրավդա» թերթը գրեց, որ գերմանական վավթիչների դեմ մղվող պայքարի օրերը նոր հայ Այծմանիկներ են ծնվել ռազմաճակատներում: Հողվածում նըշ-

¹ К. К. Рокоссовский. На Сталинградском направлении, М., 1968, с. 157.
² Шу ЦАМО РФ, ф. 33, оп. 682525, д. 19, л. 448.

³ Шу ЦАМО РФ, ф. 73-й гв. (138-й) СД, оп. 1., д. 98, л. 313.
⁴ Шу ЦАМО РФ, ф. 51-й гв. (76-й) СД, оп. 1., д. 226, л. 10.
⁵ В. Гроссман. Сталинградская битва, М., 1946, с. 21.
⁶ Шу ЦАМО РФ, ф. 33, оп. 682525, д. 171, л. 35.

վում է մոսկվայի արխաիքոս բուժքույր Ասյա Քեկեջյանի անունը, որը խիպսիտության օրինակներ ցույց տվեց ստալինգրադյան հերոսամարտում:

Վոլգայի և Դոնի ափերին մղված ճակատամարտում կատարած իրենց սխրանքներին հետագայում ավելացնելով նորերը՝ մեկ տասնյակից ավելի հայրողիներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման:

Ստալինգրադի ճակատամարտը վերջացավ ֆաշիստական բլոկի հինգ բանակների լքիվ ջախջախումով: Շրջապատվեց և ոչնչացվեց թշնամու 330-հազարանոց խմբավորումը: Ստալինգրադը և Կովկասը գրավելու վերամխտի պլանները ձախողվեցին: Ստալինգրադի հաղթանակի շնորհիվ պատերազմի կործանարար հոդմը այս անգամ չանցավ Հայաստանով:

Հայ պինվորը, որտեղ էլ նա կովելիս լիներ մարդկության ընդհանուր թշնամու՝ ֆաշիզմի դեմ, լավ էր հասկանում, որ ինքը կովում է փոքրիկ Հայաստանի, ողջ հայության համար: Այս սուրբ գիտակցությամբ էր մարտնչում հայ պինվորը, լինել նա Հայաստանից, թե սփյուռքից:

Ստալինգրադում խորհրդային զորքերի տարած հաղթանակի շնորհիվ հայերի ոչնչացման Թուրքիայի ծրագիրը հողս ցնդեց: Այն պետք է իրագործվեր՝ սկսած հենց Թուրքիայի ներսից: Այդ մասին հետաքրքիր մանրամասներ է հաղորդում Փարիզի «Աշխարհ» թերթի խմբագիր Ավետիս Ալիքսանյանը: Նա երկրորդ համաշխարհային տարիներին ապրելիս է եղել Ստամբուլում և որպես ազգային փոքրամասնության ներկայացուցիչ իր նման հազարավորների հետ վենքի էր կոչվել: Սակայն նրանց ձեռքը բահ ու բրիչ էին տվել և տարել երկրի խորքերը: Նրանց տասնհազարանոց խումբը, որի մեկ երրորդը ստամբուլահայ երիտասարդներ են եղել, լքել են Դոմուլ Դերեսի կոչվող ձորի ճամբարը: «Թուրքիա, — գրում է Ալիքսանյանը, — կպահեր իր «չեփոքությունը» ցերեկները միայն: Մութին Վոսփորը բաց ծով էր նայիններու նավատորմին առջև: 1943-ին Ստալինգրադին առջև տեղի ունեցածի լուրերը կհասնեին մինչև մեր... խոպանոցը» (թուրքերեն «Դոմուլ Դերեսի» նշանակում է խոպի ձոր): Այդ երիտասարդները սրտի դողով սպասել են ճակատամարտի ելքին, որից է ուղղակիորեն կախված եղել իրենց կյանքը: Եվ ահա երեկոներից մեկում հանկարծ հնչում են պինվորական փողերը, և սովորականից կրկնակի շատ ասկյարներ, հրապաններին ամրացված սփիններով, գոռում-գոչուններով հավաքում են բոլորին և կարգադրում «Հայերը թող պատվեն... հայերը՝ աջ, մնացածները՝ ձախ»: «Ձատվե-

ցանք մյուս փոքրամասնությանց երիտասարդներն, որոնց հրամայվեցավ վերադառնալ իրենց վրանները»: Երեք-չորս հազարի հասնող հայերը գիշերվա ցրտին, առանց տաք հագուստի, ձեռքներն ու ոտքները սառած, լավ բան չգուշակելով, երկար ժամանակ հրապարակում կանգնած սրբապրթացել են՝ սպասելով հրամանի: Ի վերջո թուրքերը փոխում են որոշումը: «Գյավուրներ, վերադարձեք ձեր վրանները», հնչում է նոր հրամանը: «Հաջորդ առավոտ Տոմուլ Տերեսիի ճամբարին մեջ պայթեցավ Ստալինգրադի հաղթանակի լուրը»: Այդ պահին տեղեկանում են, որ Թուրքիայի կառավարությունը անմիջապես հրաժարվել է պատերազմելու իր որոշումից, Դոմուլ Դերեսիում (գույն նաև ուրիշ ճամբարներում) հայերի հաշիվը մաքրելու մտադրությունից¹:

Վոլգայի ափերին խորհրդային զորքերի փայլուն հաղթանակի լուրը կայծակի արագությամբ տարածվեց աշխարհում:

Հայաստանի հայության հետ մինևույն մտահոգությամբ ու ձգտումներով էր ապրում ողջ սփյուռքը: Եգիպտահայ գաղութի իդձերն արտահայտող «Սավառակ» թերթը գրեց. «Այդ հուսատու հորիպոնը մասնավորապես կդառնա մեզի, հայերուս համար, երբ դեռ քանի մը ամիս առաջ պրկված սրտով կհետևեինք մեր մայր հայրենիքին մտեցող սպառնալից վտանգի լուրերուն: Այժմ կրնանք քիչ մը շունչ քաշել»²:

Ստալինգրադի հաղթանակի առթիվ իրենց ողջույնի խոսքում ամերիկահայերը գրում են. «Մեր սրտերն ու մտքերը մեխված են Ստալինգրադին, որտեղ պաշտպանվում են ոչ միայն խորհրդային հայրենիքի ազատությունն ու անկախությունը, այլև բոլոր դաշնակից ազգությունների ազատությունը»³:

1943 թ. սկզբին, Ստալինգրադի հաղթանակից հետո, Փարիզում ստեղծվեցին դիմադրության շարժման ութ մարտական խմբեր և հատուկ ընտրությամբ կազմված «Ստալինգրադ» ջոկատը, որն անվանակոչել և ղեկավարում էր բանաստեղծ Միսաք Մանուշյանը: Մի շարք հաջող գործողություններից հետո բոլոր ինտերնացիոնալ ջոկատները միավորվեցին և մտան «Ստալինգրադ» ջոկատի կազմի մեջ՝ ընդհանուր հրամանատար ունենալով Միսաք Մանուշյանին:

Ստալինգրադը կանգուն մնաց, Ստալինգրադը հաղթեց: Ստալինգրադը ազդարարեց Ֆաշիստական Գերմանիայի վախճանի սկիզբը:

¹ Տես «Աշխարհ», 1968 թ. մայիսի 18 և 20:

² Տես «Յովհաննական Հայաստան», 1942 թ. նոյեմբերի 26:

³ Տես «Ինչու՞ համար կկոպենք մենք՝ հայերս», Նյու Յորք, 1942, էջ 127:

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՄԱՆՅԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Գ. Ս. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ, պաշտոնաթող գնդապետ, պատմական գիտությունների թեկնածու,
 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

89-րդ հրաձգային դիվիզիան կազմավորվել է Հայաստանում՝ 474-րդ հրաձգային դիվիզիայի բազայի վրա, 1941 թ. հունիսի 15-ից մինչև դեկտեմբերի 27-ն ընկած ժամանակամիջոցում: Նրշված ժամանակահատվածն ընդունված է համարել 89-րդ դիվիզիայի առաջին կազմավորման շրջան, 1941 թ. դեկտեմբերի վերջից մինչև 1944 թ. օգոստոսի սկիզբը՝ երկրորդ կազմավորման, իսկ 1944 թ. հոկտեմբերից մինչև պատերազմի վերջը՝ երրորդ կազմավորման շրջաններ:

89-րդ դիվիզիայի կազմի մեջ մտնում էին՝ 390-րդ, 400-րդ և 526-րդ հրաձգային գնդերը, 531-րդ հրետանային գունդը, 154-րդ առանձին կործանիչ-հակատանկային դիվիզիոնը (հետագայում վերակազմավորվեց 154-րդ ինքնագնաց հրետանային դիվիզիոնի), 167-րդ առանձին ականանետային դիվիզիոնը (25.10.42-ին լուծարվեց), 219-րդ առանձին հետախուզական վաշտը, 280-րդ առանձին սակրավոր գումարտակը, 467-րդ կապի առանձին գումարտակը, 550-րդ քիմպաշտպանության առանձին վաշտը, 197-րդ առանձին բժշկասանիտարական գումարտակը, 184-րդ մատակարարման առանձին ավտովաշտը և այլն:

89-րդ դիվիզիայի հրամանատարներն են եղել՝ գնդապետ Տ. Ֆ. Կոլեսնիկովը (մինչև 1941 թ. հոկտեմբերի 10-ը), գնդապետ Ա. Գ. Չաքիյանը (1941 թ. դեկտեմբերի 15-ից մինչև 1942 թ. փետրվարի սկիզբը), փոխգնդապետ Ա. Ս. Սարգսյանը (1942 թ. մարտի 23-ից մինչև նոյեմբերի 1-ը), գնդապետ Ա. Ա. Վասիլյանը (1942 թ. նոյեմբերի 5-ից մինչև 1943 թ. փետրվարի 10-ը), գնդապետ (1943 թ. դեկտեմբերի 21-ից՝ գեներալ-մայոր) Ն. Գ. Սաֆարյանը (1943 թ. փետրվարի 19-ից մինչև պատերազմի վերջը և ավելի ուշ):

Դիվիզիան ռազմաճակատ ուղարկվելու պահին իր կազմում ուներ հրամկազմ՝ 1070 մարդ, կրտսեր հրամկազմ՝ 2587 և շարքայիններ՝ 8148, ընդամենը՝ 11805 մարդ:

Սպառազինությամբ դիվիզիայի համալրվածությունը տոկոսներով ըստ հաստիքով նախատեսվածի կազմում էր՝ հրապաններով՝ 90,6, զենիթային, հաստոցավոր և ձեռքի գնդայիրներով, համապատասխանաբար՝ 0, 29 և 40,2, ավտոմատներով՝ 109,2, հակատանկային հրապաններով՝ 157, 107 մմ և 120 մմ ականանետներով (միասին վերըրած), ինչպես նաև 82 մմ և 50 մմ ականանետներով, համապատասխանաբար՝ 100, 84,4



Նվեր Գևորգի Սաֆարյան,
 գեներալ-մայոր,
 89-րդ Թամանյան դիվիզիայի հրամանատար
Нвер Геворгович Сафарян,
 генерал-майор,
 командир 89-й Таманской дивизии

և 108,2, 122 մմ հաուբիցներով՝ 83, 76 մմ թնդանոթներով՝ 78 և 45 մմ թնդանոթներով՝ 30:

1942 թ. օգոստոսի առաջին տասնօրյակում 89-րդ դիվիզիան մեկնեց Հյուսիսային Կովկաս, անցավ Անդրկովկասյան ռազմաճակատի հյուսիսային խմբի զորքերի (ՀՆՁ) հրամանատարի տրամադրության տակ և սեպտեմբերի 7-ից մինչև 24-ն ընկած ժամանակաշրջանում սկսեց պաշտպանական բնագծեր պատրաստել Թերեքյան լեռնաշղթայի լայնքով՝ Ջիբար-Յուրթ — Չեչենսկի պետտնտեսության բաժանմունք, Կալաուս — Սամաշլի, Բենո-Յուրթ — Բալաշև, Նիժնի Բեկիչևից հարավ գծերով և անմիջական շփման մեջ մտավ Մոզդոկից հարավ գտնվող ռազմահենադաշտը պաշտպանող հակառակորդի հետ:

ՀՆ զորքերին դիմակայում էր հակառակորդի 17-րդ դաշտային և 1-ին տանկային բանակների ուժերի ու միջոցների մի մասը, բանակներ, որոնք ռազմահենադաշտ էին գրավել Մոզդոկից հարավարևմուտք, Թերեքի ափին: 37-րդ և 9-րդ բանակների զորքերի, այդ թվում 89-րդ դիվիզիայի և 256-րդ առանձին բրիգադի՝ հակառակորդի ռազ-

մահենադաշտը վերացնելու բոլոր փորձերը անհաջողությամբ վերջացան:

Քանի որ Մալգոբեկի և Օրջոնիկիձեի ուղղություններում սպառնալից իրավիճակ էր ստեղծվել, 89-րդ դիվիզիան հանվեց իր պաշտպանության գոտուց, տեղափոխվեց և մինչև հոկտեմբերի 17-ը կենտրոնացվեց Գորագորսկայայի և Մակովկինի շրջաններում: Այստեղ նա նախապատրաստվում էր մարտական գործողությունների՝ Մալգոբեկի մոտ, որտեղ ֆաշիստական հրամանատարությունը կենտրոնացրել էր իր գլխավոր ուժերը՝ տեղի նավթաբեր շրջանը գրավելու ու շահագործելու նպատակով:

Օգոստոսի 17-ից մինչև 1942 թ. վերջը 89-րդ դիվիզիան պաշտպանվում էր Մալգոբեկից ու Սագոպշիկից արևմուտք ընկած տարածքում:

1943 թ. հունվարի 1-ին Ստալինգրադյան ռազմաճակատի բազայի վրա ստեղծվեց Հարավային ռազմաճակատը, որի խնդիրն էր, Անդրկովկասյան ռազմաճակատի պորքերի հետ համագործակցելով, շրջապատել ու ոչնչացնել հակառակորդին Հյուսիսային Կովկասում: Թշնամու հրամանատարությունը, հյուսիսից սպառնալիք պզարով, հունվարի 1-ից սկսեց շտապ հետ քաշել իր պորքերը: Անդրկովկասյան ռազմաճակատի ՀԽՁ-ն, 1943 թ. հունվարի 2-ից սկսած, անցան նահանջող հակառակորդի հետապնդմանը: 89-րդ դիվիզիան նույն օրվա ժամը 15-ին մոտ գրավեց Մալգոբեկը, Չեռնոյարսկայան, Թերսկին, Ուրո-ժայնին, Պրիշիբսկայան և այլն:

58-րդ բանակը (արդեն նրա կազմում էր մարտնչում 89-րդ դիվիզիան) դուրս բերվեց ռազմաճակատի երկրորդ էջերն և հունվարի 13-ին կենտրոնացվեց Միներալնիե Վոդի, Ժելնովոդոսկի, Գեորգիևսկի շրջաններում: 50-րդ գերմանական հետևակային և 3-րդ ռումինական լեռնահրաձգային դիվիզիաներին հետապնդելու ընթացքում 89-րդ դիվիզիան գրավեց 3 տանկ, 5 հրանոթ, 2 ականանետ, շուրջ 200 հրացան, 15 ինքնաթիռ (օդանավակայաններում) և այլ ռազմական տեխնիկա:

Այսպես փետրվարի 8-ից՝ դիվիզիան հետապնդում էր նահանջող հակառակորդին Պրոխլադնի — Կաննակայա ուղղությամբ:

Կաննակայայի շրջանից 58-րդ բանակի գլխավոր ուժերը հարձակում ծավալեցին Եյսկի ուղղությամբ: Նրա աջ թևի հարևանը՝ 44-րդ բանակը, Ալովի շրջանում միացավ Հարավային ռազմաճակատի պորքերին, իսկ ձախակողմյան հարևանները՝ 9-րդ և 37-րդ բանակները, 58-րդ բանակից պզարիորեն հետ մնացին:

Փետրվարի սկզբին թշնամու 17-րդ դաշտային և 1-ին տանկային բանակների հետ քաշված պորամասերը, որոնք սեղմված էին Պրիմորսկո-

Ախտարսկի, Կրասնոարմենյակայայի և Սլավյանսկայայի միջև և դեմ էին արված ծովին, բայց դեռևս իրենց ձեռքում էին պահում Թամանյան թերակղզին ու դեպի Ղրիմ տանող ամենակարճ ճանապարհը՝ Կերչի նեղուցը, խորհրդային հրամանատարության տեսադաշտից դուրս մնացին, և նա, բնականաբար, դրանց ոչնչացման համար չհատկացրեց «համարժեք ուժեր և միջոցներ»: Ղրիմի հետ հարմարավետ հաղորդակցություն ունենալով՝ հակառակորդն այստեղ պատրաստել էր բնագծեր երկար ժամանակի համար, իսկ Թամանյան թերակղզին պատասպարող նրա պաշտպանությունը՝ «Կապույտ գիծը», խորհրդային պորքերը ճեղքեցին միայն 1943 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին:

Մի շարք դիվիզիաներ, այդ թվում 89-րդը, դուրս բերվեցին մարտերից և ուղարկվեցին համարման ու նախապատրաստման առաջիկա մարտերի համար: Փետրվարի 26-ից մինչև սեպտեմբերի 2-ը 89-րդ դիվիզիան գտնվում էր Ալովի ծովափի, մասնավորապես նրա Տագանրոգի ծոցի պաշտպանությունում, Եյսկի և Ստարոշչեբբինովսկայայի մերձակայքում:

Այստեղ 8 ամիս մնալուց հետո դիվիզիան համարվեց անհրաժեշտ ամեն ինչով, իսկ նրա պինվորները, արդեն ունենալով մարտական փորձ, բարձրացրին իրենց մարտական վարպետությունը: Այդ ամենը մինչև պատերազմի վերջը նրանց բերեց միայն վատք ու պատիվ և հաղթանակներ:

89-րդ դիվիզիան օգոստոսի լույս 26-ի գիշերը ծովափի պաշտպանությունը հանձնեց այլ պորամասերի և օգոստոսի 25-ից մինչև 30-ը 9 վինվորական էջերններով Ստարոշչեբբինովսկայա կայարանից ժամանեց Նովոռոսիյսկի մոտ, իսկ սեպտեմբերի 3-ին փոխարինեց 318-րդ հրաձգային դիվիզիայի պորամասերին աջից՝ բացառյալ Նեբերջանսկայա—Գապոնովկա, ձախից՝ Սախարնայա Գոլովկա լեռ—Մարկոտսկի լեռնանցք պաշտպանական գոտում:

Նշենք, որ, ի տարբերություն Մալգոբեկի մոտ եղած պաշտպանության, Նովոռոսիյսկի մոտ այն կազմակերպվեց «ոչ ստանդարտ» ձևով, այլ ձեռք բերեց դիրքային պաշտպանության հատկանիշներ: Նման պաշտպանությունը 1944-1945 թթ. օպերացիաներում և մարտերում դարձել էր միս ու արյուն: Սեպտեմբերի 8-ից մինչև 16-ը 89-րդ դիվիզիայի պինվորները աննկուն կերպով պաշտպանում էին դիրքերը, հետախուսություն էին կատարում (այդ թվում՝ մարտով) լեռնանտառային տեղանքում:

Սեպտեմբերի 16-ին դիվիզիան լեռնանտառային տարածքի պաշտպանության ամբողջ գոտիով մեկ անցավ հարձակման և սկսեց այն

ծավալել Ներքառակայայի լեռնանցքի ուղղությամբ: Հետագայում դիվիզիան հարձակվում էր Նատուխանկայա — Անապա — Բլագովեշենսկայա — Թաման ուղղությամբ:

Նովոռոսիյսկ-թամանյան հարձակողական օպերայիայում հակառակորդի դեմ մղված մարտերում ցուցաբերած արիության ու խիզախության համար 2623 վինվորներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ ավագ սերժանտներ Հունան Մակիչի Ավետիսյանին, Սուրեն Սմբատի Առաքելյանին և Ջահան Սարգսի Կարախանյանին Կովկասում մղված մարտերում ցուցաբերած հերոսության համար ավելի ուշ շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում (հետմահու):

Կովկասի համար մղված մարտերում 89-րդ դիվիզիայի անցած մարտական ուղին կազմեց 930 կմ:

Մարտերում վինվորների ցուցաբերած համարձակության և արիության, ինչպես նաև ցորամասերի ու ստորաբաժանումների հմուտ գործողությունների համար 89-րդ դիվիզիան ԳԳՀ 1943 թ. հոկտեմբերի 9-ի հրամանով արժանացավ «Թամանյան» պատվավոր անվանմանը:

1943 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին խորհրդային զորքերը հարձակվում էին նաև Հյուսիսային Տավրիայում, Աջափնյա ՈՒկրաինայում և Բելոռուսիայում: Հարավային (հոկտեմբերի 20-ից՝ 4-րդ ՈՒկրաինական) ռազմաճակատի զորքերը նոյեմբերի առաջին օրերին դուրս եկան դեպի Դնեպրի գետաբերան և Պերեկոպի պարանոց, ռազմահենադաշտ գրավեցին Սիվաշի հարավային ափին: Ղրիմում գտնվող հակառակորդի խմբավորումը կտրվեց նրա հիմնական ուժերից: Ղրիմի պաշտպանությունն իրականացնում էր թշնամու 17-րդ դաշտային բանակը:

Հոկտեմբերի 31-ից մինչև դեկտեմբերի 11-ն ընկած ժամանակաշրջանում Հյուսիս-կովկասյան ռազմաճակատի զորքերը (նոյեմբերի 20-ից՝ Առանձին մերձծովյան բանակ) իրականացրին կերչ-էլտիգենյան դեսանտային օպերայիան և ռազմահենադաշտ գրավեցին Կերչից հարավ:

Օգտվելով այն բանից, որ հակառակորդն իր հիմնական ուժերը կենտրոնացրել էր Կերչից հարավ՝ 18-րդ բանակի դեսանտի դեմ պայքարելու համար, Ալովյան ռազմական նավատորմի օգնությամբ նոյեմբերի լույս 3-ի գիշերը Կերչից հյուսիս-արևելք ափ հանվեց 56-րդ բանակի դեսանտը, որը նոյեմբերի 12-ի կողմը ռազմահենադաշտ գրավեց Կերչի թերակղզում: Ավելի ուշ, դեկտեմբերի 9-ի կողմը Էլտիգենի շրջանում ափ հանված դեսանտը խորհրդային հրամանատարությունն ստիպված էր էվակուացնել:

Նոյեմբերի 18-ից մինչև 25-ն ընկած ժամանակաշրջանում 89-րդ դիվիզիան իր հիմնական ուժերով անցավ Կերչի թերակղզին, պաշտպանական դիրքեր գրավեց Բակալի շրջանում՝ ռազմահենադաշտում բանակի օպերատիվ պաշտպանության խորությունն ստեղծելու նպատակով: Նոյեմբերի 27-ի առավոտյան դիվիզիան 16-րդ հրաձգային կորպուսի կազմում պաշտպանական դիրքեր գրավեց Կերչի արևելյան արվարձանի շրջանում, այնուհետև այն մինչև դեկտեմբերի 4-ը պաշտպանում էր Բուլգանակից հարավ-արևելք գտնվող գոտին և հաջողությամբ հետ էր մղում թշնամու գրոհները:

Դեկտեմբերի 4-ից մինչև 6-ն ընկած ժամանակաշրջանում դիվիզիան, գործելով 16-րդ կորպուսի հարձակման գլխավոր ուղղությունում, սրընթաց հարձակումով ճեղքեց հակառակորդի պաշտպանությունը Կերչից հարավ-արևելք և տիրեց կարևոր մարտավարական նշանակություն ունեցող 34,0 բարձունքին: Դիվիզիայի այս հաջողությունը իրական պայմաններ ստեղծեց թերակղզու կենտրոնական մասում թշնամու ուժերին հարված հասցնելու և դրանք ջլատելու համար: Ավագ հրամանատարական աստիճանները չհամարձակվեցին օգտվել բարենպաստ իրավիճակից: Այդ հաջողության կարևոր նշանակությունը պատկերացնելու համար շեշտենք միայն գլխավորը. Ղրիմի 1944 թ. օպերայիայում ռազմաճակատի հենց այս հատվածում հակառակորդին հասցվեց վճռական ու մահացու հարվածը:

Մարտերում դիվիզիայի հմուտ ղեկավարման համար ԽՍՀՄ ԺԿԽ 1943 թ. դեկտեմբերի 21-ի որոշմամբ դիվիզիայի հրամանատար Նվեր Գևորգի Սաֆարյանին շնորհվեց գեներալ-մայորի վինվորական կոչում:

1944 թ. հունվարի 23-ից մինչև 31-ն ընկած ժամանակամիջոցում դիվիզիան Կերչում ծանր մարտերով անցավ Կատերլեպ գետը, պալիորեն բարելավեց կորպուսի և բանակի զորքերի վիճակը և բարենպաստ պայմաններ ստեղծեց Միհրդադատ լեռը գրոհելու համար:

89-րդ դիվիզիան մինչև ապրիլի երկրորդ տասնօրյակը, բացի հարձակողական գործողություններ ծավալելուց, մասնակցում էր ամբողջ թերակղզում պաշտպանության գոտիների ըստեղծմանը:

Ղրիմի 1944 թ. օպերայիան իրականացվեց ապրիլի 8-ից մինչև մայիսի 12-ն ընկած ժամանակամիջոցում:

Ապրիլի 8-ին հարձակման անցան 4-րդ ՈՒկրաինական ռազմաճակատի, իսկ ապրիլի 11-ի գիշերը՝ Առանձին մերձծովյան բանակի զորքերը: Վերջիններս նույն օրն իսկ ապատագրեցին Կերչ քաղաքը: 89-րդ դիվիզիան ապրիլի 11-ից

մինչև 30-ը հետապնդում էր հակառակորդին՝ հաջորդաբար անցնելով հետևյալ բնակավայրերով՝ Իվանովկա—Միխայլովկա, Կոջալար—Կենեգեյ, Ղրիմ-Շիբան—Կոյ-Ասան, Հին Ղրիմ, Կարասուբազար—Բեշ-Տերեկ, Բապարչիկ—Բիյուկ-Սյուրեն, Կամարի, Կադիկովկա և դեպի Խերսոնես հրքվանդան:

89-րդ դիվիզիան Մերձծովյան բանակի 3-րդ լեռնահրաձգային կորպուսի կազմում, գտնվելով գլխավոր հարվածի ուղղությունում, կարևոր դեր խաղաց տիրապետող դիրք ունեցող ամրացված Գորնայա լեռանը տիրելու գործում, որի անկումով հիմնավորապես խարխվեց Սևաստոպոլից հարավ թշնամու պաշտպանությունը և իրական պայմաններ ստեղծվեցին հակառակորդի սևաստոպոլյան խմբավորումը հարավ-արևմուտքից թևանցելու համար:

Ղրիմի ապատագրման խորհրդային զորքերի օպերացիան տևեց 35 օր, իսկ Սևաստոպոլի գրոհը՝ 3 օր (1944 թ. մայիսի 7—9):

ԳԳՀ հրամանով այլոց շարքում 89-րդ դիվիզիայի 390-րդ և 400-րդ հրաձգային գնդերին շնորհվեց «Սևաստոպոլյան» պատվավոր անվանումը: Բացի այդ, Կերչի և Սևաստոպոլի ապատագրման գործում հայ զինվորների ցուցաբերած արիության ու հերոսության համար ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1944 թ. ապրիլի 24-ի և մայիսի 24-ի հրամանագրերով դիվիզիան պարգևատրվեց համապատասխանաբար Կարմիր աստղի և Կարմիր դրոշի շքանշաններով: Երբեմնի «սովորական» հրաձգային դիվիզիան սկսեց կոչվել 89-րդ Հայկական Ռամանյան Կարմրատրոշ Կարմիր աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիա: Ղրիմի ապատագրման մարտերում ցուցաբերած արիության ու խիզախության համար դիվիզիայում մինչև 1944 թ. վերջը կատարվեց շքանշաններով ու մեդալներով 14577 պարգևատրում, իսկ Խորհրդային Միության հերոսների թիվը երեքից հասավ ութի: Սևաստոպոլի ապատագրման ժամանակ ցուցաբերած հերոսության համար ավելի ուշ հերոսի կոչման արժանացան Ադին Հարությունի Հարությունյանը, Սեմյոն Կարապետի Բաղդասարյանը, Հարություն Ռուբենի Սկրաչյանը, Վարդգես Արշակի Ռոստոմյանը, Խորեն Արմենակի Խաչատրյանը:

1944 թ. օգոստոսի վերջերից մինչև սեպտեմբերի կեսերը դիվիզիան 16-րդ հրաձգային կորպուսի կազմում երկաթուղային տրանսպորտով Ղրիմից տեղափոխվեց Բրեստի, Լյուբլինի և Պուլավայի մերձակայքը՝ վիսլա-օդերյան ռազմավարական հարձակողական օպերացիային նախապատրաստվելու և մասնակցելու համար:

Այդ օպերացիան իրականացվեց 1945 թ. հունվարի 12-ից մինչև փետրվարի 3-ն ընկած ժամանակամիջոցում:

89-րդ դիվիզիան 33-րդ բանակի 16-րդ, ապա 38-րդ հրաձգային կորպուսների կազմում հարձակման ընթացքում ապատագրել կամ նպաստել է ապատագրելու հետևյալ քաղաքները. Ռադոմ, Տոմաշով, Լոձ, Շադեկ, Կալիշ, Կոմին (Կոպմին), Բորկեն, Կուևտալ, Շմիգել, Վոլշտին, Կոպնիտց, Ցյուլիհաու, Մեսով, Օդերեկ, Ցիբինգեն, Ռամպիտց, Շվետիգ և այլն: Պետք է ասել, որ դիվիզիան առավել դաժան ու արյունահեղ մարտեր էր մղում հակառակորդի շրջապատված գործերը ոչնչացնելու համար Ռուսակի Բրուդի, Դյուտովի, Կարշևի, Միխարով-1-ի (-2-ի, -3-ի, -4-ի), Կոշմինի (Կոպմինի), Կոպնիտցի, Պոմերյիգի, Շմախտեն-հագենի, Մեսովի շրջաններում: Ընդ որում, հունվարի 29-ին դիվիզիայի առաջավոր զորամասերը, հետապնդելով նահանջող հակառակորդին, Կոպնիտցի շրջանում մտան ֆաշիստական Գերմանիայի տարածքը:

Այդ օպերացիայում հատկանշականն այն էր, որ 89-րդ դիվիզիան, սրընթաց առաջ շարժվելով, արագընթաց ու տևական մարտերի էր բռնվում այնպիսի հակառակորդի հետ, որը, երբեմն գտնվելով անելանելի վիճակում, դիվիզիայի մարտիկներին կատաղի դիմադրություն էր ցույց տալիս:

Վիսլա-օդերյան հարձակողական օպերացիայում համարձակ և վճռական գործողությունների և Վարշավա, Կալիշ, Ցյուլիհաու, Շվիբուս, Մեգերիտց և Լանդսբերգ քաղաքների ապատագրման համար Գերագույն գլխավոր հրամանատարը շնորհակալություն հայտնեց 89-րդ դիվիզիայի ողջ անձնակազմին:

Փետրվարի 16-ից մինչև ապրիլի 15-ը, գրտնրվելով օդերյան ռազմահենադաշտում՝ Ֆրանկֆուրտից 2 կմ դեպի հարավ, 89-րդ դիվիզիայի զինվորները ոչ միայն պահեցին, այլև կրկնակի ընդարձակեցին այն, ինչը հնարավորություն ընձեռեց բռնիչյան հարձակողական օպերացիան իրականացնելուց առաջ արագորեն այնտեղ տեղափոխելու երեք դիվիզիաների հիմնական ուժերը: Բացի այդ, ռազմահենադաշտի ընդարձակման ընթացքում դիվիզիայի հիմնական ուժերը պգալիորեն տեղաշարժվեցին դեպի նրա հյուսիսային մասը, և դա հիմք դարձավ այն բանի համար, որ ռազմաճակատի հրամանատարը փոխի իր որոշումը. նա զորամիավորման հարձակման ուղղությունը Լոսով—Ռոստոկից տեղափոխեց դեպի Ֆրանկֆուրտ—Բեռլին:

Բեռլինյան օպերացիան, որը խորհրդային զորքերն իրականացրին ապրիլի 16-ից մինչև



1945 թվականի պլակատ

Плакат 1945 года "Мы вошли в Берлин"

մայիսի 8-ը ժամանակահատվածում, վճռական ռազմավարական հարձակողական օպերացիա էր, որով նպատակ էր դրվում տիրել Բեռլինին, տապալել ֆաշիստական վարչակարգը և խորհրդային զորքերը դուրս բերել դաշնակից զորքերին ընդառաջ, էլբա գետով անցնող սահմանազատիչ գիծը:

Այդ օպերացիայի համար օգտագործվեցին 1-ին և 2-րդ Բելոռուսական և 1-ին Ուկրաինական ռազմաճակատների զորքերը՝ Խորհրդային Միության մարշալներ, համապատասխանաբար, Գ. Կ. ժուկովի, Կ. Կ. Ռոկոսսովսկու և Ի. Ս. Կոնևի հրամանատարությամբ:

33-րդ բանակի 38-րդ կորպուսի կազմում գործող 89-րդ դիվիզիան, գտնվելով կյուստ-

րինյան ռազմահենադաշտում, համագործակցելով 33-րդ բանակի 64-րդ, 383-րդ և 339-րդ դիվիզիաների զորամասերի հետ, ապրիլի 16-ին անցավ հարձակման:

Ապրիլի 23-ին, համագործակցելով 64-րդ դիվիզիայի զորամասերի հետ, 89-րդ դիվիզիայի վիվիդները գրավեցին Ֆրանկֆուրտի հարավարևմտյան ծայրամասը և սկսեցին հետապնդել հակառակորդին Բոսեն — Տրեպլին — Առնսդորֆ — Մյունխաբերգ — Շյունֆելդ — Բեռնաու — Բեռլինի հյուսիսում Ռայնիկենդորֆ շրջան ուղղությամբ, որի ընդհանուր երկարությունը հասնում է 100 կմ-ի:

64-րդ և 89-րդ դիվիզիաների կազմված 38-րդ կորպուսը, հասնելով Բեռնաու, անցավ 3-րդ հարվածային բանակի տրամադրության տակ: Կորպուսը ապրիլի 27-ին հյուսիսից մտավ Բեռլին, իսկ կեսօրից նրա դիվիզիաները պատրաստ էին հարձակման:

Բեռլինյան օպերացիայի 17 օր տևած մարտերից 89-րդ դիվիզիան Ցեչեշտովի և Ֆրանկֆուրտի մոտ մարտական գործողություններ է վարել 8 օր. Ֆրանկֆուրտի և Բեռլինի միջև՝ երկու օր, Բեռլինում՝ վեց օրից փոքր-ինչ ավելի: Ընդ որում, Բեռլինի համար մղվող մարտերում քաղաքի կենտրոնում հակառակորդի շրջապատված խմբավորման ոչնչացման համար կարևոր դեր ուներ 89-րդ դիվիզիայի կողմից Հումբոլդտյան քաղաքային այգու ամրոցի գրավումը: Ամրոցի անկումով, ըստ էության, սկսեց փլուզվել հակառակորդի պաշտպանությունը շրջապատված թշնամական խմբավորման հյուսիսային հատվածում: Բեռլինի համար մղված մարտերում 89-րդ դիվիզիան ապատագրել է ավելի քան 40 քաղաքային թաղամասեր՝ հիմնականում առաջ շարժվելով Բրունենշտրասեն փողոցով, 5-րդ հարվածային բանակի զորքերին ընդառաջ, որոնց հետ հանդիպումը տեղի ունեցավ Բեռլինի կենտրոնում՝ Ռայխստագի և Ռատուշայի միջև: Մայիսի 2-ին Բեռլինն ընկավ:

Վիսլա-օդերյան և բեռլինյան օպերացիաներում 89-րդ դիվիզիայի մարտիկների ցուցաբերած արիության ու խիզախության համար զորամիավորումում տեղի է ունեցել 11430 պարգևատրում շքանշաններով ու մեդալներով, իսկ մայրը Հրանտ Գևորգի Բաբայանին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Այսպիսով, մարտական գործողությունների ամբողջ ժամանակամիջոցում 89-րդ դիվիզիայում Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 9 մարտիկի, իսկ Գինևան Միսակի Ոպանյանը, Իսահակ Պողոսի Կարախանյանը, Վարպազատ Մակարի Կուլիկյանը, Աշոտ Գալուստի Մելքումյանը, Օսիպ Սահակի Օսիպովը, Սանասար Մեմ-

յոնի Սևոյանը, Քերոբ Պետրոսի Սերոբյանը և Իսրայել Գալուստի Ստեփանյանը պարզևատրվել են մարտական ծառայության բարձրագույն պարգևներով՝ «Փառքի» երեք աստիճանների շքանշաններով:

Պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում 89-րդ հրաձգային դիվիզիայում տեղի է ունեցել բոլոր աստիճանների վիճակորակների 75 հազար պարզևատրում:

Հակառակորդի դեմ մղված մարտերում կատարած հմուտ և վճռական գործողությունների համար դիվիզիայի ողջ անձնակազմին Գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններով շնորհակալություն է հայտնվել Թաման, Կերչ, Սևաստոպոլ, Վարշավա, Կալիշ, Լանդսբերգ, Մեկերիսոյ, Շվիբուս, Ցյուլիհաու, Ֆրանկֆուրտ և Բեռլին քաղաքների ապտագրման ու գրավման համար (ընդամենը 11 անգամ):

1945 թ. հունիսի սկզբին դիվիզիայի պորամասերում տարածվեց մի ուրախալի լուր. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության 1945 թ. մայիսի 28-ի հրամանագրով հայկական ազգային պորամիավորումը պարզևատրվել էր երրորդ՝ Կուտուլովի 2-րդ աստիճանի շքանշանով:

Դիվիզիայի անցած մարտական ուղին կազմում է ավելի քան 7000 կմ, որից 2750 կմ-ը՝ մարտերով:

Մայիսի 4-ի կեսօրին դուրս գալով Բեռլինից և կատարելով 4-օրյա հրթ հարավ-արևմտյան ուղղությամբ՝ դիվիզիան դուրս եկավ Էլբա գետի մոտ՝ Վիտենբերգի և Կուսիգի շրջակայքում:

Օգոստոսի սկզբին պորամիավորումը կենտրոնացված էր Էրկներ բեռնման կայարանում: Օգոստոսի 11-ին 89-րդ դիվիզիան ձեռնամուխ եղավ Գերմանիայից Հայաստան տեղափոխվելուն: Հոկտեմբերի 1-ին դիվիզիայի վերատեղաբաշխումը հիմնականում ավարտված էր:

Մարտերում փառաբանված 89-րդ Հայկական Թամանյան Կարմրադրոշ Կուտուլովի երկրորդ աստիճանի և Կարմիր աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի անունը հավերժացնելու նպատակով Երևանի քաղաքահայրը Հայաստանի մայրաքաղաքի փողոցներից մեկը կոչեց «Թամանցիների»: Բացի այդ, Երևանի փողոցներից մեկը կոչելով Նվեր Մաֆարյանի անունով, հայ ժողովուրդը դրանով իսկ հավերժացրեց և իր արժանավոր վավակի հիշատակը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Լրացավ 20-րդ դարի մեծագույն գոտեմարտում աշխարհի հզոր տերություններից մեկի՝ Խորհրդային Միության տարած հաղթանակի 50 տարին: Այդ հաղթանակը բախտորոշ նշանակություն ունեցավ շատ ժողովուրդների, այդ թվում հատկապես հայ ժողովուրդի համար: Հաղթանակի մեծությունը մեզ համար ընդգրծվում է նրանով, որ դա հաղթանակ էր շարագոծորեն ծավալվող մի հետադեմ ուժի՝ ֆաշիզմի նկատմամբ, որը հենց այդ պատերազմի ընթացքում կատարեց դարի երկրորդ մեծ ցեղասպանությունը՝ հրեա ազգի նկատմամբ: Դարի առաջին մեծ ցեղասպանությանը ենթարկված հայ ժողովուրդի համար այդ հանգամանքն առանձնահատուկ նշանակություն ունի, առանձնահատուկ իմաստ է հաղորդում հաղթանակի գործում նրա ծանրակշիռ ավանդին:

Դրա հետ մեկտեղ գիտնականները շարունակում են խորհել Երկրորդ համաշխարհային պատերազմի դասերի գիտական իմաստավորման շուրջ: Մի շարք դեպքերում հետապոտողների վրա շարունակում է ճնշել Հայրենական մեծ պատերազմի արդյունքները անցյալի քաղաքական-գաղափարախոսական դիրքերից գնա-

հատելու մտայնությունը: Նման վիթխարի մասշտաբի հորեղաններն իրենց հետ բերում են հաղթանակի էության, նրա նպատակների, պատճառների, իմաստի և գնի ավելի խոր բացահայտման սպասում: «Հաղթանակի գինը»՝ որպես պատերազմի արդյունքների իպոստասներից մեկը, կարող է դիտվել իբրև ոչ միայն ձեռքբերումների, այլև կորուստների սոցիալական հանրագումարի գնահատման հնարավոր ամբողջացնող չափանիշներից մեկը:

«Հաղթանակի գնի» գիտական իմաստավորումը մեր ընթերցողների համար այժմեական է և այն բանի կապակցությամբ, որ մեր երկիրն ստիպված մասնակցում է Ադրբեջանական Հանրապետության կողմից չհայտարարված պատերազմին: Տվյալ հիմնահարցի ըմբռնումը բացառիկ նշանակություն ունի գիտակցելու համար մեր ժողովուրդի ճակատագիրը ոչ միայն գոյատևման, այլև այն տեսանկյունից, թե նա ինչպես կարող է արժանապատվորեն ներգրավվել համաշխարհային ընկերակցության առաջադիմական զարգացման մեջ: Մենք պարտավոր ենք հաղթանակի գնով չափակցել այն վերականգնելը, որոնք պահանջվում են ապահովելու

համար Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը, ինչպես նաև աջակցելու համար Լեռնային Ղարաբաղում մեր եղբայրների արդարացի պայքարին:

Եթե խոսելու լինենք հաղթանակի գնի մասին կորուստների ուղղակի ընթերցմամբ, ապա համառոտակի կարելի է ուրվագծել հետևյալ նահատակաբանությունը:

Հայ ժողովուրդը պատերազմ ուղարկեց ավելի քան կես միլիոն զինվոր՝ իր տղամարդ զավակների համարյա ամբողջ ծաղիկը: Նրանցից գոհվեցին 200 հազարը, այսինքն՝ մոտ 40 տոկոսը: Մեր փոքրաթիվ ժողովրդի համար տվյալ կորուստների գինն անշուշտ աղետալիորեն մեծ է: 200 հազար երիտասարդ կյանքի կորուստը ինքնին վերցված ցնցող փաստ է: Բայց դա միաժամանակ նշանակում էր 200 հազար խեղձած ընտանիք, այդ կորուստը դարձավ ամբողջ հայ ժողովրդի խոր ու անբուժելի վերք, եթե հաշվի առնենք գերդաստանային կապերի ավանդաբար կարևոր տեղը հայերի էթնոմշակույթում: Դա նաև մի ծանր կասեցնող հարված էր ազգի ժողովրդագրական ռեսուրսին, որ առաջացրեց անլրացանելի բաց մեր ազգաբնակչության վերարտադրության մեջ: Իհարկե, տվյալ ակնարկն ունի իր շարունակությունը...

Սակայն հաղթանակի գինն անշուշտ ունի բավմանափ սոցիալ-փիլիսոփայական և քաղաքագիտական բովանդակություն: Առօրեական գիտակցությունը, որը հակված է քաղաքական և ռազմական պատմության հերոսական և ողբերգական էջերի անձնավորված արտացոլման, հորեյլանների տոնման ժամանակ ակտիվացնում է հիշողությունը հերոսների ու հակահերոսների գրոտենակային կերպարների մեջ: Եվ մեր դեպքում վետերանների և նրանց շնորհակալ զավակների ու թոռների շուրթերին հերոսական նոր հնչեղություն են ձեռք բերում հայ մարշալների ու գեներալների, շարքային զինվորների ու նրանց այլազգի զինընկերների անունները:

Մեր հանդեսում հրապարակված հոդվածներում ընդհանրապես պատկերացում է տրրված Երկրորդ համաշխարհային պատերազմում տոնած հաղթանակում հայ ժողովրդի ավանդի մասին, ավանդ, որի որակական բնութագրերը արտացոլում են հայ զորավարների և զինվորների ոչ սովորական, երբեմն էլ բացառիկ կարևոր մասնակցությունը վճռական ճակատամարտերին, բոլոր զորատեսակների, զորամասերի և ստորաբաժանումների ղեկավարման վրձնորոշ հանգույցներում, Հայրենական ռազմաճակատներում, եվրոպական երկրների պարտիզանական պայքարում և Դիմադրության շարժումներում, հակահիտլերյան դաշնադրության

անդամ դաշնակից երկրների բանակներում:

Ճաշիվմի դեմ պայքարի դրոշի շուրջ համախմբված դաշնակից երկրների և ԽՍՀՄ ժողովուրդների զինվորական եղբայրությունը ներկայացնող իսկական հերոսների անունների հետ ժամանակ առ ժամանակ հնչում են խորհրդային պրոպագանդայի կողմից գերուռձայնված փառախոսություններ Ստալինի հասցեին՝ որպես «մեր բոլոր հաղթանակների ռգեշնչողի և կազմակերպչի»: Հաղթանակում Գերագույն գլխավոր հրամանատարի դերի արդարացի գնահատականներում երբեմն արտահայտվում է մորմոքի տարբեր չափով ռազմաօդային զորավորումը «երկաթե կամքի և կարգ ու կանոնի», ուրեմն և պատերազմի նախապատրաստման և ավարտման գործը ղեկավարած, «ժողովուրդների հոր և առաջնորդի» վարչակարգի նկատմամբ: Տվյալ գնահատականների միջև հակասությունները, դրանց բավականաչափ տարածվածությունը ազդանշում են հաղթանակի գնի հիմնահարցի գոյությունը, որի լուծումը գիտական խոր ուսումնասիրության կարիք է պզում «ժողովրդական սխրանքի» և «ստալինականության» արտերևույթների միջնուղային հետապոստությունների առումով:

Ակներև է, որ խաղաղ ժամանակի սոցիալական կյանքի տարբեր դրսևորումների վրա ռեժիմային վերահսկողության և խորհրդային հասարակության, առավել ևս պատերազմի ղեկավարման ծայր աստիճան կենտրոնացման առնչությամբ Ստալինի դերը հաղթանակի գործում չի կարող անտեսվել: Խոսքը վերաբերում է հաղթանակի ձեռքբերման գործում Ստալինի և ստալինականության դերի պարադոքսային հիմնահարցի գիտական ուսումնասիրությանը:

Դեռևս պրոպագանդիստական հաղթական էֆֆորիայի կարծրատիպերով որոշակի չափով բեռնված գիտական գնահատումների կշռադատվածությունը ենթադրում է ընդհանրապես ստալինյան վարչակարգի էության և հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի նախապատրաստման և վարման գործընթացում այդ էության դրսևորման մեջ հերոսականի և քրեականի պարադոքսային միահյուսման արտերևույթի բացահայտումը: Իր գիտական իմաստավորմանն է սպասում պատերազմի կառավարման ստալինյան պետական մեքենայի գործունեության այդ պարադոքսը ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքին քաղաքական չափումներով:

Այստեղ մենք կփորձենք տալ այդ պարադոքսի մեր տեսակետից հիմնական կողմերի ուրվագիծը:

Հիտլերականության հետ ստալինականու-

թյան փաստացի մեղաակցությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման գործում՝ 1939 թ. Լեհաստանի վրա համատեղ հարձակման և նրա բաժանման միջոցով. Կատինում լեհական սպայակույտի ընտրանու ստոր սպանությունը: Եվ միննույն ժամանակ՝ մարդկության համար վտանգ ներկայացնող ֆաշիզմի դեմ պայքարում Ստալինի դաշնակցային համագործակցությունը արևմտյան ժողովրդավարության ղեկավարների հետ:

Ներքին քաղաքականության ասպարեկում ստալինյան պետության կողմից ԽՍՀՄ քաղաքացիների մեծամասնության հաջող մոբիլիզացումը հոգևոր ստրկությամբ և եղեռնով սպառնացող ֆաշիստական ռեալ վտանգի առջև հայրենիքի անձնագրի պաշտպանության: Իսկ մյուս կողմից, սեփական քաղաքացիների հակամարդասիրական դիմապրկումը ռեժիմային բարոյական և մտավոր բռնադատման ճնշման տակ:

Երկրի մասնագիտական, ադա թվում և զինվորական ընտրախավի պսակազերծումը և ոչընչացումը ֆաշիզմի կողմից պատերազմին բացահայտորեն նախապատրաստվելու ժամանակ:

ԳՈՒՎԱԳ-ում տանջված կամ խոշտանգումների հետևանքով, անտանելի պայմաններում մահացած հազարավոր հարազատների և բարեկամների ան-

մեղությունը գիտակցելու պատճառով Մեծ պատերազմի բազմաթիվ զինվորական և քաղաքացիական մասնակիցների հոգեբանական ընկրճվածությունը:

Միջազգային-իրավական պաշտպանությունից միլիոնավոր խորհրդային ռազմագերիների պրկումը ստալինականության կողմից. Իոսիֆ Ջուղաշվիլին նրանց դավաճան հայտարարեց և ֆաշիստական համակենտրոնացման ճամբարներից հենտո արտաքսեց խորհրդային ճամբարներ և բանտեր...

Եզրափակելով՝ խմբագրությունը հույս է հայտնում, որ մեր մասնագետները Հայրենական պատերազմի, մեծ հաղթանակի վերաբերյալ իրենց հետագա աշխատություններում պատշաճ ուշադրություն կդարձնեն այստեղ նշված տեսանկյուններին՝ ժամանակակից խստիվ գիտական չափանիշներով անյայտի վերախմաստավորման, վերագնահատման ոգով: Մենք պատրաստ ենք հրապարակելու այդպիսի հետազոտությունների արդյունքներն ամփոփող հոդվածներ:

Խմբագրությունը շնորհավորում է իր ընթերցողներին, Հայրենական պատերազմի բոլոր վետերաններին մեծ հաղթանակի 50-ամյակի առթիվ:

ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ (ՄԱՐԳԱՄԻՐԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ, ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ)

Հ. Ս. ԲՈՌՁԱՆԶՅԱՆ, գևտապետ, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր,
«Հայկական բանակ» հանդեսի գլխավոր խմբագիր,

Լինելով հանրաքվեի և քաղաքական բանակցությունների միջոցով դարաբաղյան հակամարտության իմաստավորման ու լուծման ուղիների հետազոտողներից մեկը¹, հեղինակը սույն հոդվածում իր առջև խնդիր է դնում համակարգելու տարածաշրջանում իրավիճակի քաղաքական կայունացման անհրաժեշտությունն սկսած բոլոր կողմերի շահերի կառուցողական առաջնորդման հակամարտաբանական հիմունքները:

¹ Հեղինակը 1982–1983 թթ. (Լ. Ի. Բրեժնևի մահվանից հետո) Աֆղանստանում ԽՄԿԿ ԿԿ դեսպանորդ-խորհրդականի պարտականությունները կատարելիս ներգրավված է եղել ԱԳՀ կորպեր մտցնելու հետևանքների, ինչպես նաև առանձին ցեղային միությունների մարտական գործողությունների գոտում հակամարտությունների ստեղծման հնարավորությունների քաղաքագիտական վերլուծության գործում: 1988–1990 թթ., լինելով ՀԿԿ ԿԿ անդամ և ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր, պետք է դարաբաղյան հակամարտության լուծման քաղաքական-իրավական հնարավորությունների վերլուծությամբ: 1990–1992 թթ., Դիվանագիտական ակադեմիայի միջազգային հարաբերությունների ուսումնասիրման մեթոդաբանության կենտրոնի, Կառավարման ուսաստանյան ակադեմիայի սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունների կենտրոնի, ՌԳ ՁՈՒ-ի Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայի ռազմաքաղաքական գիտությունների ամբիոնի գիտնականների հետ համագործակցության մեջ, մասնակցել է տարածաշրջանային պինված հակամարտությունների կարգավորման ու լուծման պրոբլեմների միջնուղային ուսումնասիրմանը: 1990–1993 թթ. մասնակցել է նախկին ԽՍՀՄ և Աֆղանստանի տարածքում տեղի ունեցող պինված հակամարտությունների համեմատական հետազոտությունների փորձաքննությանը: Լինելով ԽՍՀՄ արտաքին-քաղաքական ասոցիացիայի գիտական խորհրդատու, միջազգային հարաբերությունների տեսության և մոդելավորման ուսաստանյան ասոցիացիայի գիտական քարտուղար, «Ռոսիա» շաբաթաթերթի քաղաքական մեկնաբան Անդրկովկասում՝ խորհրդատվական օգնություն է ցույց տվել ՌԴ-ում ՀՀ-ի մշտական ներկայացուցչությանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի մասնագետներին: Եղել է պինված հակամարտությունների գոտիներում, մասնակցել է միջազգային խաղաղարար բանակցություններին և միջազգային գիտական կոնֆերանսներին (տես *Котангжян Г. С., Ругенко И. П.* Вариантов не признаю, когда речь идет о Родине, Знамени и Чести, "Комсомольская правда", 2 февраля 1989 г.; *Котангжян Г. С.* Выход из тупика, "Коммунист", 14 июня 1989 г.; *его же.* Блокада... время игр?, "Коммунист", 21 ноября 1989 г.; *его же.* Противоправное право, "Коммунист", 13 июля 1989 г.; *его же.* Тонкая нить согласия, "Огонек", февраль 1991 г., N 6 и др.)

Տվյալ խնդրի լուծման համար անհրաժեշտ է պատերազմի մարդասիրական իրավունքի մեթոդաբանական գործիքակազմը քննել իրենց էությանը ու դրսևորման ձևերով դարաբաղյան հակամարտությանը նման պինված հակամարտությունների միջազգային-իրավական նույնականացման առավել լայն համատեքստում այդ գործիքակազմի նորմերի կիրառելիության տեսանկյունից: Խոսքն այն մասին է, որ այդ նորմերը կարող են ծառայել որպես գործիք ներքին ոչ միջազգային և միջազգային տեղական պատերազմների վիճակի որոշման, դրանց կարգավորման ու լուծման նկատմամբ քաղաքագիտական մոտեցումների մշակման համար:

Տվյալ մեթոդաբանությունը կկիրառվի, նախ, հակամարտության պինված փուլի վերլուծության համար, որը խիստ այժմեական է խաղաղարարության իրական ռեսուրսների իմաստավորման առումով, այնուհետև՝ դարաբաղյան ճգնաժամի ծավալման հիմնական փուլերի համակարգային քաղաքական-իրավական փորձաքննության ավելի լայն ուրվագծման համար: Որպես գիտակիրառական լրացում՝ հոդվածի մեջ մտցված է ԼՂՀ-ի և ԱդրՀ-ի միջև եղած հակամարտության կարգավորման և լուծման հայեցակարգի մի նախագիծ, որ հեղինակն առաջարկում է քաղաքական բազմակողմ բանակցություններում դիվանագիտական կիրառման համար:

* * *

Գններալ Գը Գոլը, նկարագրելով պատերազմը որպես մարդկության հավերժական ուղեկից, նշել է. «Ձենք օգտագործել է Լյուցիֆերը, բայց այն եղել է նաև հրեշտակապետի ձեռքին: Ձենքը եղել է երկշտաների արխությունը, ստահակների պատիվը, ստրուկների արժանապատվությունը... Ձենքը խեղել, բայց միաժամանակ և ձևավորել է աշխարհը: Ձենքը մարմնավորել է ամենայն լավագույնը և վատաբարագույնը՝ արատի մեջ թաղված կամ փառքով շողողացող: Ձենքի պատմությունը խայտառակության և գեղեկյու-

թյան պատմությունն է, մարդկության պատմությունն է»¹:

Պատերազմի մարդասիրական իրավունքը չի հետապնդում այն նպատակները, որոնք իրենց առջև դնում են պատերազմի մասին գիտությունը կամ պատերազմի միջազգային իրավունքը, որոնցից առաջինն ուսումնասիրում է պինված պայքարի օրենքները և բացատրում է հակամարտությունների մշտակայության պատճառները, իսկ երկրորդը պատերազմն օրենքից դուրս է հայտարարում և միևնույն ժամանակ ձգտում է մշակելու իր հռչակած այդ արգելքի պահպանման ուղիներն ու միջոցները: Պատերազմի մարդասիրական իրավունքն իր էությունը ավելի պրագմատիկ է. այն ընդունում է աշխարհում բռնության գոյության փաստը, և նրա գլխավոր նպատակն է որքան հնարավոր է խստիվ կարգավորել կողմերի ռազմական և ռազմաքաղաքական վարքը ծագած պինված հակամարտության ժամանակ: Ընդ որում մարդասիրական իրավունքը նաև նպաստում է, որ հակամարտության մասնակիցների մեջ որոշակի պատրաստակամություն առաջանա՝ չպատճառելու ավելորդ տանջանք, թույլ չտալու ռազմական անհրաժեշտությամբ չթելադրվող դաժան գործողություններ: Ու թեև խաղաղասիրական ոգու ձևավորումը փաստորեն պատերազմի մարդասիրական իրավունքի նպատակը չէ, բայց նրա անուղղակի արդյունքն է խաղաղ երկխոսության և հաշտարարության ընդհանուր տրամադրվածությունը:

Քաղաքականության և քաղաքագիտության բնագավառի գաղափարապաշտները, հանդես գալով աշխարհը պատերազմի արհավիրքներից պերժ պահելու օգտին, պատերազմի մարդասիրական իրավունքը համարում են անհուսալիորեն սահմանափակ: Իսկ սկեպտիկները համոզված են, որ բռնության մարդասիրականացումը և «նապարմի կուլտուրականացումը» իրենց հիմքում ուտոպիական են:

Ձինված հակամարտության մարդասիրական իրավունքն իր պրագմատիստական դիրքերն է պաշտպանում այս տեսակետների հանդեպ և ձգտում է կանխելու, խափանելու եթե ոչ բուն բռնությունը, ապա գոնե սաստիկ դաժանությունները և տանջանքները: Պատերազմի կամ պինված հակամարտության մարդասիրական իրավունքը ուտոպիա չէ, դա մի գիտաճյուղ է, որը հիմնված է չարիքներից փոքրագույնի քաղաքականությունը սնուցող իրատեսության և ռացիոնալիզմի վրա, մի քաղաքականություն, որը հմուտ կիրառման դեպքում ի վերջո որոշակի

շահույթ է բերում, քանի որ պատերազմի մարդասիրական և քաղաքական տեսանկյուններն անհամատեղելի չեն:

Սույն հոդվածում նպատակ չի դրվում տվյալ գիտաճյուղի շրջանակներում լիովին ընդգրկելու ռազմական քաղաքականության, ռազմագիտության և ռազմական պրակտիկայի պահանջների, ինչպես նաև պինված հակամարտությունների պոհերի իրավունքների պաշտպանության անհրաժեշտության միջև գոյություն ունեցող հակասությունների լուծման բազմազան տեսանկյունները: Բնեկով պատերազմի մարդասիրական իրավունքի էությունը՝ մենք կփորձենք ուրվագծել դարաբաղյան պինված հակամարտության քաղաքագիտական որակման տեսական-մեթոդաբանական և կիրառական հիմունքները 1949 թ. Ժնևյան համաձայնագրերի և 1977 թ. դրանց կից Լրացուցիչ արձանագրությունների լույսով, քանի որ այդ համաձայնագրերը և Լրացուցիչ արձանագրությունները կազմում են ընդհանրապես պինված հակամարտությունների և, մասնավորապես, հակագաղութային բնույթ կրող հակամարտությունների լուծման և կարգավորման ժամանակ կիրառվող իրավական նորմերի և սկզբունքների հիմնական համակցությունը:

Նախքան «Վարաբաղի շուրջ» քաղաքական բանակցությունների գիտական հիմունքների քննարկումը նպատակահարմար ենք համարում տալ պատերազմի մարդասիրական իրավունքի աշխատանքային սահմանումը: Համաձայն Միջազգային մարդասիրական հարցերով անկախ հանձնաժողովի նյութերի, մարդասիրական իրավունքը պինված բռնության հետ կապ ունեցող իրավիճակների պոհերին օգնություն ցույց տալուն և նրանց պաշտպանության նպատակներին ծառայող միջազգային-իրավական նորմերի հավաքածուն է: Ձինված հակամարտությունների վրա տարածվող մարդասիրական իրավունքի ավելի ծավալուն ձևակերպումը տրված է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽԿ) կողմից: Ըստ այդ սահմանման պատերազմի մարդասիրական իրավունքի նորմերն են «պայմանագրերով և սովորույթներով սահմանված այն միջազգային նորմերը, որոնք կոնկրետ կերպով նախատեսված են միջազգային կամ ոչ միջազգային պինված հակամարտություններով անմիջականորեն պայմանավորված մարդասիրական հիմնահարցերի լուծման համար և որոնք մարդասիրական բնույթի պատճառներով սահմանափակում են հակամարտության կողմերի իրավունքը՝ օգտագործելու պատերազմ վարելու մեթոդներ և միջոցներ իրենց ընտրությամբ կամ պաշտպանում են այն անձանց և սեփականությունը, որոնք այդ հակամարտու-

¹ Charles de Gaulle. Du prestige, "Revue militaire française", juin, 1931.

թյան հետևանքով տուժել են կամ կարող են տուժել»¹:

Այսպիսով, վիճված հակամարտության մարդասիրական իրավունքի էական առանձնահատկությունը նրա երկու փոխընդհանուր տեսանկյուններն են, որոնցից մեկը պայմանավորված է պատերազմի օրենքներով, մյուսը՝ մարդու իրավունքներով: Իհարկե, վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզելու մարդասիրական իրավունքի, պատերազմի օրենքների և մարդու իրավունքների միջև եղած տարբերությունը: Այստեղ հարկ է ընդգծել մարդու ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ իրավունքները, այդ թվում և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը որպես մեկ համակարգ դիտելու կարևորությունը: Նշենք, որ հակամարտությունների կարգավորման և լուծման հիմնահարցերի ուսումնասիրման ժամանակ տվյալ տեսանկյունների անջատ քննարկումը կարող է հանգեցնել սխալ եզրակացությունների և լուծումների:

Ժնևյան համաձայնագրերի և դրանց կից Լրացուցիչ արձանագրությունների համակարգը, լինելով միջազգային մարդասիրական իրավունքի օրինակարգված նորմերի մի համակություն, շահագրգռված կողմերին անվիճելի իրավական հիմքեր է ընձեռում միջազգային վիճված հակամարտությունների կարգավորման հիմնահարցերի կոլեկտիվ քննարկման համար:

Իր ներկա վիճակով դարաբաղյան վիճված հակամարտության նույնականացման համար կարևորագույն հիմք է նրա հակագաղութային բնույթի ճանաչումը, իսկ այդ բնույթը պայմանավորված է նոր առաջացած ադրբեջանական պետության կողմից Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ռազմական և քաղաքական ճնշումով, ընդամենն այստեղ Ադրբեջանն իր վրա է վերցնում գաղութարար մետրոպոլիայի դերը:

Ժնևյան համաձայնագրերին կից առաջին Լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի 4-րդ կետում ասված է. «Նախորդ կետում հիշատակված իրավիճակները (այսինքն՝ միջազգային վիճված հակամարտությունները) ներառում են այն վիճված հակամարտությունները, որոնցում ժողովուրդները պայքար են մղում գաղութատիրական օտար գերիշխանության և ռասիստական վարչակարգերի դեմ՝ իրացնելով ինքնորոշման իրենց իրավունքը, որն ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ և Միջազգային իրավունքի սկզբունքների հռչակագրում, սկզբունքներ, որոնք վերաբերում են պետությունների միջև բարեկամա-

կան հարաբերություններին և համագործակցությանը՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան»²:

Այսպիսով, միջազգային վիճված հակամարտությունների ժամանակ մարդասիրական նորմերի պահպանման մասին վերն ասվածը իր էությունը լիովին կիրառելի է նաև հակագաղութային ազգային-ապատագրական պատերազմների նկատմամբ: Տվյալ նորմի հիմքում դրված է գաղութարար երկրի՝ մետրոպոլիայի դեմ ինքնորոշվող ժողովրդի հակագաղութային վիճված հակամարտության՝ որպես միջազգային հակամարտության, նույնականացման իրավաբանորեն խստիվ ձևակերպված սկզբունքը:

Նշված նորմի մեջ արտացոլված է մետրոպոլիայի գաղութային ճնշման դեմ պայքարող ժողովուրդների ճանաչվելը համաշխարհային ընկերակցության կողմից որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ: Ժնևյան համաձայնագրերում ձևակերպված նույնականացման նորմերի համընդհանուր միջազգային-իրավական մասշտաբը հաստատված է ՄԱԿ-ի Գլխաժողովի կողմից 1973 թ. 3013 բանաձևում: Այս փաստաթղթում ամրագրված է այն նորմը, որ «գաղութատիրական և օտարերկրյա գերիշխանության և ռասիստական վարչակարգերի դեմ ժողովուրդների պայքարի հետ կապված վիճված հակամարտությունները պետք է դիտել որպես միջազգային վիճված հակամարտություններ՝ 1949 թ. Ժնևյան համաձայնագրերի իմաստով»³:

Հակագաղութային պատերազմների կապակցությամբ անհրաժեշտ է հաշվի առնել վիճված հակամարտության կողմերի մի շարք առանձնահատուկ վիճակներ:

Ձինված ազգային-ապատագրական հակամարտություններն իրենց սկզբնափուլում սովորաբար հանդես են գալիս որպես անվուզաչափ (ոչ սիմետրիկ) հակամարտություններ: Խոսքը վերաբերում է գաղութարար պետության և ազգային-ապատագրական ուժերի ղեկավար կենտրոնների միջև ռազմաքաղաքական հարաբերությունների իրական դինամիկայի քաղաքագիտական որակման անհրաժեշտությանը: Ռազմական տեսանկյունից այս անվուզաչափությունն արտահայտվում է վիճված պայքարի միջոցների բնագավառում կողմերի բացարձակ անհավասարությամբ, հատկապես օդում պետության կրակային հզորության և կանոնավոր վիճվորական

² "Дипломатическая конференция по вопросу о подтверждении и развитии международного гуманитарного права, применяемого в период вооруженных конфликтов. Заключительный акт", Женева, 1977, с. 126.

³ "Резолюции, принятые Генеральной Ассамблеей ООН на двадцать восьмой сессии", т. 1 (18 сентября – 18 декабря 1973 г.), Нью-Йорк, 1974, с. 184.

¹ "The efforts of ICCR in the case of violations of international humanitarian law", The International Review of The Red Cross, March-April 1991.

կազմակերպվածքի առումով: Կենսունակությունը սահպանելու համար հակազաղութային պայքարի կենտրոնները սովորաբար ստիպված են լինում դիմել պարտիզանական պատերազմի:

Հակազաղութային պինված հակամարտության կողմերի միջև հարաբերությունների ռազմական և քաղաքական անվուզաչափության վիճակի ձգձգման դեպքում սովորաբար բարդություններ են ծագում այդ հակամարտության կանոնակարգման ժամանակ: Ապազաղության և ՄԱԿ-ի կազմում անկախ պետությունների ընկերակցության ինտենսիվ ընդլայնման դարաշրջանի ազգային-ապատագրական պատերազմների փորձը վկայում է հակազաղութային պինված հակամարտությունների կողմերի միջև, հատկապես նրանց անվուզաչափ վիճակների փուլում, փոխհարաբերությունների միջազգային-իրավական և քաղաքական կարգավորման համակարգում տեղ գտած լուրջ բացերի մասին:

Ժնևյան համաձայնագրերին կից Լրացուցիչ արձանագրությունների արժանիքներից մեկն այն է, որ դրանցում սահմանվում են հակազաղութային բնույթի պինված հակամարտությունների քաղաքական և ռազմական դիմամիկայի բոլոր, այդ թվում և այսպես կոչված «պարտիզանական» փուլերում այդ հակամարտությունների միջազգային-իրավական նույնականացման նորմերը և կարգավորման ու լուծման սկզբունքները:

Մեր օրերում գաղութատիրության դեմ պայքարող ժողովուրդների իրավասուբյեկտության ճանաչումը պայմանավորված է հակազաղութային պայքարով, իսկ ինքնորոշվող ժողովուրդն իրավունք ունի այդ պայքարի ընթացքում ստեղծելու իշխանության համապատասխան ազգային մարմիններ: Եթե ինքնորոշվող ժողովրդի կամահայտությունն իրացվում է ժողովրդավարական ուղիով, ապա իշխանության օրինական մարմինների ստեղծման ընթացքում հակազաղութային պինված հակամարտության կողմերի միջև եղած քաղաքական անվուզաչափությունը փաստորեն հաղթահարվում է նրանով, որ այդ հակամարտությունը վերածվում է հակամարտության՝ նորաստեղծ անկախ պետության և նախկին գաղութարար մետրոպոլիայի միջև: Գրանով իսկ ինքնորոշված ժողովուրդը դառնում է միջազգային իրավունքի սուբյեկտ և որպես այդպիսին ձեռք է բերում ազգային պետության բոլոր իրավունքները և պարտականությունները: Այդ է հակազաղութային պինված հակամարտության դիմամիկայի քաղաքագիտությունը, երբ կողմերի քաղաքական վիճակի անվուզաչափությունը վերածվում է դիմակայման վուզաչափության:

Հակազաղութային պինված հակամարտության նման վարգայման դեպքում նրա կողմերի վիճակի շարժումն անվուզաչափությունից դեպի վուզաչափություն պարունակում է ռազմական և ռազմաքաղաքական հույժ կարևոր բաղադրամասեր: «Մետրոպոլիայի կողմից կանոնավոր պատերազմ՝ ուղղված հակազաղութային պայքարի ճնշմանը» — «հակազաղութային շարժման կողմից պարտիզանական պատերազմ մետրոպոլիայի ճնշման դեմ» հարաբերությունը փոխակերպվում է «գաղութարար մետրոպոլիայի կողմից կանոնավոր պատերազմ ինքնորոշված նորանկախ պետությանն իր կազմում պահելու համար» — «գաղութարար մետրոպոլիայի դեմ նորանկախ պետության կանոնավոր պատերազմ ինքնորոշված ժողովրդի ազգային անվտանգության պահպանման համար» հարաբերության: Համապատասխան կերպով ձևավորվում է հակազաղութային պինված հակամարտության ռազմաքաղաքական վուզաչափությունը ի դեմս այդ դիմակայության երկու կողմերի կանոնավոր պինված ուժերի և դրանց կառավարման պետական-քաղաքական հաստատությունների:

Հակազաղութային պայքարում ազգային նոր պետության ժողովրդավարական կազմավորման գործում ինքնորոշման իրենց իրավունքն իրականացրած ժողովուրդների միջազգային իրավասուբյեկտության հիման վրա հաստատվում է նախկին մետրոպոլիայի գաղութատիրական գերիշխանության դեմ պինված պայքարի օրինականությունը: Ներկայումս գոյություն ունեն զգալի թվով միջազգային-իրավական ակտեր, որոնցում ամրագրված է հակազաղութային շարժումների կողմից պինված ուժի կիրառման օրինականությունը: Այսպես, ՄԱԿ-ի Գլխաժողովի 20-րդ նստաշրջանը ճանաչեց «այն պայքարի օրինականությունը, որը ինքնորոշման և անկախության իրենց իրավունքներն իրականացնելու համար մղում են գաղութային լծի տակ գտնվող ժողովուրդները»¹: Ի լրումն դրա ՄԱԿ-ի Գլխաժողովի 25-րդ նստաշրջանը, հաստատելով «հանուն ինքնորոշման իրենց իրավունքի իրականացման օտար գերիշխանության ներքո գտնվող գաղութային ժողովուրդների մղած պայքարի օրինականության իր ճանաչումը», ամենայն վճռականությամբ հայտարարեց, որ ժողովուրդներն այդ իրավունքը կարող են իրականացնել «իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր անհրաժեշտ միջոցներով»²:

¹ «Резолюции, принятые Генеральной Ассамблеей ООН на двадцатой сессии», Нью-Йорк, 1966, с. 55

² «Резолюции, принятые Генеральной Ассамблеей ООН на двадцать пятой сессии (15 сентября - 17 декабря 1970 г.)», Нью-Йорк, 1971, с. 5.

Սահմանափակվելով նախկին գաղութարար պետության գաղութատիրական գերիշխանության դեմ պայքարող ժողովուրդների կողմից պինված ուժերի օգտագործման իրավունքի օրինականության օգտին վերը բերված փաստարկներով՝ ընդգծենք գաղութարար մետրոպոլիայի կանոնավոր բանակի կողմից ինքնորոշված ժողովրդի կամահայտության պինված ճնշման դեմ այդ ժողովրդի կանոնավոր հակապոման օրինականությունը:

Մարդասիրական-իրավական բաժնի վերջում կարելի է պնդել, որ հակագաղութային պինված պայքարի օրինականության այդ միջազգային-իրավական փաստարկման վրա է հիմնվում ԼՂՀ ռազմական հայեցակարգը: Այն հիմնված է ոչ միայն ԼՂՀ-ի կողմից ինքնապաշտպանության ազգային բանակի ստեղծման, այլև կանոնավոր պինված ուժերի կիրառման օրինականության վրա, թեպետև ընդհանուր իրավական առումով արգելված է ուժի կիրառումը միջազգային հարաբերություններում: Տվյալ միջազգային և պետական իրավագործությամբ հիմնավորված է իր ազգային և միջազգային անվտանգության ապահովմանն ուղղված ԼՂՀ ռազմական քաղաքականությունը:

Ղարաբաղյան հակամարտության պինված փուլի մարդասիրական-իրավական և ռազմաքաղաքական վերլուծության արդյունքները կարող են գիտակիրառական նշանակություն ունենալ ադրբեջանա-ղարաբաղյան կանոնավոր ռազմական հակակայության ռազմաքաղաքական սանեցման համար: Վերը բերված վերլուծությունն այդ առումով ավելի այժմեական է հակամարտության կարգավորման գիտական ապահովման համար: Խաղաղարարության տվյալ նախնական փուլից հետո դրված է հակամարտ կողմերի միջև եղած արմատական հակասությունների լուծման ավելի բարդ խնդիրը: Հակամարտության լուծմանն ուղիների որոնման գիտախորհրդական ուղեկցումը ենթադրում է ղարաբաղյան ճգնաժամի ծավալման հիմնական փուլերի վերլուծության քաղաքական-իրավական մասշտաբայնացում:

Շարադրված նկատառումները կարող են ներգրվել հակամարտաբանական քաղաքական-իրավական փորձաքննության հետևյալ համատեքստի մեջ: Ղարաբաղյան հակամարտությունը քննվում է ներքին ոչ միջազգային քաղաքական հակամարտությունից միջազգային պինված հակամարտության փոխակերպվելու դինամիկայում: Քննվող հակամարտության գործընթացի առաջին փուլում ԼՂԻՄ-ի ժողովուրդը ներկայացուցչական իշխանության մարզային մարմնի միջոցով հայտնեց Հայկական ԽՍՀ-ի հետ

միավորվելու իր կամքը՝ ԽՍՀՄ սահմանադրության համաձայն դիմելով ԽՍՀՄ, ԱդրբՍՀ և ՀԽՍՀ Գերագույն խորհուրդներին ԼՂԻՄ-ի մարզխորհրդի որոշումը քննարկելու խնդրանքով: ԱդրբՍՀ կազմից ԼՂԻՄ-ի դուրս գալու վերաբերյալ ԱդրբՍՀ Գերագույն խորհրդի բացասական որոշման կապակցությամբ միութենական դաշնության տվյալ սուբյեկտների միջև հարաբերությունները քաղաքական հակամարտության տեսք ստացան:

Քանի որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերաբերյալ ԽՍՀՄ սահմանադրության նորմը ամրապնդված չէր ԽՍՀՄ կազմից միութենական դաշնության սուբյեկտի (մեր դեպքում՝ ԼՂԻՄ-ի) դուրս գալու համապատասխան իրավանորմատիվ մեխանիզմով, տվյալ հակամարտությունը օրինական լուծում չստացավ և վերածվեց ներքին ոչ միջազգային հակամարտության: Հակամարտության «ներքին ոչ միջազգային» չափումը ձևավորվեց ոչ միայն ԱդրբՍՀ, այլև ԽՍՀՄ իշխանությունների հետ ԼՂԻՄ-ի ժողովրդի՝ որպես ինքնորոշման սուբյեկտի, կայուն հակամարտային հարաբերությունների մեջ:

Հանուն ինքնորոշման ԼՂԻՄ-ի ժողովրդի պակասաթանցի շարժման դեմ ԱդրբՍՀ-ում տեղաբաշխված ԽՍՀՄ ՁՈՒ-ի կիրառումից հետո հակամարտությունը չպինված հակամարտությունից վերածվեց ներքին ոչ միջազգային պինված հակամարտության:

Հարկ է հատուկ ուշադրություն դարձնել ղարաբաղյան հակամարտության որակման նկատմամբ եղած մոտեցումներում սկզբունքային շրջադարձի կարևորությունը՝ հաշվի առնելով 1990 թվականին «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի ընդունումը և ԽՍՀՄ քաղաքական փլուզման գործընթացի ծավալումը: Հիշեցնենք, որ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին միութենական հանրապետության կողմից հարց բարձրացվելու դեպքում (ԱդրբՍՀ Գերագույն խորհուրդն ինքնիշխանության մասին սահմանադրական ակտն ընդունել է դեռևս 1989 թ.) նշված օրենքը ինքնավար կազմավորումներին հնարավորություն էր ընձեռում ինքնորոշվելու որպես միութենական դաշնության ինքնուրույն սուբյեկտներ՝ ընդհուպ մինչև այն միութենական հանրապետությունների կազմից դուրս գալը, որոնց մեջ նրանք մտնում էին համաձայն ԽՍՀՄ սահմանադրության: Քանի որ այդ պահին ԽՍՀՄ սահմանադրությունը ԼՂԻՄ-ի ԽՍՀՄ և ԱդրբՍՀ կազմում գտնվելու մասով դեռ անփոփոխ էր, ինչպես նաև ժողովուրդների ինքն-

րոշման իրավունքի սահմանադրական նորմը կոնկրետացվեց վերոհիշյալ օրենքի իրավաբանական մեխանիզմում, այսպեւ լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ձեռք բերեց օրինական հիմքեր (որոնք մինչ այդ չկային ԽՍՀՄ-ում) իր քաղաքական կամքը օրինաչափորեն արտահայտելու և ամրագրելու իրավական-պետական կառույցների միջոցով:

Հակամարտության գործընթացի քաղաքագիտական վերլուծությունը տվյալ փուլում թույլ է տալիս առանձնացնել հետևյալ քաղաքական և իրավաբանական հիմնական փաստերը.

— ԼՂԽՄ-ում, հաշվի առնելով ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին ԱդրՄՍՀ-ի հռչակած մտադրությունը, ինչպես նաև ԱԳՊԿ պարտությունից հետո ԽՍՀՄ լուծարման քաղաքական գործընթացի ծավալումը, սահմանադրական հիմունքներով և միջազգային դիտորդների հսկողությամբ 1991 թ. նոյեմբերին անցկացվեց հանրաքվե Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակման և ԼՂՀ կազմավորման մասին, միաժամանակ ժողովրդավարական ընտրությունների միջոցով ստեղծվեցին ԼՂՀ օրինական իշխանությունները.

— նույն թվականի նոյեմբերին կազմավորվեց ԱդրՀ-ն.

— 1991 թ. դեկտեմբերին լուծարվեց ԽՍՀՄ-ը:

Այսպիսով, ԽՍՀՄ սահմանադրության սուբյեկտ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովուրդը 1991 թ. նոյեմբերին, ԽՍՀՄ լուծարման ընթացքում, ստեղծեց իր անկախ ազգային պետությունը՝ ԼՂՀ-ն: Որպես արդյունք Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը օրինականորեն հաղթահարեց տարածքի ամբողջականության սկզբունքը ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ ԱդրՄՍՀ-ի նկատմամբ: Դրա հետ մեկտեղ ԼՂՀ-ն ստացավ միջազգային իրավական հիմք տարածքի ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության սկզբունքները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես նորաստեղծ անկախ պետության նկատմամբ կիրառելու համար:

Նախկին ԱդրՄՍՀ տարածքում երկու անկախ պետությունների՝ ԼՂՀ և ԱդրՀ, կազմավորման և այդ ակտերին հաջորդած ԽՍՀՄ փլուզման կապակցությամբ լուծարված ԽՍՀՄ-ին, ինչպես և ԱդրՄՍՀ-ին ԼՂՀ ժողովրդի, տարածքի և իշխանությունների ենթարկման ներքին քաղաքական հարաբերությունները օրինական հիմքով դադարեցվեցին:

Քննվող փաստերի համախումբը վկայում է, որ 1991 թ. վերջում ստեղծվել են Ղարաբաղի ժողովրդի և իրենց գոյությունը դադարեցրած ԽՍՀՄ ու ԱդրՄՍՀ իշխանությունների միջև ներքին ոչ միջազգային պինված հակամարտության

օրինական արմատական լուծման իրական իրավաբանական և քաղաքական նախադրյալներ:

Սակայն ԼՂՀ ազգային-պետական կազմավորմանը ԱդրՀ-ի կողմից հետագա քաղաքական և ռազմական դիմագրավման կապակցությամբ ԼՂՀ և ԱդրՀ ժողովուրդների փոխհարաբերություններում խաղաղարարության այդ պատմական հնարավորությունը տվյալ փուլում չիրացվեց:

Հենց այն, որ տվյալ եզակի հնարավորությունը չօգտագործվեց նորաստեղծ ԱդրՀ իշխանությունների կողմից, պատճառ դարձավ, որ ԽՍՀՄ սահմանադրության (միութենական դաշնության) սուբյեկտների միջև ներքին ոչ միջազգային պինված հակամարտությունը վերածվի միջազգային պինված հակամարտության երկու իրավահավասար նորաստեղծ պետությունների՝ ԼՂՀ-ի և ԱդրՀ-ի միջև:

Գարևոր է նշել, որ դրա հետևանքով դարբաղյան հակամարտության քաղաքական չափումը ստացավ էպպես այլ կողմնորոշում: Ղարաբաղյան հակամարտությունը իր «վերամիացումային» ուղղվածությունը փոխեց անկախ ազգային-պետական կողմնորոշման:

Ինչպես ապացուցվեց վերը, այդ կողմնորոշումը հակազդության բնույթ ստացավ այն փուլում, երբ Լեռնային Ղարաբաղի պետությունն ստիպված էր հակազդել Ադրբեջանական Հանրապետության պինված ագրեսիային, որի ընթացքում խախտվեցին ԼՂՀ սահմանների անձեռնմխելիությունը և տարածքի ամբողջականությունը:

* * *

Միջազգային պինված հակամարտությունների նույնականացման մեթոդաբանությունը դարբաղյան հակամարտության կարգավորման խնդիրների տեսանկյունից ժամանակին փորձարկվել է ՀՊՀՀ սոցիալ-քաղաքական գիտությունների դեպարտամենտի և ՀԱՅՔ անկախ գիտահետազոտական ինստիտուտի հովանու ներքո կազմակերպված միջճյուղային սեմինարում (Ֆիլ-մաթ. գիտ. դոկ. Արամ Առաքելյան, բանաս. գիտ. դոկ. Սուրեն Չոլյան, փիլ. գիտ. դոկ. Ալեքսանդր Մանասյան, Ֆիլ-մաթ. գիտ. թեկ. Վահան Գալոյան, պատմ. գիտ. թեկ. Ռուբեն Կարապետյան, փիլ. գիտ. թեկ. Մարատ Մուսայելյան, պատմ. գիտ. թեկ. Հրանուշ Մառատյան, սեմինարի ղեկավար քաղաք. գիտ. դոկ. Հայկ Բոթանջյան): Այս հետազոտության ընդհանրացված արդյունքները դարբաղյան հակամարտության շուրջ բանակցությունների քաղաքական հայեցակարգի ձևով հրատարակվել են հանրա-

պետական մամուլում¹: Այդ հրապարակման նպատակն էր ԵԱԽՀ և ԵԱԿՀ հովանու ներքո ընթացող բանակցությունների պաշտոնական և ոչ պաշտոնական մասնակիցների խորհրդատվական սպասարկումը:

Քանի որ անցած աշնանը լույս տեսած այս նյութը այսօր էլ ընդհանուր առմամբ չի կորցրել իր արդիականությունը, ստորև բերում ենք այդ տեքստը որոշ փոփոխություններով և ճշտումներով:

* * *

Միջճյուղային սեմինարի ընթացքում որպես հիմնական խնդիր քննարկվել է դարաբաղյան հակամարտության նույնականացումը միջազգային նորմերին և չափանիշներին համապատասխան, ինչպես նաև բանակցություններում օգտագործվելիք հիմնական փաստարկների համակարգը:

Կիրառական քաղաքագիտության և դիվանագիտական պրակտիկայի տեսանկյունից, օրինական ճանապարհով ԼՂՀ և ԱդրՀ ստեղծումից հետո, առավել կարևոր նշանակություն է ստանում բանակցությունների մասնակիցների կողմից ներքին հակամարտության մոդելի կիրառման պակասավորության հիմնավորումը: Ցույց է տրված, որ ներքին, ոչ միջազգային հակամարտության մոդելի վրա հիմնված բանակցություններին մասնակցելը, վերջիվերջո, «Ղարաբաղի ժողովրդին հանձնում է իր նախկին գաղութարար մետրոպոլիայի իշխանությունների դատաստանին»: Նման մոտեցումն օբյեկտիվորեն ուղղված է հակամարտության կարգավորման գործում ինչպես հայկական և դարաբաղյան, այնպես էլ միջնորդ կողմի (ԱԳՀ և ԵԱԿՀ) քաղաքական և դիվանագիտական մասնակցության հնարավորությունների սահմանափակման: Միջազգային իրավունքի նորմերի հիման վրա հաստատված է ԼՂՀ-ն կարգավորման փուլում որպես միջազգային հակամարտության կողմ ճանաչելու օրինականությունը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի քաղաքական-իրավական կարգավիճակին վերաբերող բանակցությունների փուլում՝ ԼՂՀ պետական անկախությունը որպես կայացած քաղաքական փաստ դիտելու անհրաժեշտությունը:

Այլ կերպ ասած՝ ԼՂՀ-ն հակամարտության կողմ ճանաչելու վերաբերյալ որևէ մեկի կողմից արտահայտված կասկածը ժամանակավրեպություն է: Տարածաշրջանում իրադրության ռազմական և քաղաքական կայունացման շահերից

բխում է, որ տվյալ հարցում բոլոր շահագրգիռ կողմերը պետք է խելամտորեն ճանաչեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև միջպետական հարաբերությունների կարգավորման գործում միջազգային-իրավական նորմերի գերակայությունը:

Այսպիսով, մշակված է հակամարտության կարգավորման և լուծման վերաբերյալ բանակցություններում հայկական և դարաբաղյան, ինչպես նաև միջնորդ կողմերի հնարավոր դիրքորոշումների հիմնավորման մեթոդաբանություն:

ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՓՍՏԱՐԿՆԵՐԸ

1. Ղարաբաղյան հակամարտությունը որպես միջազգային հակամարտություն է որակվում հետևյալ հիմնական դրույթների հիման վրա.

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ազգային պետության, կազմավորման համապատասխանությունը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին (1948 թ.) և Մարդու իրավունքների մասին միջազգային համաձայնագրերին (1966 թ.), որոնց ներածական մասերում ժողովուրդների ինքնորոշման իրավունքը որակված է որպես մարդու անհատական տնտեսական, սոցիալական, մշակութային, ինչպես նաև քաղաքական և քաղաքացիական իրավունքների իրականացման անհրաժեշտ նախադրյալ:

բ) ԼՂՀ իշխանությունների օրինականությունը, որը հաստատված է նրանով, որ ԼՂՀ անկախության վերաբերյալ տեղի ունեցած հանրաքվեն և քաղաքական ներկայացուցչական հաստատությունների ձևավորման համար տեղի ունեցած ընտրությունները համապատասխանում են.

— ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ միջազգային իրավունքի վերոհիշյալ նորմերին,

— ԽՍՀՄ 1990 թ. ընդունված «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքի պահանջներին, մի օրենք, որը ժողովուրդների ինքնորոշման վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերի իրացումն է ազգային-պետական մակարդակով:

2. Տրված է լրացուցիչ հիմնավորում դարաբաղյան հակամարտության նույնականացմանը՝ որպես միջազգային հակամարտության այնպիսի մի հատուկ տեսակի, ինչպիսին է միջազգային

¹ Տես *Котанджян Г. С. Политическое соглашение по Карабаху: обреченность на успех?*, "Республика Армения", 19 октября 1994 г.

զինված հակամարտությունը: Այդ կապակցությամբ հաստատված է գաղութային տիրապետության միտումով Ադրբեջանական Հանրապետության ունեցածությունների նկատմամբ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ռազմական դիմակայությունը որպես միջազգային զինված հակամարտություն որակելու օրինականությունը:

3. Առաջարկված է Ադրբեջանական Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջև եղած զինված հակամարտության կարգավորման հիմունքների ընտրության մեթոդաբանություն հետևյալ հակամարտաբանական սկզբունքների գերակայությանը համապատասխան.

ա) ներքին ոչ միջազգային հակամարտության դեպքում՝ սահմանների անփոփոխության, տարածքային ամբողջականության և չմիջամտության սկզբունքների գերակայությունը:

բ) միջազգային զինված հակամարտության դեպքում՝ կողմերի իրավահավասարության, ինքնորոշման և անհրաժեշտ ինքնապաշտպանության սկզբունքները¹:

4. Հիմնավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես հակագաղութային միջազգային զինված հակամարտության կողմի՝ (ԼՂՀ-ն ընդդեմ ԱդրՀ-ի գաղութային տիրապետության), միջազգային իրավասուբյեկտությունը:

5. Հիմնավորված է դարաբաղյան հակամարտության գոտում սահմանների անձեռնմխելիության և տարածքի ամբողջականության սկզբունքների խախտման օրինականությունը այն հիման վրա, որ այդ խախտումը տեղի է ունեցել որպես նախկին ԱդրԽՍՀ տարածքում սահմանադրական, օրինական հիմունքներով երկու անկախ, իրավահավասար պետությունների՝ ԼՂՀ և ԱդրՀ, ստեղծման, ինչպես նաև ԽՍՀՄ լուծարման արդյունք:

6. Ելնելով այն բանի հիմնավորումից, որ Ղարաբաղի հայերի ինքնապաշտպանությունը հարկադրական և անհրաժեշտ ինքնապաշտպանություն է (ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան) և պատասխան է Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման ավատության և քաղաքական կամահայտության կանոնավոր զինված ճնշման (գաղութարար նախկին մետրոպոլիայի կողմից՝ հանձին ԱդրՀ-ի), ապացուցվում է, որ օրինական է Ղարաբաղի ժո-

ղովրդի անվտանգության երաշխիքների ապահովումը ինքնապաշտպանության սեփական ազգային բանակի ստեղծման և օգտագործման միջոցով, որ տեղի է ունենում պետական իշխանության ձևավորման ընթացքում: Այդ կապակցությամբ հիմնավորված է ԼՂՀ-ի կողմից ԱդրՀ սահմանների անձեռնմխելիության և տարածքի ամբողջականության խախտման օրինականությունը այն հիման վրա, որ այդ խախտումը տեղի է ունեցել ԼՂՀ-ի դեմ ԱդրՀ-ի ձեռնարկած ագրեսիայի հետևանքով, ինչպես նաև հակառակորդից նվաճված տարածքներում անվտանգության գոտիների ստեղծման և պահպանման նկատառումներով:

7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գաղութային պատերազմի մարդասիրական-իրավական կանոնակարգման համակարգի մեջ մտցնելու նպատակով բերվում է ԼՂՀ-ն որպես միջազգային զինված հակամարտության կողմ ժնկյան համաձայնագրերի համակարգին միանալու մեխանիզմը, որ նախատեսված է առաջին Լրացուցիչ արձանագրությամբ. այդ միացումը պետք է կատարվի Շվեյցարիայի համադաշնությանը՝ որպես պահնորդ երկրի, համապատասխան «միակողմանի դիմումով» դիմելու միջոցով²:

ՀԱՎԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՏԱՐԿՆԵՐԸ

Ապագա խաղաղարարական բանակցություններում ԼՂՀ՝ որպես հարկադրաբար ԱդրՀ-ի դեմ հակագաղութային պայքարը շարունակող ինքնորոշված ժողովրդի օրինական անկախ պետության, կարգավիճակի հիմնավորումը դիտվում է որպես հակամարտության համապարփակ լուծման համար քաղաքական-իրավական կարևորագույն գործոն:

Այս առումով մշակված են հետևյալ փաստարկները՝

ա) ԼՂՀ ամբողջ տարածքում շուրջ երեք տարի անընդմեջ իրականացվում է ժողովրդավարական եղանակով կազմավորված և զարգացող օրինական պետական ներկայացուցչական և գործադիր, այդ թվում նաև զինվորական իշխանություն:

բ) Լեռնային Ղարաբաղի հայությունն ինքնորոշվել է իր պատմական մշտական բնակության տարածքում, որտեղ գոյություն ունի երկու հազարամյակների ընթացքում նրա կողմից ստեղծված նյութական և հոգևոր մշակույ-

¹ Ղարաբաղյան հակամարտության շուրջ միջազգային բանակցությունները ըստ էության սկսվել են և մինչև այսօր էլ շարունակվում են ներքին ոչ միջազգային զինված հակամարտության մոդելով: Նախորդ վերլուծությունը ցույց է տալիս, որ անիրավական են ոչ միջազգային զինված հակամարտության մոդելին համապատասխանող ելակետային սկզբունքները:

² Տե՛ս "Дополнительный протокол I", статья 96, п. 3.

թի հուշարձանների մի ամբողջական համալիր.
 գ) ԼՂՀ կազմավորումը պետք է դիտվի ոչ թե որպես Ղարաբաղի հայության ինքնորոշման մեկնարկային ակտ, այլ որպես ԽՍՀՄ տապալման հետ կապված նրա պետական-իրավական կարգավիճակի օրինաչափ վարգայում:

Անկանխակալ հակամարտաբանական վերլուծությունը մղում է համաձայնելու այն հետևություններին, որ ստեղծված պայմաններում ԼՂՀ-ին հակամարտության կողմ չճանաչելը առնվազն հեռու է իրատեսությունից: Այդ բանը վերջերս հաստատեցին միջազգային ատյանները: Ավելին, մենք համոզված ենք, որ Ադրբեջանի համար Ղարաբաղյան հակամարտության առավել խելամիտ լուծումը կլինեն ԼՂՀ-ի՝ որպես իրավահավասար գործընկերոջ հետ միջպետական հարաբերությունների հաստատման քաղաքականությունը:

Այսպիսով, բանակցություններում ձեռք բերված հաջողությունները նպատակահարմար է գնահատել ոչ այնքան կարևոր ընթացիկ, իրադրությամբ պայմանավորված փոքրիկ առաջխաղացումներով, որքան այն բանով, թե այդ բանակցությունների արդյունքները ինչ չափով են միտված կողմերի արմատական այն շահերի փոխհամաձայնեցմանը, որ նրանք ունեն կայուն խաղաղության ձեռքբերման մեջ, այնպիսի խաղաղության, որը պաշտպանված լինի տարածաշրջանում գործող ուժերի աշխարհաքաղաքական հավասարակշռությամբ և համաշխարհային ընկերակցության կողմից ԵԱՀԽ-ին լիազորված երաշխիքներով:

* * *

Վերջում անհրաժեշտ ենք համարում բանակցությունների գործընթացում, ինչպես նաև լրատվական միջոցներում ներգրավված քաղա-

քական գործիչների և դիվանագետների ուշադրությունը բևեռել Ղարաբաղյան հակամարտության «քաղաքական-իրավական» և «հակագաղութային» չափումների մշակման քաղաքագիտական բավականաչափ կառուցողականության վրա: Մեր կարծիքով «բանակցությունների փաթեթի» կողողինացված ձևավորման դեպքում այս մեթոդաբանությունը կարող է արժանանալ համաշխարհային ընկերակցության, այդ թվում և ժամանակին գաղութային պարտավորությունների բեռը թոթափած, ինչպես նաև գաղութատիրության տիրապետությունից ազատված պզտի թվով երկրների դրական արձագանքին: Քաղաքական խնդիրների ձևակերպման ժամանակ հատուկ մշակման են արժանի իսլամական պետությունների հետ հարաբերությունների դիվանագիտական ռեսուրսների իմաստավորումն ու օգտագործումը, պետություններ, որոնք միջազգային ամբիոնից ավանդաբար սատար են լինում ազգային անկախության համար գաղութատիրական լծի դեմ պայքարող ժողովուրդներին:

Ելնելով առաջարկված մեթոդաբանությունից՝ որպես ԼՂՀ-ի համար քաղաքական գերակա ռազմավարություն կարելի է քննարկել զուգաչափության հաստատումը ազգային պետականության կարևորագույն հատկանիշների ամբողջ բավանականությամբ: Անշուշտ, խոսքը ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև ազգային պետական հոգրությունների քանակական հավասարության ուտոպիական հաստատման մասին չէ: Այստեղ մենք նկատի ունենք Ղարաբաղի ազգային պետականության ինքնահաստատման գործընթացի վրա ներքին և արտաքին քաղաքական արդյունավետ ազդեցություն ունեցող զուգաչափ հաստատությունների համալիր կառուցման, տարածաշրջանային անվտանգության ապահովման մեջ մասնակցության ռազմավարությունը:

Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ե

1. «Женевские конвенции о защите жертв войны от 12 августа 1949 г.», М., 1969.
2. «Дипломатическая конференция по вопросу о подтверждении и развитии международного гуманитарного права, применяемого в период вооруженных конфликтов. Заключительный акт», Женева, 1977.
3. Геворкян Г. А. Замечания к проблеме Нагорного Карабаха, "Азатамарт", 17 марта 1992 г.
4. Котанджян Г. С. Грани согласия-конфликта. Цивилизационные проблемы теоретической и прикладной политологии. Монография, М., 1992.
5. Котанджян Г. С. Этнополитология консенсуса-конфликта: цивилизационный аспект национальной безопасности. Монография, М., 1992.
6. Котанджян Г. С. Политические проблемы идентификации и урегулирования вооруженного конфликта в Карабахе. В сб. "О некоторых политико-правовых аспектах проблемы Нагорного Карабаха" (под ред. К. С. Худавердяна), Е., 1994.
7. "Проблемы этнополитического анализа (стенограмма научно-методологического симпозиума "Этнонациональный конфликт: концепция, структура, методология)". Рабочие тетради Российской Ассоциации теории и моделирования международных отношений, № 5 (под ред. Г. С. Котанджяна), М., 1991.
8. Барсебян И. А., Котанджян Г. С. "Ливан" в России: "за" и "против", "Россия", 6-12 мая 1992 г.

9. *Котанджян Г. С.* Междивилизационный контакт: проблемы развития, "Европа и мир", Москва-Прага, 1992 г., № 2 (англ., русск. яз.).
10. *Котанджян Г. С.* "Джихад" как двигатель общественного прогресса, "Россия", 22-29 июля 1992 г.
11. Հ. Ս. *Բոթանջյան*, Հայկական «երկրաշարժը» (կոնֆլիկտաբանական ուրվագծեր). հոդվածների ժողովածու, Ե., 1992 թ.:
12. Հ. Ս. *Բոթանջյան*, Բաղադրագիտությունը և բախումնաբանության ձևավորման ուղիների ուսումնասիրությունը Հայաստանում, զեկուցում ՀԱՅՔ հաստատության տարեկան գիտաժողովում, «Տեղեկագիր», հ. 10, 1993 թ. օգոստոս:
13. Հ. Ս. *Բոթանջյան*, Բաղաբանական մեծ համաձայնագիրը փակ դռների հետևում: Մասնագետները առաջարկում են հայկական կողմի դիրքորոշման հիմնական դրույթների և փաստարկների համակարգ, «Ազգ», 1994 թ. սեպտեմբերի 16:
14. *Котанджян Г. С.* Политический приоритет - стратегия симметрии. Разрешение Карабахского конфликта в стратегии развития государственности, "Республика Армения", 16 марта 1995 г.
15. Հ. Ս. *Բոթանջյան*, Ղարաբաղյան կոնֆլիկտի փուլերը, Ե., «Առավոտ», 1995 թ. ապրիլի 13:
16. *Котанджян Г. С.* НКР и Азербайджан как стороны международного конфликта. Политико-правовая экспертиза, "Республика Армения", 21 апреля 1995 г.

ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՎԵՍ

ԶՈՐՔԵՐԻ ԲՈՂԱՐԿՈՒՄԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՈՎ, գեղասպետ, ԳՇ օպերատիվ վարչության պետ

Բողարկումը այնպիսի միջոցառումների մի համալիր է, որոնցով նպատակ է դրվում ապահովելու պորքերի գործողությունների ու տեղաբաշխման թաքնվածությունը հակառակորդի ցանկացած հետախուզությունից, նրան մոլորության մեջ գցելու սեփական պորքերի խմբավորման, նրանց կազմի, դասավորության ու մարտական պատրաստության, սեփական իրական մտադրությունների, մարտի բնույթի ու մտահղացման հարցերում, նրա համար դժվարացնելու մեծ ճշգրտության գնկերով և այլ միջոցներով խոցելու համար օբյեկտների ընտրությունը:

Բողարկումը պորքերն իրականացնում են մշտապես, ամեն մի իրադրության մեջ, մարտական գործողության բոլոր տեսակներում:

Բողարկման գլխավոր խնդիրներն են՝ թաքցնել հրթիռային միջոցները, պորքերի կազմն ու խմբավորումը, նրանց տեղաբաշխումն ու վորաշարժը, կառավարման կետերը, վանապան ռազմական օբյեկտները (պաշտպանական կառույցներ, արգելափակոցներ, անցատեղեր, պահեստներ և այլն), սեփական մտադրությունները, կատարել խմբավորման կեղծ նմանակում, պորքերի գործողություններում կեղծ մտադրությունների, ինչպես նաև կեղծ օբյեկտների ցուցադրում:

Բողարկումը պետք է լինի գործուն, համոզիչ, բավազան, անընդհատ և իրականացվի համալիր ձևով, պաշտպանության վերաբերյալ ընդունված որոշմանը խստիվ համապատասխան:

Բողարկման գործունությունը դրսևորվում է սեփական պորքերի և օբյեկտների մտադրությունների, վիճակի, տեղաբաշխման և գործունեության վերաբերյալ հակառակորդին համառոտին կեղծ պատկերացումներ պարտադրելու մեջ:

Բողարկման համոզությունն այն է, որ անցկացվող միջոցառումները հակառակորդին թվան ճշմարտանման, իրադրության պայմաններով արդարացված և ըստ մասշտաբի, ժամանակի ու տեղի իրականության տպավորություն ստեղծեն: Բողարկված պորքերը տեղաբաշխված չպետք է աչքի ընկնեն, փնտրական օբյեկտները պետք է նման լինեն տեղանքի առարկաներին և չգրավեն հակառակորդի ուշադրությունը, իսկ կեղծ օբյեկտները նմանվեն իրական օբյեկտների:

Զորքերի ու նրանց գործողությունների նըմանակման միջոցառումները, ինչպես նաև կեղծ օբյեկտների նախանշանակումն ու տեղաբաշխումը պետք է լինեն մարտավարության տեսակետից հիմնավորված:

Օպերատիվ *քողարկման բազմազանությունը* նշանակում է քողարկման մտահղացման, հնարքների, եղանակների ու միջոցների կրկնողության բացառում, դրա միջոցառումների անցկացման մեջ ամեն մի շաբլոնի բացառում:

Բողարկման անընդհատությունը նշանակում է պորքերի գործունեության ցանկացած պայմաններում դրա մշտական անցկացումը ինչպես այդ գործունեության նախապատրաստման, այնպես էլ մարտի ընթացքում, իսկ ռազմական օբյեկտների քողարկման դեպքում՝ դրանց սարքավորման աշխատանքների սկզբից ևնթ և դրանց օգտագործման ամբողջ ընթացքում:

Բողարկման միջոցառումների անցկացումը համալիր ձևով նշանակում է տարբեր հնարքների ու եղանակների միաժամանակյա կիրառում ի հավակշիռ հակառակորդի հետախուզության բոլոր միջոցների կամ այն միջոցների, որոնք կոնկրետ իրադրությունում ունեն վճռական նշանակություն:

Բողարկման հիմնական միջոցներն են՝ թաքցնումը, նմանակումը, ցուցադրական գործողությունները և ապակողմնորոշող տեղեկատվությունը:

Թաքցնումը նշանակում է այն վիճակը, երբ թույլ չի տրվում, որ երևան գան պորքերի և օբյեկտների ապաքողարկման նշաններ կամ վերացվում են այդպիսիք: Դա կատարվում է պորամասերի և ստորաբաժանումների կողմից մըշտապես, առանց դրա համար վերադաս հրամանատարի (շտաբի) հատուկ ցուցումների:

Նմանակումը պորքերի և օբյեկտների կեղծ տեղաբաշխման ստեղծումն է, ինչպես նաև կեղծ տեղաշարժերի ստեղծումը համապատասխան ապաքողարկման նշանների վերարտադրման միջոցով:

Ցուցադրական գործողությունները իրական պորամասերի ու ստորաբաժանումների կեղծ գործունեության կանխամտածված ցուցադրումն է տեղաշարժման, կենտրոնացման, մարտ մղելու և այլ գործողությունների միջոցով:

Ապատեղեկատվությունն այն է, երբ հակառակորդին կեղծ տեղեկություններ են հասցվում կապի, մամուլի, ռադիոյի տեխնիկական միջոցներով՝ ոչ պաշտոնական կամ հատուկ ուղիների և այլ միջոցների ու եղանակների օգտագործմամբ:

Նմանակումը, ցուցադրական գործողությունները և ապատեղեկատվությունը կատարվում են միայն ավագ հրամանատարի (շտաբի) թույլտվությամբ կամ ցուցումով:

Քողարկումը ձեռք է բերվում՝ ռազմական գաղտնիքի պահպանմամբ, վորքերի և օբյեկտների թաքնված տեղաբաշխմամբ ու տեղաշարժմամբ՝ օգտագործելով տեղանքի քողարկող հատկությունները, օրվա մութ ժամանակը և սահմանափակ տեսանելիության այլ պայմաններ (մառախուղ, անձրև, տեղապող ձյուն, ցածր համատարած ամպամածություն), նախատեսված ու ձեռքի տակ եղած քողարկման միջոցների կիրառմամբ և տեղանքի գույնով տեխնիկայի ներկմամբ, ռադիոյի միջոցով, ռադիոտեխնիկական, ռադիոտեղորոշման, ձայնային և լուսային քողարկման միջոցառումների կիրառմամբ, կեղծ դիրքեր սարքելով, կեղծ կառույցներ, անցատեղեր և տեղաբաշխման շրջաններ սարքավորելով, վորքերի կեղծ տեղաշարժերով և ցուցադրական գործողություններով, ծխածածկույթների օգտագործումով, ծածուկ կերպով իրականացնելով տեղանքի ինժեներական սարքավորման խնդիրներ՝ պահպանելով քողարկման կարգապահությունը:

Ռազմական գաղտնիքի պահպանումն ապահովվում է՝ մարտի նախապատրաստմանը ներգրավելով խիստ սահմանափակ թվով անձանց և ստորադրյալներին հայտնելով միայն այն տրվյալները, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց ստորաբաժանումների (վորամասերի) գործողությունները կազմակերպելու համար: Դա բացառում է մեր վորքերի առաջիկա գործողությունների վերաբերյալ տվյալների ձեռքբերումը՝ հակառակորդի կողմից:

Հմուտ ապակենտրանացումը վորամասերին ու ստորաբաժանումներին հնարավորություն է ընձեռում ավելի լավ օգտագործելու տեղանքի քողարկող հատկությունները և թաքցնելու սեփական տեղաբաշխումը:

Տեղաշարժերի ժամանակ վորքերի քողարկումը ձեռք է բերվում՝ վորասյուները ծածկված տեղանքի ճանապարհներով տանելով, խոշոր բնակավայրերի, ճանապարհային հանգույցների և այլ լավ տեսանելի կողմնորոշիչների շրջանցումով, մեքենաների գիշերային երթևեկությամբ (լուսասարքերն անջատված կամ մթագնված), թշնամու համար տեսանելի ճանապարհի բաց մասերը արհեստական սքողանքներով նախապես

սարքավորելով, վորասյուներում ռադիոլուսայամբ կամ ռադիոմիջոցների աշխատանքը սահմանափակելով, վորասյուները կենտրոնացնելով ճակատով և խորությամբ:

Չորքերի թաքնված տեղաշարժերը՝ կապված նրանց տեղաբաշխման, կառավարման կետերի, հրթիռային վորքերի դիրքային շրջանների և հրետանու դիրքերի շրջանների փոփոխման հետ, նպաստում են հակառակորդին խաբելուն և դժվարացնում նրա կողմից կրակային հարվածների նշանակետերի ընտրությունը: Նման տեղաշարժերն անցկացվում են գործողությունների մտահղացմանը համապատասխան:

Տեղանքի քողարկող հատկությունների օգտագործումը վորքերը թաքցնելու առավել պարզ ու մատչելի միջոցն է: Բնական սքողանքներն են մակերևույթի անհարթությունները (ձորակներ, կիրճեր, բարձունքների հակառակ լանջեր), բուսականությունը (անտառ, թփուտ, բարձր խոտ, այգիներ և այլն), բոլոր տեսակի կառույցները և այլ տեղական առարկաներ: Չորակներում, ուղղաբերձ վառիթափների գանապան բարձունքների մոտ վորքերը տեղավորելիս պետք է վերադնել ստվերոտ տեղամասերը, իսկ անձնակազմի ու ռազմական տեխնիկայի համար կառուցվող թաքստոցները սքողել վերածածկերով:

Օրվա մութ ժամանակը և սահմանափակ տեսանելիության մյուս պայմանները վորքերին թաքցնում են թշնամու դիտումից և դժվարացնում նրա հետախուզումը: Ուստի և նման պայմանները պետք է առավելագույնս օգտագործվեն վորքերի թաքնված տեղաշարժման և նրանց մարտական գործունեության այլ տեսակների համար:

Նախատեսված և ձեռքի տակ եղած քողարկման միջոցները և տեխնիկայի, ինժեներական կառույցների ու այլ միջոցների քողարկաներով թաքցնում են անձնակազմի ու տեխնիկայի ապարդրակող նշանները՝ նրանց նմանեցնելով շրջապատող տեղանքին, և փոխհատուցում են բնական սքողանքների բացակայությունը կամ անբավարարությունը:

Ռադիո- և ռադիոտեխնիկական քողարկումն իրականացվում է հակառակորդի ռադիոհետախուզությունից սեփական վորքերի և հատկապես կառավարման կետերի սքողման համար: Այն ձեռք է բերվում՝ սեփական ռադիոմիջոցների հատորդումները որոշակի ժամերի սահմանափակելով կամ լիովին դադարեցնելով, ռադիոկարգապահությունը և սահմանված աշխատակարգը խստիվ պահպանելով, ռադիոմիջոցները ճառագայթման նվազագույն անհրաժեշտ հզորու-

թյամբ աշխատեցնելով, հաղորդող սարքերի և օպերատորների աշխատանքում եղած առանձնահատկությունները վերացնելով, որոշակի շրջաններում, այդ թվում և վորամիավորումների ու վորամասերի տեղաբաշխման նախկին շրջաններում կեղծ ռադիոփոխանակում կիրառելով:

Ռադիոտեղորոշման քողարկումը ձեռք է բերվում՝ տեղանքի քողարկող հատկությունները հմտորեն օգտագործելով, վորքերն ու ռավմական տեխնիկան տեղաբաշխելով բարձունքների հակադիր լանջերին և անտառակների եզրերին, արհեստական ռադիոտեղորոշման սքողանքներ տեղադրելով, փոքրացնելով դիրքերում գտնվող տեխնիկայի անդրադարձնող հատկությունները՝ ձեռքի տակ եղած միջոցներով և հատուկ խսիրներով այն քողարկելով, անկյունավոր անդրադարձիչներ օգտագործելով, ռավմական տեխնիկայի տարբեր տեսակներ նմանակող մակետներ կիրառելով և այլն:

Լուսաքողարկումը ձեռք է բերվում՝ գիշերային տեսանելիության սարքերը հմտորեն կիրառելով, գիշերային երթևեկության ժամանակ մենանների լուսասարքերը անջատելով (մթագնելով), կառավարման կետերում աշխատանքային շենքերը մթնեցնելով, հրետանին տեղադրելով կրակոցների ժամանակ հրացույքների բռնկումը քողարկող թաքստոցների հետևում դասավորված կրակային դիրքերում, ստորաբաժանումների տեղաբաշխման շրջաններում խարույկ վառելն արգելելով և այդ շրջաններից լուսավորման սարքեր օգտագործող արհեստանոցները հեռացնելով:

Ճայնային քողարկումը կիրառվում է վորքերի մարտական գործունեության ընթացքում առաջացող ապաքողարկող աղմուկներն ու ձայները (շարժիչների աշխատանքը, թրթուրների շայունը և այլն) նվազացնելու, խլացնելու, ինչպես նաև աղմուկներ ու ձայներ նմանակելու համար: Աղմուկների ու ձայների խլացումը կատարվում է քողարկվող օբյեկտների ձայները կլանող ձայնային պատնեշներ ստեղծելով (հրետանային կրակ վարելով, ցածր բարձրությամբ ինքնաթիռների թռիչքով, պայթուցիկ նյութերի լիցքեր պայթեցնելով, առանց խլացուցիչների շարժիչներ, ձայնահաղորդիչ սարքեր ու կայաններ, ինչպես նաև այլ տեխնիկական միջոցներ աշխատեցնելով): Աղմուկների ու ձայների նմանակումն իրականացվում է վորքերի կողմից չրբաղեցված շրջաններում և հակառակորդին մոտրեցնելու նպատակ ունի:

Կեղծ դիրքերի կառուցումը, կեղծ շրջանների ու օբյեկտների սարքավորումը, կեղծ տեղաշարժերի ու ցուցադրական գործողությունների անցկացումը կատարվում են սեփական վորքերի

խմբավորման, մտադրությունների ու գործողությունների վերաբերյալ հակառակորդին կեղծ պատկերացում պարտադրելու համար: Այդ միջոցառումները խնամքով միմյանց հետ շաղկապվում են, համաձայնեցվում հարևանների հետ, դրանց մասին զեկուցվում է ավագ պետին: Դրանք կատարվում են մտահղացմանը համապատասխան:

Տեղանքի ինժեներական սարքավորման խնդիրների կատարման թաքնվածությունը ձեռք է բերվում օրվա մութ ժամանակը և սահմանափակ տեսանելիության այլ պայմաններ օգտագործելով, ինչպես նաև ինժեներական տեխնիկան կիրառելով հակառակորդի ցամաքային դիտարկման և լսելիության սահմաններից դուրս:

Օխամիջոցներն օգտագործվում են թշնամու համար դիտարկումը, նշանառու կրակի վարումը և դիպուկ ռմբակոծությունը դժվարացնելու, ինչպես նաև սեփական վորքերի խմբավորման վերաբերյալ նրան մոտրեցնելու նպատակով: Դա ձեռք է բերվում նրա դիտակետերը և կրակային միջոցները կուրացնելու միջոցով, սեփական վորքերի ու թիկունքի օբյեկտների ծխաքողարկմամբ և կեղծ տեղաբաշխման շրջաններում ծխամիջոցների կիրառմամբ:

Հակառակորդի կողմից մեծ ճշգրտության զենքի համակարգերի կիրառման պայմաններում քողարկման դերը զգալիորեն մեծալում է: Ընդ որում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երթուղիների վաղօրոք նախապատրաստմանը, որը ներառում է երթուղիների բաց հատվածներում մետաղյա ցանցից ուղղահայաց ճանապարհամերձ սքողանքների տեղադրում, մետաղյա անկյունավոր անդրադարձիչների և ջերմային նմանակողների հետ զուգակցությամբ «քոչող» մակետների կիրառում, հորիզոնական ծխածածկույթների սարքում և ինքնանշանառման ինֆրակարմիր գլխիկներով արկերի համար ջերմային ծուղակների սարում, ցուցադրական գործողություններ, ինչպես նաև անտառային վանզվածներով, կիրճերով, ձորակներով, էլեկտրահաղորդման գծերի երկայնքով անցնող երթուղիների առավելագույն օգտագործում:

Քողարկման կազմակերպման դեպքում վորամիավորման (վորամասի) հրամանատարը քողարկման վերաբերյալ առաջադրանքներ է տալիս, մատնանշում է հիմնական միջոցառումները, դրանց ծավալը, կատարման ժամկետներն ու հերթականությունը, որոշում է քողարկման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ուժերն ու միջոցները, նշանակում է պատասխանատու անձանց և սահմանում է հսկողության կարգը:

Չորամիավորման (վորամասի) շտաբը, քո-

ղարկման վերաբերյալ հրամանատարի որոշման և ցուցումների հիման վրա, պորատեսակների պետերի, բրիգադների (դիվիզիաների, գնդերի) ինժեներական և քիմիական ծառայությունների պետերի հետ համատեղ մշակում է քողարկման վերաբերյալ կոնկրետ միջոցառումներ, դրանց ծրագիրը հաղորդում է պորքերին և վերահսկում է դրանց կատարումը:

Քողարկման աշխատանքները կատարում են պորքերի բոլոր տեսակների և հատուկ պորքերի ստորաբաժանումները, պորամասերն ու պորամիավորումները, ինչպես նաև թիկունքի պորամասերն ու ստորաբաժանումները:

Չորքերի ու օբյեկտների քողարկման վիճակը

պարբերաբար ստուգվում է ցամաքից, օդից և ծովից կատարվող վերահսկողական դիտարկմամբ, ստուգիչ լուսանկարահանումով, ինչպես նաև ռադիո- և ռադիոտեխնիկական վերահսկող միջոցներով, գիշերային տեսանելիության սարքերով և այլն:

Բրիգադում (դիվիզիայում, գնդում) քողարկման սբուզման համար ներգրավվում են պորատեսակների, հատուկ պորքերի ու ծառայությունների, շտաբների սպաներ, ինչպես նաև պարետային, հետախուզության, ուղղաթիռային և կապի ստորաբաժանումներ: Քողարկման բացահայտված թերություններն անհապաղ վերացվում են:

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ*

Ն. Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՅ, գեներալ-լեյտենանտ, ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ

Հոդվածում քննվում է գումարտակի, վաշտի ու դասակի հրամանատարների աշխատանքը մարտի կազմակերպման ուղղությամբ:

Հրամանատարի աշխատանքի կարգը կախված կլինի մարտական առաջադրանքի և իրադրության պայմաններից, որոնցից կարևորագույններն են հակառակորդի և սեփական զորքերի դիրքը, գործողությունների բնույթը, ժամանակի գործոնը:

Մարտական հրամանի կամ կարգադրության ձևով մարտական առաջադրանք ստանալով՝ գումարտակի (վաշտի, դասակի) հրամանատարը մարտի կազմակերպման համար բավարար ժամանակի առկայության դեպքում կիրառում է հաջորդական, իսկ սահմանափակ ժամկետների դեպքում՝ փուլաձև աշխատանքի մեթոդը:

Պաշտպանությունում ստորաբաժանումների կառավարումը ներառում է հրամանատարների, նրանց տեղակալների, ինչպես նաև գումարտակի շտաբի նպատակամետ գործողությունները՝ ուղղված ստորաբաժանումների բարձր մարտական պատրաստականության պահպանմանը, մարտի համար նրանց նախապատրաստմանը և առաջադրված խնդիրների կատարման ժամանակ նրանց ղեկավարմանը: Կառավարման ամբողջ գործընթացի կազմակերպիչը հրամանատարն է: Ընդ որում գումարտակի հրամանատարը հենվում է շտաբի, իսկ վաշտի հրամանատարը՝ կառավարման խմբի վրա, որի մեջ մտնում են անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով տեղակալը, ավագ տեխնիկը, ավագը և սանհրահանգիչը (տանկային վաշտում գլխավոր տեխնիկի փոխարեն՝ սպառապիության գծով տեղակալը):

Մարտական պատրաստականության հասնելու համար բոլոր աստիճանների հրամանատարները պարտավոր են գիտենալ ստորաբաժանման խնդիրը և նախապես՝ միջև մարտի մեջ մտնելը, անցկացնել պաշտպանության նախապատրաստման համար անհրաժեշտ միջոցառումները, ապահովել հստակ մարտական հերթապահություն: Բացի այդ, ինչպես խաղաղ, այնպես

էլ պատերազմի ժամանակ (մարտերի միջև եղած դադարների ընթացքում) անհրաժեշտ է բարձրացնել անձնակազմի հմտավարժությունը և ստորաբաժանման մարտական պատրաստականությունը, սպառապիությունն ու տեխնիկական պահել անհապաղ կիրառման համար պատրաստ վիճակում, ունենալ բավարար քանակությամբ նյութական միջոցների պաշարներ:

Պաշտպանության նախապատրաստումը ըսկըսվում է առաջադրանք ստանալուց անմիջապես հետո: Տարբեր ստորաբաժանումներ ունենում են տարբեր առաջադրանքներ: Գումարտակում (վաշտում) առաջադրանքը ներառում է մարտի կազմակերպումը, ստորաբաժանումների նախապատրաստումը, պաշտպանական դիրք գրավելը, մարտակարգի ու կրակի համակարգի ստեղծումը, պաշտպանության շրջանի (հենակետի) ինժեներային սարքավորումը, հրամանատարների գործնական աշխատանքը ստորաբաժանումներում և այլ միջոցառումներ: Գասակում ու ջոկում լուծվում են համանման խնդիրներ, բայց՝ հաշվի առնելով որոշ առանձնահատկություններ: Այսպես, հենակետը (դիրքը) վբաղեցնելուց հետո կազմակերպվում է դիտարկում, ջոկերում պատրաստվում են կրակի քարտեր և կրակի վարման համար տվյալներ:

Կարևորագույն տարր է մարտի կազմակերպումը: Այն ներառում է որոշման ընդունումը, մարտական խնդիրների առաջադրումը, տեղապնման անցկացումը, կրակի համագործակցության և կրակի համակարգի կազմակերպումը, մարտի համակողմանի ապահովումը և կառավարումը, պաշտպանության շրջանի (հենակետի) սխեմայի մշակումը, կրակի քարտի (ջոկում) կազմումը:

Պաշտպանությունը կազմակերպում են ստորաբաժանումների հրամանատարները, որպես կանոն, տեղանքում, իսկ եթե դա հնարավոր չէ՝ ըստ քարտեզի (սխեմայի) կամ տեղանքի մանրակերտի: Բայց այդ դեպքում, հենց որ իրադրությունը թույլ է տալիս, հնարավորություն է գտնվում տեղանքում ճշտելու խնդիրները և առաջիկա համագործակցությունը:

Մարտական առաջադրանքն ստանալով՝ գումարտակի (վաշտի) հրամանատարը պարզորոշում է այն, որոշում է այն միջոցառումները,

*Հոդվածում օգտագործված են նյութեր «Վոյննի վեստնիկ» հանդեսից, 1994 թ. հ. 7, ինչպես նաև զորքերի կառավարման հեղինակի փորձը:

որոնք անհրաժեշտ է անհապաղ կատարել՝ ստորաբաժանումներն արագորեն պաշտպանության նախապատրաստելու համար, կատարում է ժամանակի հաշվարկ և տեղակալներին կողմնորոշում առաջիկա գործողությունների վերաբերյալ: Այնուհետև, տեղանքի պայմանները հաշվի առնելով, գնահատում է պաշտպանության շրջանի ինժեներային սարքավորման հնարավորությունները և շտաբի պետին ցույցումներ է տալիս ստորաբաժանումները մարտին, հետախուզությանը նախապատրաստելու, տեղանքում աշխատելու ժամանակի և կարգի վերաբերյալ (վաշտի հրամանատարը հաստիքային ու տրված ստորաբաժանումների հրամանատարին ցույցումներ է տալիս մարտին նախապատրաստվելու, տեղանքում աշխատելու ժամանակի և կարգի վերաբերյալ): Դրանից հետո գնահատում է իրադրությունը, միանձնյա որոշում է ընդունում, այդ մասին վեկուցում է գնդի (գումարտակի) հրամանատարին, անցկացնում է տեղափոխում, տալիս է մարտական բանավոր հրաման, կազմակերպում է համագործակցությունը, ցույցումներ է տալիս մարտի համակողմանի ապահովման և կառավարման վերաբերյալ: Հետագայում գումարտակի (վաշտի) հրամանատարը ղեկավարում է ստորաբաժանումների անմիջական նախապատրաստումը և սահմանված ժամին վեկուցում է ավագ հրամանատարին:

Դասակի հրամանատարի աշխատանքն ունի որոշ առանձնահատկություններ: Այդ աշխատանքի կոնկրետ բովանդակությունն ու հաջորդականությունը կախված են ժամանակի գործոնից և տվյալ պահին իրականացվող գործողություններից: Չոկում մարտին նախապատրաստվելու միջոցառումների հաջորդականությունը կարող է լինել տարբեր՝ կախված հանգամանքներից, մասնավորապես այն բանից, թե շփում կա արդյոք հակառակորդի հետ, թե ոչ: Սակայն բոլոր դեպքերում ջոկի (տանկի) հրամանատարը առաջադրանքն ստանալուց հետո պարզորոշում է այն, ջոկը (տանկը) դուրս է բերում նշանակված վայր, ուսումնասիրում է տեղանքը, տալիս է մարտական հրաման և կազմակերպում է համագործակցությունը: Այնուհետև ղեկավարում է դիրքի ինժեներային սարքավորումը, քողարկումը, կազմում է կրակի քարտը:

Հակառակորդի հետ անմիջական շփման պայմաններում կարող է կարիք պգայվել սկզբում հարմար դիրք գրավելու, իսկ հետո արդեն անցնելու պաշտպանության կազմակերպմանը: Իրադրությունից և ժամանակի պաշարից կախված՝ հրամանատարների աշխատանքի հաջորդականությունը կարող է այլ լինել: Բայց այն միշտ ուղղված պետք է լինի ստորաբաժանումների անընդմեջ կառավարմանը, որոշումների ժամանակին ընդունմանն ու խնդիրների առաջադրմանը, մարտի նախապատրաստմանն ավելի շատ ժամանակ հատկացնելուն:

Ստացված առաջադրանքը պարզորոշելիս գումարտակի (վաշտի) հրամանատարը պետք է ամենից առաջ հասկանա առաջիկա գործողությունների նպատակը, ավագ հրամանատարի մտահղացումը, գումարտակի (վաշտի) խնդիրը, տեղը մարտակարգում և դերը, հարևանների խնդիրները և նրանց հետ համագործակցության կարգը, ինչպես նաև առաջադրանքի կատարմանը պատրաստ լինելու ժամանակը:

Դասակի հրամանատարը պետք է իմանա վաշտի ու դասակի խնդիրը, ուղղության վրա գտնվող այն օբյեկտները (նշանակետերը), որոնք խոցվում են ավագ հրամանատարների միջոցներով, հարևանների խնդիրները, նրանց հետ համագործակցության կարգը և պատրաստ լինելու ժամանակը (նկ. 1. այս և հաջորդ նկարները տես հոդվածի ռուսերեն տեքստում):

Գնահատելով իրադրությունը՝ ստորաբաժանման հրամանատարն ուսումնասիրում է հակառակորդին, իր ստորաբաժանումները, հարևաններին, տեղանքը, ճառագայթային, քիմիական ու կենսաբանական իրադրությունը (գումարտակում, վաշտում), ինչպես նաև հաշվի է առնում եղանակի վիճակը, տարվա, օրվա ժամանակը, դրանց ազդեցությունը մարտի նախապատրաստման և վարման վրա (նկ. 2): Դրա հիման վրա եզրակացություններ են արվում որոշման կարևորագույն կետերի վերաբերյալ, կատարվում են հաշվարկներ (այս կամ այն միջոցառումների կատարման ժամանակի, աշխատանքների, ուժերի, միջոցների ծավալի և այլն), նախատեսվում են որոշման առանձին տարրեր:

Եզրակացություններում արտացոլվում է հետևյալը՝ հիմնական ջանքերի կենտրոնացման ուղղությունը և տեղանքի այն շրջանները, որոնց պահումից կախված է պաշտպանության կայունությունը. հակառակորդին հետ մղելու և ճեղքման դեպքում նրա ոչնչացման եղանակները. մարտակարգը, հենակետերի (կրակային դիրքերի), կրակի և ինժեներային արգելափակույների համակարգերը, ամրաշինական սարքավորման պահպանումը և հաջորդականությունը. մարտական ապահովման միջոցառումները, ստորաբաժանման ներսում և հարևանների հետ համագործակցության բնույթը. պաշտպանության իրական կառուցվածքի վերաբերյալ հակառակորդին խաբելու և մոլորության մեջ գցելու եղանակները. տեղանքի շահեկան պայմաններից և հակառակորդի թույլ կողմերից օգտվելու կարգը:

Հարձակման սկզբի ենթադրյալ ժամանակից ելնելով՝ հանգում են պաշտպանության նախապատրաստման միջոցառումների անցկացման ժամկետների մասին եզրակացության:

Որոշման մեջ գումարտակի (վաշտի) հրամանատարը նշում է մարտի մտահղայումը, ստորաբաժանումներին տրվող մարտական առաջադրանքները, համագործակցության հիմնական հարցերը, կառավարման կազմակերպումը: Բացի այդ, կարող են որոշվել նաև ապահովման տեսակների վերաբերյալ խնդիրները: Դասակի հրամանատարի որոշումը ավելի հակիրճ է: Այն ներառում է առաջադրանքի կատարման եղանակը, ջոկերին (տանկերին), տրված ստորաբաժանումներին և կրակային միջոցներին առաջադրվող խնդիրները, կառավարման կազմակերպումը:

Մարտի կազմակերպման մեջ կարևոր դեր է խաղում տեղապնդումը: Այն կատարվում է հենց առաջին հնարավորության դեպքում և, որպես կանոն, թաքնված ձևով: Ընդամին ուշադրություն է դարձվում պաշտպանության խնդիրների կատարման առավել արդյունավետ եղանակների որոնման, տեղանքի (նրա ռելիեֆի, բուսականության, ջրային խոչընդոտների, բնակավայրերի և այլն) կոնկրետ շահավետ պայմանների առավելագույն օգտագործման վրա: Որոշման հիման վրա առաջադրվում են մարտական խնդիրներ: Մարտից առաջ դրանք տեղ են հասցվում բանավոր մարտական հրամանի ձևով, առավել հաճախ՝ անմիջականորեն տեղում: Մարտական հրամանի ձևը և նրա կետերի բովանդակությունը շարադրված են ցամաքային զորքերի մարտական կանոնադրության մեջ՝ մ. 2-րդ և 3-րդ: Խնդիրներն անհրաժեշտ է ձևակերպել կոնկրետ, միանշանակ և պարզ: Այստեղ անթույլատրելի է կիրառել այնպիսի բառեր, որոնց իմաստը կարող է ընկալվել անորոշ կերպով («մոտ», «հեռու», «հուսալիորեն ապահովել», «ծածկապաշտպանել» և այլն): Անհրաժեշտ է նշել հեռավորությունը, միջոցները, կետերը, տեղի առարկաները և այլն: Պետք է հստակ կերպով նշվի, թե ով, ինչ, որտեղ, ինչպես և երբ պետք է կատարի, ինչ ուժեր ու միջոցներ պետք է օգտագործել:

Մարտի ընթացքում խնդիրները տեղ են հասցվում մարտական կարգադրությունների ձևով, իսկ գումարտակում ու վաշտում, դրանցից բացի, կարող են տրվել նաև նախնական մարտական կարգադրություններ: Վերջիններս տարբերությունն առաջիններից այն է, որ խնդիրները դրանցում ձևակերպվում են այնպիսի աստիճանի մանրամասնությամբ, որը համապատասխանում է ավագ հրամանատարի ընդունած որոշմանը: Որպես կանոն, դրանք տեղ են հասցը-

վում նախքան մարտական հրամանի ընթերցումը: Այդ պատճառով էլ նախնական մարտական կարգադրության մեջ նշվում են խնդիրները տեղ հասցնելու ժամանակն ու եղանակները:

Մարտական առաջադրանքի ստացումից անմիջապես հետո գումարտակի (վաշտի, դասակի) հրամանատարը լուծում է համագործակցության հարցերը, իսկ ջոկի (տանկի) հրամանատարն իր ջոկը (տանկը) պատրաստում է առաջադրանքի կատարմանը:

Համագործակցությունը գումարտակում (վաշտում) կազմակերպվում է ըստ խնդիրների, հակառակորդի հարձակման հավանական ուղղությունների և ստորաբաժանումների գործողությունների տարբերակների: Ընդ որում կարևոր է հասնել հաստիքային, տրված և օժանդակող ստորաբաժանումների գործողությունների հըստակ համաձայնեցվածության՝ ըստ նպատակի, տեղի, խնդիրների, եղանակների և ժամանակի: Հատուկ ուշադրություն է դարձվում հակառակորդի մոլորեցման եղանակներին: Համաձայնեցված աշխատանքի հիմքը կազմում է հրամանատարների կողմից մարտական խնդրի ճիշտ ու միասնական ըմբռնումը:

Տեղանքում համագործակցությունը կազմակերպվում է լավ քողարկված տեղից տեսանելիության խորության հաշվառումով, թաքնվածության խնամքով պահպանմամբ: Տեղանք մեկնելու անհնարինության (օրինակ, ժամանակի սղության) դեպքում այդպիսի աշխատանքը կատարվում է ըստ քարտեզի (տեղանքի մանրակերտի): Նման դեպքում այն կազմակերպվում է մարտական խնդրի ողջ խորությամբ: Սովորաբար կիրառվում է երկու մեթոդ. առաջինը հիմնված է հրամանատարների ցուցումների, իսկ երկրորդը՝ ենթակա հրամանատարների վեկույցների վրա, ստորաբաժանումների գործողությունների հաջորդական վերջնամշակմամբ՝ ըստ խնդիրների, ժամանակի և տեղի, ինչպես նաև գործողությունների հնարավոր տարբերակների հիմնական տակտիկական դրվագների խաղարկմամբ: Չափազանց սուղ ժամանակի պայմաններում գերազանցապես օգտագործվում է ցուցումների մեթոդը: Մարտի ընթացքում համագործակցությունն իրականացվում է անընդմեջ, մշտապես ճշտվում է, իսկ իրադրության կտրուկ փոփոխությունների դեպքում կազմակերպվում է նորից:

Խնդիրների առաջադրումից և համագործակցության կարգավորումից հետո ստորաբաժանման հրամանատարը ձեռնամուխ է լինում մարտական ապահովման ու կառավարման հարցերի լուծմանը: Այստեղ ճշտվում են խնդիրներն ըստ մարտի յուրաքանչյուր տեսակի, օգտագործվող

միջոցների կազմը, մարտից առաջ և մարտի ընթացքում անհրաժեշտ միջոցառումների իրագործման եղանակներն ու ժամանակը:

Մարտում ստորաբաժանումների կառավարման համար գումարտակում, վաշտում ու դասակում ստեղծվում են հրամանատարական դիտակետեր (ՀԴ-ներ): Գումարտակի (վաշտի) ՀԴ-ն սարքավորվում է այնպիսի տեղում, որտեղից առավել լավ են դիտարկվում տեղանքը, հակառակորդը, սեփական ստորաբաժանումներն ու հարևանները, ինչպես նաև հնարավոր է անընդմեջ կառավարել: Մոտոհրաձգային դասակի հրամանատարը կառավարում է սովորաբար խրամուղում (հենակետի խորքում եղած ջոկի դիրքում) սարքավորված ՀԴ-ից կամ հետևակի մարտական մեքենայից (զրահատրանսպորտորից): Տանկային դասակի հրամանատարը մարտը ղեկավարում է տանկից: Նրանք ըստ հնարավորին պետք է տեսնեն տեղանքը հենակետի մատույցներում, պաշտպանության առջևի գծի դիմաց և թեևրում, դասակի ամբողջ մարտակարգը, ջոկերի դիրքերը (տանկերի կրակային դիրքերը) և հարևան հենակետերի դիրքերը, ինչպես նաև վաշտի ՀԴ-ն: Կառավարումը դասակում իրականացվում է ռադիոյով, ձայնով, ազդանշանային միջոցներով տրվող հրամաններով: Այստեղ կարևոր դեր կարող է խաղալ նաև անձնական օրինակը:

Նունականետային և հակատանկային դասակների հրամանատարները դասակները կառավարում են՝ գտնվելով դասակի ՀԴ-ում, իսկ երբ դասակները գործում են ջոկերով՝ ջոկերից մեկի դիտակետից: Առանձին գործող ջոկերի կառավարումը կատարում են դրանց տրված մոտոհրաձգային վաշտերի (դասակների) հրամանատարները:

Կառավարման հուսալիության համար գումարտակում (վաշտում) հրամանատարի որոշմանը և գնդի (գումարտակի) շտաբի պետի ցուցումներին համապատասխան կազմակերպվում է կապ: Կապի վիճակի համար պատասխանատվությունը դրվում է գումարտակի շտաբի պետի, իսկ վաշտում և մյուս ստորաբաժանումներում՝ մյուս հրամանատարների վրա: Կապը կազմակերպում և դրա կայուն աշխատանքի համար պատասխան է տալիս գումարտակի կապի պետը: Գումարտակի, վաշտի հրամանատարները իրադրության ցանկացած պայմաններում պետք է իրենց տրամադրության տակ ունենան կապ: Գումարտակում (վաշտում) կիրառվում են ռադիոկապ, կապի լարային, շարժական և ազդանշանային միջոցներ: Մինչև մարտը պաշտպանության նախապատրաստման մեջ հիմնա-

կան են համարվում կապի լարային և շարժական տեսակները: Մարտի ընթացքում լարային գծերը շարքից դուրս գալու դեպքում օգտագործվում են ռադիոկապ և ազդանշանային միջոցներ:

Լարային կապը հաստատվում է գումարտակի ՀԴ կապի հանգույցից առաջին էջերնի վաշտերի համապատասխան դիտակետերի հետ ըստ ուղղությունների, մնացած ստորաբաժանումների հետ՝ ըստ ուղղությունների կամ մեկական գծով՝ մի քանի ստորաբաժանումների հետ: Հակատանկային դասակի և զենիթային ստորաբաժանման հետ կապ կարող է հաստատվել դեպի մոտոհրաձգային վաշտ անցկայված գծով կամ այն վաշտի հրամանատարի գծով, որի հետ նրանք գործում են համատեղ: Ականանետային (հրետանային) մարտկոցում գիծն անցկայվում է ՀԴ-ից դեպի կրակային դիրք:

Գումարտակի ՀԴ կապի հանգույցից գիծ է անցկայվում նաև մինչև օժանդակող հրետանային դիվիզիոնի ՀԴ կապի հանգույցը՝ այդ դիվիզիոնի ուժերով ու միջոցներով: Երկրորդ էջերնի և գումարտակի թիկունքի վաշտերի հետ գծերն անցկայվում են գումարտակի ՀԴ պահեստային տեղով (նկ. 3):

Ռադիոկապը գումարտակում կազմակերպվում է ռադիոցանցերով, գնդի հրամանատարի հետ՝ գնդի հրամանատարի ռադիոցանցերով կարճալիք և գերկարճալիք դիապազոններում: Մոտոհրաձգային գումարտակը ենթակա ստորաբաժանումների հետ կապ է պահպանում, որպես կանոն, երկու ռադիոցանցով՝ գումարտակի հրամանատարի ռադիոցանցով, որը մտնում է գումարտակի հրամանատարի և շտաբի պետի, վաշտերի, դասակների ու ՀՄՍ հրամանատարների ռադիոկայանների կազմի մեջ, և հրամանատարի ռադիոցանցով՝ գումարտակի հրամանատարի, ականանետային մարտկոցի (ինքնագնաց հրետանային մարտկոցի) հրամանատարի, զենիթային, հակատանկային և մյուս մարտական ստորաբաժանումների հրամանատարների ռադիոկայանների կազմում (նկ. 4):

Մոտոհրաձգային վաշտերում գործում են վաշտերի հրամանատարների ռադիոցանցերը, որոնց մեջ ներառվում են ՀՄՍ ու զրահատրանսպորտորների ռադիոկայանները և վաշտերի հրամանատարների կրովի ռադիոկայանները: Օժանդակող մարտական ուղղաթիռների հետ համագործակցության համար ստեղծվում է համագործակցության գերկարճալիք ռադիոցանց ավիացիոն դիապազոնի ռադիոկայաններով՝ ավիացիոն նշանառուի կետի միջոցներով, որը սովորաբար տեղավորվում է գումարտակի ՀԴ-

ում: Լարային միջոցների առկայության դեպքում նրա հետ կարող է ստեղծվել լարային կապ:

Տանկային գումարտակի հրամանատարի ռադիոկապը գնդի հրամանատարի հետ անցկացվում է նրկու ռադիոյանցով՝ կարճալիք և չհերկարճալիք: Եթե գումարտակի հրամանատարը գտնվում է տանկի մեջ, կապը պահպանվում է կարճալիք ռադիոյանցով: Իսկ եթե գումարտակի տանկերը հանդերձված են Ռ-173 ռադիոկայաններով և Ռ-173Պ ռադիոընդունիչներով, գումարտակում, բացի գումարտակի հրամանատարի ռադիոյանցից, ստեղծվում են վաշտային ռադիոյանցեր: Դա թույլ է տալիս ապահովել ռադիոկայանի ռադիոյանցը, բարձրացնել կառավարման ճկունությունը, օպերատիվությունն ու կայունությունը (նկ. 5):

Գումարտակի տեխնիկական դիտարկման կետի ռադիոկայանը ներառվում է գնդի տեխնիկական ապահովման ռադիոյանցի մեջ: Նրան են միացվում նաև վնասված տանկերի, նորոգման-տարատեղման խմբերի (ինքնագնաց հակահրդեհային մեքենաների) ռադիոկայանները: Հարևան ստորաբաժանումների միջև համագործակցությունը պահպանելու համար կապը հիմնվում է այդ ստորաբաժանումների ռադիոմիջոցների, ինչպես նաև աջ հարևանի լարային ու շարժական միջոցների վրա:

Առանձնապես կարևոր նշանակություն ունի հրամանատարի գործնական աշխատանքը ստորաբաժանումներում. նպատակն է՝ հասնել դժարանց ժամանակին ու լրիվ նախապատրաստմանը մարտի: Հրամանատարը ստուգում է հրամանների ու ցուցումների կատարման ճշտությունը, ենթակաների կողմից հակառակորդի մասին տեղեկությունների և իրենց խնդիրների իմացումը:

Մարտում կառավարումը ենթադրում է մշտական հսկողություն ստորաբաժանումների գործողությունների նկատմամբ, իրադրության փոփոխությունների հաշվառում նախապես ընդունված որոշման և ստորաբաժանումների առաջադրանքների ժամանակին ճշտման միջոցով. գործողությունների համաձայնեցում այդ փոփոխություններին համապատասխան: Հրամանատարը ազդում է մարտի ելքի վրա իր տրամադրության տակ գտնվող երկրորդ էջերնի (ռեզերվի) և կրակային միջոցների օպերատիվ կիրառմամբ:

Կրակի կառավարումը ներառում է՝ նշանակետերի հետախույզումը, դրանց գնահատումը և խոցման հերթականության որոշումը, պենքի տեսակի ու պինամթերքի տեսակի, կրակի տեսակի և նրա վարման (կրակման) եղանակի ընտրությունը, նպատականշումը, հրամանի ար-

ձակումը կամ կրակային խնդրի առաջադրումը, ինչպես նաև կրակի արդյունքների դիտարկումը և նրա շտկումը:

Բոլոր դեպքերում պետք է հուսալի կապ պահպանվի սեփական ստորաբաժանումների, հարևանների, վերադաս հրամանատարի և շտաբի հետ: Պարտադիր են ստորաբաժանումների կողմից առաջադրանքների կատարման մշտական հսկողությունը և նրանց օգնությունն ցուցաբերելը: Մարտի ընթացքում աշխատելով ռադիոմիջոցներով՝ հրամանատարները պարտավոր են խստորեն պահպանել ռադիոխոսակցության սահմանված կարգը: Մարտի ժամանակ բոլոր հրամանները հստորդվում են ռադիոյով և բաց տեքստով: Ընդամին ստորաբաժանումների անվանումները և հրամանատարների պաշտոնները ծածկագրվում են ապոկալիպտիկ իմաստներով, իսկ տեղանքի կետերը՝ կողմնորոշիչներով, ինչպես նաև պայմանական (կողմավորված) անուններով:

Մրանք են ստորաբաժանումների հրամանատարների աշխատանքի իմանական ուղղությունները՝ ստորաբաժանումները մարտի նախապատրաստելու և խնդիրների կատարման ընթացքում նրանց ղեկավարելու ժամանակ:

Մուչն հողվածում տեղին է քննել նաև վաշտի, գումարտակի հրամանատարի գործունեության կարևոր ուղղություններից մեկը, որն իրականացվում է մարտական խնդիրների կատարմանը վաշտի և գումարտակի հրամանատարների ու անձնակազմի անմիջական նախապատրաստման ժամանակ:

Ելնելով տարածաշրջանում առկա իրադրությունից, երբ Ադրբեջանը ագրեսիվ քաղաքականություն է վարում հայ ժողովրդի, նրա անկախության և տարածքային ամբողջականության դեմ, մեր բանակի պորամասերը պահեցնում են երկրի համար առավել կարևոր բնագծեր, դիրքեր և բարձունքներ՝ պահպանելով հանրապետության համար կենսական կարևորություն ունեցող շրջանները: Ընդամին մեր պորքերի խմբավորումները տեղաբաշխվում են իրենց առաջադրված խնդիրներին համապատասխան: Մի մասը գրունըվում է սահմանում՝ լայնաճակատ մարտակարգով, մյուսը՝ երկրի ներսում (Վանաձոր և այլն) և պատվում է պլանային մարտական պատրաստությամբ: Ուսումնական պորամասերում և ստորաբաժանումներում ընթանում է սաների պատրաստումը ուսուցման իրենց հատուկ ծրագրով:

Իրադրության այսպիսի պայմաններում պորամասերի, ստորաբաժանումների պատրաստությունը պետք է իրականացվի տարբերակված ձևով, ըստ այս կամ այն պորամասի կողմից կատարվող խնդիրների:

Մարտական պատրաստության դասական համակարգը, օրինակ՝ Վանաձորի գնդինը, չպետք է տարածվի, օրինակ՝ Տավուշում կամ Նոյեմբերյանում մարտական առաջադրանք կատարող գնդի վրա և այլն: Կամ, օրինակ, վերցնենք մի գումարտակ, որը պետք է խորքից շարժվի դեպի սահման՝ փոխարինելու մեկ այլ գումարտակի, որն այնտեղ լայնաձակատ մարտակարգով մարտական առաջադրանք է կատարում: Չէ՛ որ դա կարող է լինել ցանկացած գումարտակ, իսկ պինդորների նախապատրաստումը այդ ընթացքում դեռևս ավարտված չլինել, կամ դա կարող է տեղի ունենալ նամայա հավաքների պորակոչված գումարտակի հետ կամ դեռևս ձևավորման շրջանում: Կամ ուսուցման սկզբնական շրջանում գտնվող գումարտակի հետ կամ եթե ծավալվում է գունդը ըստ պորահավաքային պլանի, կամ էլ դա մարտական դիրքերում արդեն տեղաձավարված գումարտակ է, որն ի վիճակի չէ ըստ պլանի, դասական սխեմայով պարապել և պատրաստվել մարտը վարելուն, և այլն:

Ահա այս և ուրիշ նման պայմանների համար մշակված են 10-օրյա պինավորժության կազմակերպման և ստորաբաժանումների ու պորամասերի մարտական լիաներդաշնակման սխեմա և ծրագիր (տես հավելվածը):

Գնդերի, բրիգադների, գումարտակների հրամանատարները առաջարկված մեթոդների հիման վրա պլանավորում են պարապմունքները: Պարապմունքների ղեկավարների հետ նախապես անցկացվում են հրահանգչամեթոդական պարապմունքներ, հաստատվում են հակիրճագրերը (կոնսպեկտները), կազմակերպվում է առաջիկա պարապմունքների կյոթատեխնիկական ապահովումը, և սահմանված ժամանակ սկսվում են վաշտն ու գումարտակը մարտի վարմանը նախապատրաստելու գործնական աշխատանքները, առաջիկա մարտական առաջադրանքների կատարումը: Ընդամին ապահովվում են պատշաճ վերահսկողություն և անձնակազմի հարյուր տոկոսանոց մասնակցություն:

Հրամանատարներն ամեն ամիս փոխում են թեման, պլանավորում են բոլոր տեսակի մարտական գործողությունների համալիր պարապմունքներ՝ ելնելով պորամասի, գումարտակի օպերատիվ դերից: Ընդամին մեթոդիկան հիմնականում մնում է անփոփոխ:

Այն գումարտակը կամ գունդը, որը խնդիր ունի մտնելու մարտական գործողությունների շրջան, արդեն պլանավորում է՝ առաջադրում խորքից, հաջորդաբար ծավալում և վերածում մարտակարգի և նշված բնագծից, հարևանների հետ համագործակցելով, անցում հարձակման՝

պաշտպանվող հակառակորդի վրա, մուտք նշված բնագիծ, հակագրոհների հետմղում, հետքաշում, մարտ շրջապատման մեջ, ելք մարտից և հետքաշում, անցում նպաստավոր բնագծի պաշտպանության և նախապատրաստում հակահարձակման և այլն: Եւ այս թեմատիկայով ամբողջ մեթոդը ամեն օր պետք է ուժի մեջ մնա՝ ջոկի մարտական լիաներդաշնակում, դասակի մարտական լիաներդաշնակում, հատուկ տակտիկական պարապմունքներ, ռադիովարժանքներ, հրամանատարական-շտաբային վարժանքներ, տակտիկական վարժանքներ, վաշտի տակտիկական վարժանքներ, գումարտակի տակտիկական վարժանքներ և այլն:

Հաջորդ ամսվա համար կարելի է պլանավորել՝ հետքաշում վրադեցրած բնագծերից, պորաշարժ, հակառակորդի շրջանցում և թևանցում: Հաջորդ անգամ կարելի է ամբողջ ծավալով մշակել պաշտպանական պորաշարժի ժամանակ ծագող խնդիրների կատարումը՝ գումարտակի մարտական պահակագործի հետքաշում, կենտրոնական վաշտի հետքաշում և նրանց կողմից 1-ին դիրքի 3-րդ խրամատի վրադեցում, հակառակորդի ներքաշում պաշտպանության խորք կամ լրիվ շրջապատում և բոլոր կողմերից պարտության մատնում՝ կառավարվող ակնապատված դաշտի վուզակցմամբ: Եւ այսպես շարունակ: Պարապմունքների համար պետք է ընտրել ցանկացած թեմա, և ոչ միայն հարձակման վերաբերյալ: Ստորաբաժանմանը անհրաժեշտ է սովորեցնել իրական գործողությունների՝ եւ հարձակման, եւ պաշտպանության, եւ հանդիպական մարտի, եւ հետքաշման, եւ շրջապատման մեջ մարտի, եւ հակահարձակման, եւ քաղաքի ներսում ընթացող մարտի: Բոլոր հնարքները պետք է հասցվեն կատարելության, որպեսզի իրական պայմաններում, եթե հակառակորդը ինչ-որ տեղ ճեղքի պաշտպանությունը, ապա վաշտը, գումարտակը կամ գունդը չփախչեն, այլ գրագետ, կազմակերպված ձևով, հաջորդական փուլերով հետ քաշվեն նախապես պատրաստված կամ նպաստավոր բնագծեր՝ ճանապարհին ուժասպառ անելով հակառակորդին, նրան հետ քաշելով իր դիրքերի խորքը, ստիպելով ձգել իր մարտակարգը, նրան կտրեն մատակարարման բազաներից, մաս առ մաս պարտության մատնելով, առավելագույնս ջլատելով նրան, ցարուցրիվ անելով նրա մարտակարգը և, վերջին հաշվով, վերջնականապես ջախջախեն նրան: Այս ամենն իրականացնելու համար անհրաժեշտ է մարդկանց, դասակը, վաշտը և մյուս ստորաբաժանումները նախապատրաստել նման գործողությունների և հնարքների: Չէ՛ որ մարդիկ չեն կարող

բռնչքամարտել և սուսերամարտել, եթե չգիտեն հարձակվելու և պաշտպանվելու հնարքները:

Ինչպես նշված է սխեմայի ծանոթագրություններում, առաջին մարտին 10-օրյա նախապատրաստությունից հետո հրամանատարները, ելնելով տվյալ ամսում ժամանակի առկայությունից, շարունակում են պինավարժությունը 10 օր առաջ ընդհատված թեմայով կամ կատարելագործում են 10 օրվա անկաժը՝ միայնակ հնարքները հասցնելով ավտոմատիզմի, իսկ հետո անկում են տարբեր ստորաբաժանումների կազմում նորմալ լիաներդաշնակ գործողությունների: Անհրաժեշտ է նախատեսել նաև տեխնիկայի, սպառազինության և այլ առարկաների ուսուցումը՝ ելնելով ժամանակի առկայությունից:

Համառոտակի սրանք են մարտական գործողությունների շրջանում գտնվող, մարտական հերթապահություն կատարող և մարտական նշանակման շրջան մեկնելու պատրաստվող պինժառայողների և ստորաբաժանումների 10-օրյա ուսուցման մեթոդական հանձնարարականները:

Համառոտակի սրանք են մարտական գործողությունների շրջանում գտնվող, մարտական հերթապահություն կատարող և մարտական նշանակման շրջան մեկնելու պատրաստվող պինժառայողների և ստորաբաժանումների 10-օրյա ուսուցման մեթոդական հանձնարարականները:

«Հաստատում են»:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար
Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
10.03.1995 թ.

Հ ա վ ե լ վ ա ծ

Ս Յ Ե Մ Ա

Մարտական գործողությունների շրջաններում գտնվող, մարտական հերթապահություն կատարող և մարտական շրջան դուրս գալուն պատրաստվող պինժառայողների և ստորաբաժանումների ուսուցման և մարտական լիաներդաշնակման կազմակերպման

Վաշտի պատրաստություն			Գումարտակի լիաներդաշնակում		Գնդի լիաներդաշնակում		
1 - 2-րդ օրեր	3-րդ օր	4 - 5-րդ օրեր	6-րդ օր	7 - 8-րդ օրեր	9 - 10-րդ օրեր	11 - 12-րդ օրեր	
Ձևնկերի նախապատրաստում.	Գասակի լիաներդաշնակում ըստ հետևյալ թեմատիկայի.	Վաշտի լիաներդաշնակում.	- պարագմուները հրամանատարական կազմի հետ տեղանքի մանրակերտի (արկղի) օգտագործումով, - տակտիկական հատուկ պարագմուները հրամանատարական կազմի հետ՝ հետիոտն կարգով, - տակտիկական հատուկ պարագմուները վաշտի կազմում, - տակտիկական պինժառայողություն առանց մարտական հրաձգության կամ մարտական հրաձգության թեմայի.	- Տակտիկական հատուկ պարագմուները ամբողջ անձնակազմի հետ. - հաստիքային (առկա) կառուցվածքում, - գումարտակային տակտիկական վարժանքներ առանց մարտական հրաձգության ըստ 6-րդ օրվա թեմայի:	- պարագմուները գնդի (մանրակերտի) օգտագործումով՝ դասակների ու ջոկերի հրամանատարների հետ. - տակտիկական հատուկ պարագմուները հրամանատարական կազմի հետ՝ հետիոտն կարգով, - տակտիկական հատուկ պարագմուները վաշտի կազմում, - տակտիկական պինժառայողություն առանց մարտական հրաձգության կամ մարտական հրաձգության թեմայի.	- պարագմուները գնդի (մանրակերտի) օգտագործումով, - հաստիքային (առկա) կառուցվածքում, - գումարտակային տակտիկական վարժանքներ առանց մարտական հրաձգության ըստ 6-րդ օրվա թեմայի: - մարտական գործողություններ վարելուն (մարտական հերթապահություն կատարելուն) կամ մարտական գործողությունների շրջան տեղափոխվելուն պատրաստության ստուգատես:	Ձևնկայ վերագրա հրամանատարությանը՝ պատրաստ լիաներ մատնել: Հանգիստ, անձնակազմի կարգի բերելը: Ձանապահ նյութատեխնիկական միջոցների ստացում:
- ֆունկցիոնալ պարտականությունների ուսումնասիրում ըստ մարտական լիաներդաշնակման, - միայնակ պատրաստում, - ուսումնական և ստորգործական հրաձգությունների վարժությունների կատարում, - ձևերի նմանակների նետում: Տոկի լիաներդաշնակում, - ջոկի մարտական լիաներդաշնակում:	- պաշտպանություն. - անկում հարձակման, նախաճառ հակառակորդի հետպայնում, - հակահարձակման հետմղում, - մարտից դուրս գալը և հետ քաշվելը, - ամրապնդում բնագծում, - հակահարձակման հետմղում և անկում հարձակման, - նպատավոր բարձունքի (բրնագծի) գրավում, - դասակի մարտական լիաներդաշնակում:	- պարագմուները տեղանքի արկղի (մանրակերտի) օգտագործումով՝ դասակների ու ջոկերի հրամանատարների հետ. - տակտիկական հատուկ պարագմուները հրամանատարական կազմի հետ՝ հետիոտն կարգով, - տակտիկական հատուկ պարագմուները վաշտի կազմում, - տակտիկական պինժառայողություն առանց մարտական հրաձգության կամ մարտական հրաձգության թեմայի.	- պարագմուները հրամանատարական կազմի հետ տեղանքի մանրակերտի (արկղի) օգտագործումով, - տակտիկական հատուկ պարագմուները հրամանատարական կազմի հետ՝ հետիոտն կարգով, - տակտիկական հատուկ պարագմուները վաշտի կազմում, - տակտիկական պինժառայողություն առանց մարտական հրաձգության կամ մարտական հրաձգության թեմայի.	- Տակտիկական հատուկ պարագմուները ամբողջ անձնակազմի հետ. - հաստիքային (առկա) կառուցվածքում, - գումարտակային տակտիկական վարժանքներ առանց մարտական հրաձգության ըստ 6-րդ օրվա թեմայի:	- պարագմուները գնդի (մանրակերտի) օգտագործումով, - հաստիքային (առկա) կառուցվածքում, - գումարտակային տակտիկական վարժանքներ առանց մարտական հրաձգության ըստ 6-րդ օրվա թեմայի: - մարտական գործողություններ վարելուն (մարտական հերթապահություն կատարելուն) կամ մարտական գործողությունների շրջան տեղափոխվելուն պատրաստության ստուգատես:	Ձևնկայ վերագրա հրամանատարությանը՝ պատրաստ լիաներ մատնել: Հանգիստ, անձնակազմի կարգի բերելը: Ձանապահ նյութատեխնիկական միջոցների ստացում:	

Ծանոթագրություն.

- պարագմուները ըստ նշված սխեմայի անկախում են ամիջ մեկ անգամ,
- մնացած ժամանակը պլանավորվում է 10-օրյա ծրագրով անկախ կատարելագործման համար հետևյալ հաջորդականությամբ՝ միայնակ պատրաստություն, ջոկի, դասակի, վաշտի, գումարտակի և գնդի լիաներդաշնակում,
- մնացած բոլոր ստորաբաժանումներն ու պարամասերը պարագմուներն և սովորական սխեմայով՝ ըստ կիսամյակի և տարվա մարտական պատրաստության ծրագրի (ուսումնական պրոգնոզի, մարտական գործողությունների շրջաններից հետո գտնվող պրոգնոզի):

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ
գեներալ-լեյտնանտ Ն. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ա. Ե. ՄԱՐԳՅԱՆ, մայր, տեխնիկական գիտությունների դոկտոր,
ՀՀ ՊՆ գիտության և տեխնիկայի վարչության պետ

Զինված ուժերի կառուցման և կիրառման՝ որպես ստեղծման, գործառման և վարձապան համալիր գործընթացի, տեսական հիմնավորման պահանջմունքը անհրաժեշտաբար թելադրում է նորովի գնահատել ռազմական պրակտիկայի ոլորտը հետազոտող գիտությունների հնարավորությունները, ճշտել դրանց տեղը և դերը այն գիտելիքների համակարգում, որոնք վերաբերում են պատերազմներին, ռազմական շինարարությանը և ռազմական անվտանգությանը, իսկ սրանք հետազոտության օբյեկտ են ոչ միայն բուն ռազմագիտության, այլև մի շարք հասարակական, բնական և տեխնիկական գիտությունների համար: Վերջիններս շրջանակներում ձևավորվում են ռազմագիտությանը սահմանակից հատուկ տեսություններ: Եւ քանի որ այստեղ հետազոտության օբյեկտը նույնն է, ապա անհրաժեշտություն է առաջանում կազմակերպելու միջ-ճյուղային հետազոտություններ և կոորդինացնելու համապատասխան գիտական ծրագրերը:

Բացի դրանից, պատերազմը, պիևվորական շինարարությունը, ընդհանրապես ռազմական պրակտիկան, որպես բարդ երևույթներ ու գործընթացներ, ապրում են սեփական կյանքով, ունեն իրենց օրենքները, օրինաչափություններն ու սկզբունքները, ուստի կարող են և պետք է հետազոտվեն ոչ միայն ըստ մասերի, այլև ամբողջական ձևով՝ որպես մի համալիր:

Դրա հետ մեկտեղ կան հանգամանքներ, որոնք ստիպում են վերախմաստավորել ռազմագիտության որոշ հիմնարար կանխադրույթներ: Նկատի ունենք հետևյալ հանգամանքները:

1. Վերջին տարիներին տեղի են ունեցել խոր փոփոխություններ հասարակական գիտությունների աշխարհայացքային և մեթոդաբանական հիմունքներում:
2. Փոփոխություններ են սկսվել հասարակական-քաղաքական ու տնտեսական հարաբերությունների համակարգում:
3. Վարչաիրավաբանական համակարգի տնական գոյության ընթացքում հաստատվել է, երբեմն էլ՝ վերևից եկող հրահանգով, ռազմագիտության համապատասխան պաշտոնական «հայեցակարգ», որի հիման վրա որոշվել են

ռազմագիտության էությունը, բովանդակությունը, կառուցվածքը, մեթոդները:

4. Առկա է որոշակի պահպանողականություն ռազմագիտական մտածողության մեջ:

5. Հայաստանում լուրջ ուշադրություն չի դարձվել պատերազմի և ռազմական շինարարության հետազոտման խնդիրներին:

Հենց այս հանգամանքների հաշվառումով էլ խնդիր է դրվում կազմակերպելու և, որոշակի առումով, վերակառուցելու ռազմագիտական աշխատանքը մեր հանրապետությունում՝ ի շահ վիճված ուժերի, ստեղծելու կադրերի պատրաստման համապատասխան հիմնարկների ցանց և բավաճյուղ համակարգ:

Ինչպես հայտնի է, ռազմագիտությունը հավաքական հասկացություն է, որը մեկ միասնական համակարգի մեջ միավորում է բավաթիվ ռազմական գիտաճյուղեր, որոնք պատերազմը և պետության ռազմական անվտանգությունը հետազոտում են տարբեր կողմերից¹: Այդ առումով ռազմագիտության կառուցվածքը կարող է ներկայացվել հետևյալ տեսքով:

Ռազմագիտության կառուցվածքը

1. Պատերազմի տեսություն
2. ՁՈՒ-ի շինարարության տեսություն
 - 2.1. ՁՈՒ-ի կառուցվածքը
 - 2.2. ՁՈՒ-ի մարտունակությունը, մարտական և զորահավաքային պատրաստականությունը
 - 2.3. ՁՈՒ-ի կառավարումը
3. Սպառապիևության տեսություն. ռազմական վեևք և ռազմական տեխնիկա
4. Ռազմական արվեստի տեսություն
 - 4.1. Ռազմավարություն
 - 4.2. Օպերատիվ արվեստ
 - 4.3. Մարտավարություն
5. Զինվորական պատրաստման տեսություն. ուսուցում և դաստիարակություն
6. Թիկունքի տեսություն
7. Ռազմամասնագիտական գիտություններ
 - 7.1. Ռազմասոցիալական գիտություններ
 - 7.1.1. Ռազմական սոցիոլոգիա

¹ Տես В. Н. Саенко. Что же такое военная наука? "Военная мысль", N 7 1994 г.

- 7.1.2. Ռազմական քաղաքագիտություն
- 7.1.3. Ռազմական իրավագիտություն
- 7.1.4. Ռազմական տնտեսագիտություն
- 7.1.5. Ռազմական հոգեբանություն
- 7.2. Ռազմաբնական գիտություններ
 - 7.2.1. Ռազմական բժշկություն
 - 7.2.2. Ռազմական էկոլոգիա
 - 7.2.3. Ռազմական երկրաբանություն
 - 7.2.4. Ռազմական աշխարհագրություն
 - 7.2.5. Ռազմական ջրօդերևութաբանություն
- 7.3. Ռազմատեխնիկական գիտություններ
 - 7.3.1. Ռազմական զենքի և ռազմական տեխնիկայի կոնստրուկտիվ տեսություն
 - 7.3.2. Ռազմական բախտիկայի տեսություն
 - 7.3.3. Ռազմական ճարտարագիտություն
 - 7.3.4. Ռազմական երկրաբաշխություն և նավարկագիտություն
 - 7.3.5. Ռազմական տեղագրություն և քարտեզագրություն
 - 7.3.6. Ռազմատեխնիկական կիբեռնետիկա
- 8. Ռազմական պատմություն
 - 8.1. Պատերազմների պատմություն
 - 8.2. ՋՈՒ-ի պատմություն
 - 8.3. Սպառազինության պատմություն
 - 8.4. Ռազմական արվեստի պատմություն
 - 8.5. Ռազմագիտության պատմություն

Արդյունավետ ռազմագիտական գործունեության ապահովումը բնականաբար ենթադրվում է ռազմագիտական հաստատությունների որոշակի համակարգ և դրանց որոշակի կոորդինացիոն համագործակցություն: Մեզ թվում է, որ հանրապետության ներկա պայմաններում դրա համար կարող էր ընդունելի լինել ռազմագիտական գործող կամ պլանավորվող հաստատությունների և պետական ապարատի ստորաբաժանումների համալրի հետևյալ տարբերակը:

1. ՀՀ ՊՆ շրջանակներում
 - գիտության և տեխնիկայի վարչություն,
 - գիտատեխնիկական խորհուրդ,
 - գիտական աստիճանների շնորհման մասնագիտացված գիտխորհուրդ,
 - գիտատեխնիկական գրադարան,
 - ռազմագիտական հանդես,
 - ռազմական գիտությունների ակադեմիա,
 - ռազմական գիտահետազոտական ինստիտուտներ,
 - ժամանակավոր գիտատեխնիկական կոլեկտիվներ:
2. ՀՀ ՊՆ-ից դուրս
 - համապատասխան կառույցներ նախագա-

հի, Գերագույն խորհրդի, կառավարության աշխատակազմերում և էկոնոմիկայի նախարարության կազմում,

— պաշտպանական և թեմատիկ հանձնաժողովներ, ինչպես նաև պաշտպանական հետազոտությունների հատուկ բաժին գիտությունների ազգային ակադեմիայում,

— պաշտպանական հետազոտությունների կոորդինացիայի բաժիններ ՀՀ գիտության և բիզնեսի կենտրոնում (որը հիմնվել է ՌԴ բնական գիտությունների միջտարածաշրջանային ոչ պետական ակադեմիայի կողմից), Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայում, տեղեկությունների միջազգային ակադեմիայի ռազմական համակարգաբանության հայկական բաժանումներում,

— կառավարությանն առընթեր արդյունաբերության պաշտպանական ճյուղերի հատուկ վարչություն:

Գիտական հետազոտությունների համար հատկացվող ֆինանսական միջոցների բաշխման բարդության նկատառումով, հաշվի առած աշխատանքների գերակայությունը և ռազմատնտեսական արդյունավետությունը, առանձնապես կարևոր է դառնում ռազմագիտական աշխատանքների կոորդինացումը:

Բնական է, որ, ինչպես էլ վերակառուցվեն գիտական աշխատանքի ղեկավարման համակարգը, հետազոտությունների ֆինանսավորման կարգը, գիտական կազմակերպությունների կառուցվածքը, այնուամենայնիվ գլխավոր օղակ մնում են գիտական կադրերը:

Ռազմագիտական հետազոտությունների արդյունավետությունը կախված է առկա գիտական ներուժի մեծությունից և նրա խելամիտ օգտագործումից, իսկ վերջինիս արդյունավետությունը որոշվում է հետազոտությունների նպատակամիտությամբ, հետազոտական գործընթացի կազմակերպական, տնտեսական և նյութատեխնիկական ապահովմամբ: Գիտական ներուժի կառուցվածքում պետք է առանձնապես երկու հիմնական բաղադրիչներ՝ կադրային և տեխնոլոգիական: Վերջինս ներառում է գիտամեթոդական, նյութատեխնիկական ու կազմակերպական-վարչական ապահովման ենթահամակարգեր:

Փոքր-ինչ ավելի հանգամանորեն կանգ առնենք ռազմատեխնիկական քաղաքականության վրա, որն իր հպորդության պահպանման ու մեծացմանը հետամուտ ամեն մի պետության գործունեության կարևորագույն ուղղությունն է: Միասնական ռազմատեխնիկական քաղաքականության ձևավորման համար պատասխանատվությունը նպատակահարմար է ՀՀ նախա-

գահի համապատասխան հրամանագրով դնել ՀՀ ՊՆ վրա: Այդ պատասխանատվությունը ձևավորվում է ռազմական դոկտրինայի դրույթներին, երկարաժամկետ նպատակներին, գերակայություններին և ՀՀ զինված ուժերի կառուցման ծրագրերին համապատասխան, որոնք որոշվում են ՀՀ նախագահի՝ զինված ուժերի գլխավոր հրամանատարի կողմից՝ արդյունաբերության հնարավորությունների և պաշտպանության կարիքների համար ՀՀ կառավարության և Գերագույն խորհրդի հատկապարձ բյուջետային հատկացումների հաշվառմամբ:

Ժամանակակից պայմաններում ու մոտակա հեռանկարում գիտատեխնիկական քաղաքականության գլխավոր նպատակներն են՝

— առկա սպառազինության ու ռազմական տեխնիկայի պահպանումը մարտական վիճակում և զինամթերքի ու սովորական սպառազինության երաշխավորված մատակարարումը զինված ուժերին,

— բանակի սպառազինության խելամիտ համակարգի ստեղծումը,

— սպառազինության և ռազմական տեխնիկայի արդյունավետության բարձրացումը արդիականացման, աստիճանական վարճացման միջոցով, ինչպես նաև նրա տեխնիկական վիճակի նկատմամբ հսկողության միջոցների կատարելագործման միջոցով,

— պայմանների ստեղծումը զինված ուժերի փորահավաքային ծավալման համար,

— գիտատեխնիկական արտադրանքի պաշարի ձևավորումը (թեև դա, բնականաբար, կապված կլինի մեծ ռիսկի հետ)՝ հաշվի առնելով սպառազինության ու ռազմական տեխնիկայի վարճացման անհամաչափությունը:

Կարևոր է ժամանակակից սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով զինված ուժե-

րի հանդերձվածության ռազմափոփոխման մակարդակի որոշումը, բանակի կառուցման տարբեր պայմաններում զենքի տարբեր տեսակների միջև ռազմափոփոխման համամասնությունների պահպանումը՝ ընդամին հաշվի առնելով ՀՀ կենդանի ուժի պաշարի սահմանափակությունը և աշխարհագրական դիրքի ու ռելիեֆի առանձնահատկությունները: Ռազմատեխնիկական քաղաքականության էությունն այն է, որ սպառազինության ու ռազմական տեխնիկայի պահանջումները, դրանց ստեղծման հեռանկարային պլաններն ու վարճացման գերակա ուղղությունները որոշում են՝ ելնելով խաղաղ ու պատերազմական ժամանակ ՁՈՒ-ի առջև դրված խնդիրներին այդ ուժերի սպառազինության համապատասխանության վերլուծությունից: Այսպիսի մոտեցման մեջ օրգանապես հարակցված են սպառազինության ու ռազմական տեխնիկայի ծրագրային-նպատակային վարճացման կարևորագույն սկզբունքները՝ այլընտրանքային տարբերակների համակողմանի փորձաքննությամբ:

Հարկ է նշել, որ փորքերը պետք է հանդերձված լինեն անհրաժեշտ սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով՝ արտաքին բախման, խաղաղարար գործունեության, ներքին բախման շրջանակներում գործելու համար և վթարների, հասարակական ու տարերային աղետների ժամանակ հնարավոր բոլոր տեսակի խոցող ներգործություններից բնակչության, ստտեսական օբյեկտների, ինչպես նաև շրջակա բնական միջավայրի պահպանության խնդիրների լուծման համար:

Եզրափակելով՝ հարկ ենք համարում նշել, որ հանրապետությունում ռազմագիտական աշխատանքի առաջարկվող համակարգը մենք, անշուշտ, չենք համարում ավարտուն, բայց կարծում ենք, որ այն կարող է հիմք ծառայել այդպիսի համակարգի մշակման համար:

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Բ. Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, փոխգնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետ*

Հայաստանի ՁՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության, ինչպես և իրենց իսկ ՁՈՒ-ի ձևավորումը տեղի էին ունենում իրական մարտական գործողությունների պայմաններում, այդ պատճառով նրա կառուցվածքը և գործառնական կազմակերպությունը պարզապես չէին ստեղծված հանգամանքներով: Սկզբնական շրջանում, բուժճանաչության հստակ կազմակերպական կառուցվածք, հոսպիտալային բազաներ, շարժունակ դաշտային հոսպիտալներ չլինելու պատճառով բուժապահովումն իրականացվում էր հատուկ խմբերի միջոցով, իսկ որպես հոսպիտալներ օգտագործվում էր քաղաքային կազմակերպությունների անկախ ցանցը:

Ներկայումս կայացման սկզբնական փուլն անցած է, և ՁՈՒ-ի բուժճանաչությունը կանգնած է հետագա զարգացման ուղու հայեցակարգային ընտրության անհրաժեշտության առջև: Այդ զարգացումը պարզապես չէր չափով կախված է ռազմական հայեցակարգից և ընդհանրապես ՀՀ արգային անվտանգության համակարգի ու մասնավորապես արգային բանակի ստեղծման մեջ գերազանցություններից:

Արտասահմանյան երկրների բանակների մեծ մասի ստեղծման և գործառնական կազմակերպությունը մեր հանրապետության համար ծայրահեղ սահմանափակ մարդկային և նյութական պաշարների պայմաններում անընդունելի են: Ավելին, նույնիսկ այն բանակների կառուցվածքային բնութագրերը և մարտավարությունը, որոնց երկրները կարծես թե մի շարք չափորոշումներով մոտ են մեզ (Իսրայել, Շվեդիա, Շվեյցարիա, Բելգիա), եթե մեխանիկորեն մեր պայմանների մեջ տեղափոխվեն, հղի կլինեն միջոցների անօգուտ վատնումով և մարտական գործողությունների ծավալման դեպքում մարդկային կորուստների հնարավոր ավելացումով: Այդ նկատառումով նույնիսկ առաջին հայացքից ամենահարմար արտասահմանյան կազմակերպությունը պետք է լրջորեն լրամշակվեն և հարմարեցվեն մեր հնարավորություններին, ռազմական գործողությունների թատերաբեմին, աշխարհաքաղաքական կարգավիճակին և անգամ արգային հոգեբանությանը: Օրինակ՝ Իսրայելի բանակի

հիմքը անապատում մարտեր մղելու և հարմարեցված մարտական մեքենաներով վրահատանկային զորամասերն են: Բանակն ամենամյա բազմամիլիարդանոց դոլլարային «ներարկումներ» է ստանում ԱՄՆ-ից, ծովից կարելի է ազատ մուտք գործել երկիր, իսկ «կանանց գումարտակները» մարտական գործողություններում կարևոր նեցուկ են համարվում: Բայց, ինչպես հայտնի է, տանկերը մեր լեռնային պայմաններում քիչ արդյունավետ են, մեր երկիրը խիստ կաշկանդված է միջոցների առումով, անարգել արտաքին ճանապարհներ չկան, իսկ կանանց գումարտակները, ըստ մեր հոգեբանության, անցանկալի ծայրահեղություն են: Մեր յուրահատկությունն այնպիսին է, որ ցանկացած կազմակերպություն կրկնօրինակել փորձելիս անմիջապես ի հայտ են գալիս բազմաթիվ անհամապատասխանություններ: Անկասկած է մի բան. մեր երկիրը կարիք ունի հարաբերականորեն փոքրաքանակ, սակայն մասնագիտական բարձր մակարդակ ունեցող, լավ սպառազինված շարժունակ և մարտունակ բանակի՝ համապատասխան զորահավաքային պահեստային ուժերով: Դրան համապատասխան պիտի լինի նաև նրա ռազմաբժշկական ծառայությունը՝ հավաք, բարձր որակավորումով, գիտության, տեխնիկայի և ռազմաբժշկական ժամանակակից նվաճումների մակարդակով գործող:

ՁՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության արդյունավետության բարձրացման հայեցակարգորեն կարևոր ուղիներից մեկը ռազմական և քաղաքային կազմակերպության հիմնարկների համատեղ աշխատանքն է, օրինակ՝ պիլովորական հոսպիտալների և քաղաքային կազմակերպության հիվանդանոցների գործակցությունը վիրավորների պահպանման ներհուսի դեպքում, այլ կերպ ասած՝ ռազմաբժշկական վարչությանը և առողջապահության նախարարությանը ենթակա քաղաքային կազմակերպության հիմնարկների ռազմաբժշկական գործունեության միավորումը: Կան այդպիսի միավորման բազում հնարավոր տարբերակներ՝ սկսած քաղաքային կազմակերպության հիվանդանոցներն ու գիտահետազոտական ինստիտուտները (օրինակ՝ վիրաբուժության և վնասվածքաբանության ԳՀԻ-ները) որպես մասնագի-

տացված օգնության մի փուլ օգտագործելուց և վերջապես քաղաքացիական հիվանդանոցը համալրելով, ասենք, շարժական վիրաբուժական տարատեղումային հոսպիտալով կամ մասնագիտացված ռազմաբժշկական վիրաբուժական խմբով՝ իր ողջ աշխատակազմով, սարքավորումներով, լաբորատորիաներով, արյան պահեստարանով և այլն: Ընդամին ռազմական և քաղաքացիական մոդուլների գործողությունների և աշխատանքի առավելագույն համաձայնեցվածության հասնելու դժվարությունները միանգամայն հաղթահարելի են: Օրինակ՝ քաղաքացիական հիվանդանոցի հիմքի վրա պինդորական և քաղաքացիական բժիշկների համատեղ աշխատանքի ժամանակ պինդորականներն ապահովում են լրացուցիչ աշխատակազմի հատկացումը և աշխատանքի հստակ կազմակերպումը, քաղաքացիական բժիշկներն ապահովում են ստացիոնար բաժանմունքների (անհապաղ բուժման, վիրահատարանների և այլն) աշխատանքը, որոնք, որպես կանոն, իրենց հնարավորություններով զգալիորեն գերազանցում են շարժական հոսպիտալների համապատասխան բաժանմունքներին, ընդամին տեղաձաձված ման վրա ժամանակ չի ծախսվում:

Ռազմաբժշկական աշխատակազմը՝ որպես տեսակավորման և անհետաձգելի օգնության ցուցաբերման մեջ առավել բարձր որակավորում ունեցող, մարտական վնասվածքների դեպքում մղվում է առաջին պլան: Քաղաքացիական կազմը, որը փաստորեն չի մասնակցում տեսակավորմանը և սկզբնական վերակենդանացմանը, անհետաձգելի բուժման բաժանմունքից ընդունում է այն վիրավորներին, որոնց, պինդորական վիրաբույժի նպրակապության համաձայն, հակացուցված է տեղափոխումը թիկունքային հոսպիտալ: Այսպիսով, քաղաքացիական հիվանդանոցը տվյալ դեպքում օգտագործվում է որպես թիկունքային:

Միայնալ հոսպիտալի վարչական ղեկավարումը կարող է իրականացնել ինչպես հիվանդանոցի գլխավոր բժիշկը, այնպես էլ պինդորական հոսպիտալի կամ գորակցող խմբի պետը (ավելի նպատակահարմար է առաջին տարբերակը): Ձինվորականները պիտի իրագործեն վիրավորների պնզվածային ներհոսի, տեսակավորման, վերակենդանացման և տարատեղման (էվակուցման) ընդհանուր վերահսկողությունը: Ձինվորական և քաղաքացիական բժիշկները պիտի գործեն հիմնականում ինքնուրույն՝ չխառնվելով իրար և ունենալով իրենց հստակ կանոնակարգված գործառույթները: Որոշ միախառնում հնարավոր է միայն առավել արդյունավետ գործունեության և կապերի հեշտացման նկատառումներով:

Ժամանակ առ ժամանակ պինդորական և քաղաքացիական բժիշկները պիտի համագործակցության վերջնամշակման վարժանքներ անցկացնեն, իսկ պաշտպանության նախարարությունը կամ ռազմաբժշկական ծառայությունը և առողջապահության նախարարությունը պիտի պաշտոնական պայմանագրեր կնքեն, որոնցում հստակ մշակված ձևով նշված լինեն ռազմական գործողությունների ծավալման կամ տարերային աղետների և վթարների դեպքում միավորման և համագործակցության սկզբունքները:

Ռազմաբժշկական ծառայության կազմակերպական կառուցվածքի առանձնահատկությունները, ինչպես նաև նրա աշխատակազմի՝ դաշտային պայմաններում անհետաձգելի օգնության ցուցաբերման հմտություններին տիրապետելը ցանկացած շրջանում բուժատորաբաժանումների տեղաձաձվման հնարավորություն են ստեղծում և թույլ են տալիս այդ ծառայությունը դիտել որպես նաև տարերային աղետների ժամանակ ազգաբնակչությանը ցուցաբերող բուժօգնության առաջնահերթ աղբյուր: Հաշվի առնելով մեր տարածքի երկրաշարժամիտությունը, հանրապետությունում ԱԿ-ի և քիմիական ձեռնարկությունների առկայությունը՝ անհրաժեշտ է կազմել ռազմաբժշկական ծառայության քիմիական, ճառագայթահարական և մանրէաբանական պաշտպանության ստորաբաժանումներ, որոնք ինչպես ռազմական անհրաժեշտության, այնպես էլ տարերային աղետների ու վթարների դեպքում կկարողանան, համապատասխան պետական կառույցների հետ համագործակցելով, ներգրավվել հետևանքների վերացման գործընթացի մեջ: Ընդ որում պետք է հաշվի առնել, որ տուժածներին շուտափույթ բուժօգնություն ցուցաբերելու առավելագույն կարիքը զգացվում է աղետից հետո առաջին երկու-երեք օրվա ընթացքում:

Մարտական գործողությունների ժամանակ բուժօգնության արդյունավետության բարձրացման համար բուժապահովման կազմակերպման մարտավարությունը պիտի զգալի փոփոխությունների ենթարկվի: Նախկինում առաջին բուժօգնությունը (արյունահոսության դադարեցում, վերակենդանացման պարզագույն միջոցառումներ) իրագործում էին մարտադաշտում սանիտարները կամ պինդառայողներն իրենք՝ որպես ինքնօգնություն և փոխօգնություն, բժիշկները անհետաձգելի վիրաբուժական միջամտությունները կատարում էին դաշտային հոսպիտալներում կամ որպես հոսպիտալ գործառողջապահության բուժհիմնարկներում, իսկ բարձր որակավորում ունեցող մասնագետները թիկունքային հոսպիտալներում և հիվանդանոցներում ուղղում էին ավելի վաղ փուլերում

թույլ տրված թերալումնները: Բայց ներկայումս ակնհայտ է, որ հանուն առավելագույն թվով մարդկանց կյանքի փրկության նպատակահարմար է մասնագիտացված բժշկական օգնությունը հնարավորին չափ մոտեցնել ռազմաճակատի գծին, թեև դա հղի է հավատակորդի կողմից հարձակման. գրոհի ենթարկվելու անմիջական մտանգով: Հնարավոր տարբերակ կարող է լինել գնդի բուժկետի տեղաբաշխումը ճակատային գծից 5 կմ. տարածեղման կետերին՝ ճակատային գծից 10 կմ. օժանդակության հոսախտալներին՝ տարածեղման կետերից 40—50 կմ հեռավորության վրա (որոշ դեպքերում կարելի է բավարարվել առանց վերջիններիս): Ճակատային գծի 5—10 հավաքակետերից վիրավորները պահամեքենաներով տեղափոխվում են բուժկետ և ապա տարատեղում հոսախտալները ցամաքային կամ օդային սանիտարական փոխադրամիջոցներով՝ կախված վերքի բնույթից և փոխադրամիջոցների առկայությունից:

Ուպամբժշկական ծառայության արդյունավետության բարձրացումը անպատկերացելի է առանց սանիտարական փոխադրամիջոցների արդիականացման և բավարար հանդերձման: Այլընտրանք չունի յուրաքանչյուր թրթուրավոր մեքենա կարող է ծառայել որպես սանիտարական փոխադրամիջոց, եթե համապատասխան կերպով սարքավորվի և պայմաններ ապահովի վիրավորներին անհետաձգելի օգնություն ցուցաբերելու համար: Օրինակ՝ պահամեքենաները, հետևակի մարտական մեքենաները նվազագույն կառուցվածքային փոփոխություններից (օրինակ՝ ներքին լուսավորվածության բարելավումից) և վերակենդանացման հարմարանքներով, կոկորդադիտակով, էնդոշնչափողային խողովակներով, շնչափողահատման լրակազմով, փշովի դողերով և դեղորայքով հագեցվելուց հետո կարող են օգտագործվել որպես սանիտարական ամենագնաց փոխադրամիջոցներ: Սակայն ալելի նպատակահարմար կլինի ունենալ ոչ թե վերասարքավորված. այլ հատուկ կերպով սանդղված սանիտարական փոխադրամիջոցներ: Որպես հեռանկար՝ անհրաժեշտ է ձեռք բերել և շարք մտցնել նոր սերնդի խոշորածավալ սանիտարական մեքենաներ, որոնք հարմարեցված են տեղափոխման ժամանակ վիրավորների բժշկական խնամքին և բուժմանը: Առանձնապես այժմեական է բուժծառայության ապահովումը բավարար քանակով դյուրաշարժ, թեթև սանիտարական ուղղաթիռներով:

Բժշկական ապահովման մեջ արդյունավետ նորամուծություն կարող է լինել ամբողջապես կցորդների վրա սարքակազմված շարժական հոսափտալների օգտագործումը: Օրինակ՝ 12-17

պրահապատ կցորդների վրա կարող է սարքակազմվել հոսափտալ, որի մասնագիտացված հանգույցները կարող են գործառել ինքնուրույնաբար: Նպատակահարմար է նաև բեռնամփոփներում տեղավորված հոսափտալների օգտագործումը, որոնք կարող են տեղափոխվել բեռնամփոփատարներով կամ շատ սեղմ ժամկետներում ուղղաթիռներով տեղափոխվել հարկ եղած տեղաբաշխման շրջան: Սակայն առավել էժան է այլումինով ամրանավորված պոլիուրետան պանելներից կառուցված հոսափտալի տեղաձավալումը, ընդ որում այդպիսի մոտեցումը թույլ է տալիս ստեղծել այնպիսի շինություններ, որոնց չափերը հինգ անգամ գերապանկում են բեռնամփոփների չափերը: Շատ արդյունավետ են մոդուլային կառուցվածքով արագ տեղաձավալվող հոսափտալները: Ուշադրության արժանի են և վերատեղաբաշխվող վիրահատարանները, որոնք էլեկտրամարտկոցների հանգույցով ապահովվել թույլ է տալիս տեղաշարժման ընթացքում նրանցում պահպանել օդային միջավայրի մանրէպերժուրությունը:

Հաշվի առնելով, որ վիրավորների գերակշիռ մասը մահանում է մարտադաշտում կամ փոխադրման ընթացքում արյունահոսությունից, ցնցակաթվածից կամ գանգոնդեղային վնասվածքներից, անհրաժեշտ է անմիջականորեն մարտադաշտում վիրավորներին ցնցակաթվածային վիճակից դուրս բերելու ծրագրի ներդրումը: Ընդամին փորձաքար է դառնում շրջանառու արյան քանակը դաշտային պայմաններում արյանը փոխարինող հեղուկների ներերակային ներարկման միջոցով վերականգնելու անհրաժեշտությունը: Արյան շրջանառության համակարգի մեջ ներերակային թափանցումը կապված է մի շարք բարդությունների հետ, որոնք սահմանափակում են նրա կիրառությունը, օրինակ՝ կոլապսի ժամանակ երակների տոնուսի անկումը, էմբոլիայի և արյան հոսքի մեջ օտար խառնուրդների անմիջական ներթափանցման վտանգը, ասեղը երակի մեջ հուսալիորեն ամրակայելու անհնարինությունը, կատետերի ոլորվելու հնարավորությունը և այլն: Անհրաժեշտ է բժշկական աշխատակազմին սովորեցնել զստակրի գագաթամասի կամ կրծոսկրի մեջ անել ներոսկրային ներարկումներ, որոնք ոչ միայն պնժ են ներերակային ներարկումների թերություններից, այլև ունեն մի շարք առավելություններ, մասնավորապես՝ դրանք նույնիսկ թույլ լուսավորության մեջ իրականացնելու հնարավորությունը, տեխնիկական պարզությունը, ասեղի կիպ ամրակայումը ոսկրի մեջ, սպունգակերպ ոսկրանյութի՝ պատահական խառնուրդները պահելու կարողությունը և այլն: Անհրա-

ժեշտ է բուժժառայությունը հազեցնել այդ գործողության կատարման համար դաշունիկավոր համապատասխան ասեղներով:

Նպատակահարմար են էական փոփոխությունները ինչպես պիևփորական, այնպես էլ քաղաքացիական բժիշկների պատրաստման գործում: Ջգալի քանակով բժիշկներ՝ պահեստապորի սպաներ, չունեն վիրավորներին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտ հմտություններ, վարժված չեն դաշտային պայմաններում աշխատելուն և ընդհանրապես բանիմաց չեն տեսակավորման, կենսական տվյալների հիման վրա ճիշտ անհապաղ օգնության ցուցաբերման և այլ հարցերում: Անհրաժեշտ է ռազմաբժշկական հարցերում բոլոր բժիշկների ավելի հետևողական ու խոր տեսական և գործնական պատրաստում:

Նպատակահարմար է ընդլայնել ռազմաբժշկական ծառայության համար մասնագետների պատրաստման ուսումնական հաստատությունների ցանցը: Առաջին քայլն արված է. պետական բժշկական համալսարանում սկսել է գործել ռազմաբժշկության մասնաճյուղ: Բայց պիևփորական բժիշկներ պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ մեկտեղ անհրաժեշտ են միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ, որոնք բուժքույրեր և բուժակներ կպատրաստեն՝ ռազմաբժշկական ծառայության հիմնարկներում աշխատելու համար: Հնարավոր է գոյություն ունեցող որոշ միջնակարգ բժշկական ուսումնական հաստատությունների վերամասնագիտացում:

Ջինփորական բժիշկների պատրաստումը հնարավորություն կստեղծի զգալիորեն կրճատելու այն պահեստապորի սպա բժիշկների քանակը, որոնք երկու-երեք տարով պորակոչվում են ՋՈՒ-ի ռազմաբժշկական ծառայությունում աշխատելու համար: Փորձը ցույց է տալիս, որ համապատասխան պիևփորական կրթություն չունեցող երիտասարդ բժիշկը չի կարողանում բավականաչափ լավ կատարել իր պարտականությունները: Բայց այդ, նրա բանակային ծառայության տևողությունը մեծ չէ, և այդ ժամանակի ընթացքում նա չի հասցնում հարկ եղած ձևով ծանոթանալ բանակային բժշկի աշխատանքի առանձնահատկություններին: Ռազմաբժշկական ծառայությանը հարկավոր են ոչ թե ժամանակավոր, այլ մշտական կադրային աշխատողներ: Ջորամատում աշխատող բժիշկը պետք է ամեն ինչ իմանա այդ պորամասի պիևծառայողների առողջության, նրանց աշխատանքի և կենցաղի առանձնահատկությունների մասին: Միայն այդ դեպքում կարելի է բարձրացնել հիվանդությունների բուժման և կանխարգելման

արդյունավետությունը: Ինչ վերաբերում է պահեստապորի սպա բժիշկներին, սպա նրանց օգտագործումն ավելի արդյունավետ և տեղին կլինի նրանց սովորական աշխատատեղերում՝ ռազմաբուժական ծառայության և առողջապահության նախարարության միավորված համատեղ գործունեության շրջանակներում: Ասենք, եթե նույնիսկ ռազմաբժշկական ծառայությունն ամբողջապես լրակազմված լինի միայն մշտական աշխատողներից, նրա հիմնարկներում կաշխատեն և քաղաքացիական բժիշկներ, որոնք ցանկության դեպքում կարող են վերապատրաստում անցնել պիևփորական ուսումնական հաստատություններում նախատեսվող հատուկ դասընթացներում: Դրա հետ մեկտեղ արդիական է հնարավորին չափ մեծ թվով բժիշկների՝ վթարներից և տարերային աղետներից տուժածներին անհետաձգելի վիրաբուժական օգնություն և առաջին բուժօգնություն ցուցաբերել սովորելու խնդիրը:

Առանց բնական գիտությունների և բուժտեխնիկայի բնագավառներում նորագույն նվաճումների օգտագործման ավատարմության և բուժման ժամանակակից հաջողությունները բոլորովին անհնարին կլինեին: Որպես հեռանկար՝ ծայրահեղորեն անհրաժեշտ է գիտական ռազմաբժշկական հետազոտությունների կենտրոնի ստեղծումը: Ներկայումս գործնականորեն չկա ռազմաբժշկության բնագավառում գիտական հետազոտություններ կատարող ոչ մի հիմնարկ կամ լաբորատորիա: Միաժամանակ, եթե հաշվի առնենք մեր հանրապետության հսկայական գիտական ներուժը, ռազմաբժշկական գիտահետազոտական կենտրոնը կարող էր, «ուղեղային կենտրոն» լինելով, ոչ միայն ինքն զբաղվել գիտական հետազոտություններով, այլև բավարար գիտական բազա ունեցող մյուս բոլոր գիտահետազոտական ինստիտուտները և հիմնարկներն ապահովել համապատասխան գիտահետազոտական պատվերներով և կոորդինացնել նրանց աշխատանքը: Որպես այժմեական աշխատանքներ կարելի է նշել մարտական վնասվածքների դեպքում պատվաստման համար նախատեսված հյուսվածքների պահեստարանի ստեղծմանը նպատակադրված ուսումնասիրությունները, ցնցակաթվածի բուժման մեթոդների հետազոտությունը, անհրաժեշտ է հիմնարար հետազոտություններ սկսել համաճարակաբանության և նոր պատվաստանյութերի ու գործողության տարբեր ուղղվածություններ ունեցող մի շարք դեղաբանական միջոցների ստեղծման բնագավառում, միջոցներ, որոնց կարիքը զգում է ռազմաբժշկական ծառայու-

թյունը: Այժմ Էսկան է արտասահմանյան երկրների վիճվորական բժիշկների և զանազան ռազմաբժշկական գիտական կենտրոնների հետ շփումների հաստատումը: Պետք է հաշվի առնել, որ Արևմուտքում ռազմաբժշկությունը մեծ քայլերով առաջ է գնացել՝ շատ շափորոշումներով և տեսանկյուններով գերազանցելով քաղաքացիական բժշկությունը, և այդ նվաճումների օգտագործումը կարող է Էսկանտրեն բարձրացնել մեր ռազմաբժշկական ծառայության արդյունավետությունը:

Հանապազօրյա խնդիր է այնպիսի ծառայության ստեղծումը, որը անհրաժեշտության դեպքում կարողանա համապատասխան քաղաքացիական հիմնարկների հետ համատեղ մասնակցել նաև ազգաբնակչությանն օգնություն ցուցաբերելու գործին: Տարանցիկ հիվանդությունների բռնկումների վտանգ առաջանալու դեպքում անհրաժեշտ է ապահովել վորամասերի աշխատակազմի համատարած պատվաստումը, օրինակ՝ բացիլային հեպատիտի, դիֆտերիայի, թորախտի վտանգի դեպքում:

Բժշկական ապահովումը չի կարող համապատասխանել ժամանակակից պահանջներին առանց կապակերպական-կառավարային և կլինիկական խնդիրների լուծման համար տեղեկատվական համակարգերի լայն օգտագործման: Ներկայումս սկսված է հոսպիտալները համակարգիչներով հանդերձելու գործընթացը, ստեղծվում են դեղագործական և համահոսպիտալային տեղեկատվական համակարգեր: Հնարավոր են այնպիսի ճկուն ծրագրերի ստեղծումը և կիրառումը համակարգիչներում, որոնք հարմարեցված լինեն ընդհանրապես կառավարային, մասնավորապես դեղագործական ու կլինիկական խնդիրների լուծմանը:

Այսպիսով, ներկայումս մշակված են կամ մշակվում են մի շարք նոր մոտեցումներ ՁՈՒ-ի

բժշկական ապահովման գործում: Դրանք նպատակաուղղված են ընթացիկ պահի պահանջների բավարարմանը և միաժամանակ՝ նախատեսված են հետագայի համար: Վերոհիշյալ տեսանկյուններն ընդարձակ ծրագրի միայն մի մասն են: Դրանց աստիճանական իրացումը թույլ կտա արմատապես բարելավել ռազմաբժշկական ծառայության գործառնման գիտական ապահովումը և Էսկանտրեն բարձրացնել նրա արդյունավետությունը:

Այժմեական է դառնում նաև վիճվորական բժիշկների սոցիալական ապահովման հարցը: Նրանք, որպես կանոն, ծանրաբեռնված են լինում մի քանի անգամ ավելի, քան քաղաքացիական բժիշկները: Հատկապես ծանր բեռ է բաժին ընկնում անհետաձգելի օգնություն ցուցաբերող վիճվորական բժիշկներին, էլ չենք խոսում վիրավորների ու վնասվածների վանգվածային ներհուսի դեպքերի մասին: Մինևույն ժամանակ, վճարովի բժշկության զարգացման համեմատ, կտրուկ մեծանում է քաղաքացիական բժիշկների հնարավորությունը՝ համապատասխան նյութական հատուցում ստանալու իրենց որակավորումը և մասնագիտական գիտելիքները մասնավոր գործունեության մեջ կիրառելուց: Որպեսզի վիճվորական բժիշկների արտահոսք չլինի դեպի քաղաքացիական բժշկությունը, նրանց ապահովումը չպիտի վիջի գործունեության քաղաքացիական ոլորտներում եղածին: Այս պայմանի կատարման համար հնարավոր են վիճվորական բժիշկների մտավոր ներուժի, տեխնոլոգիական և գիտական հնարավորությունների՝ տնտեսական հատույցի հաշվառումով օգտագործման տարբեր ուղիներ:

Կան նաև մի շարք այլ մոտեցումներ ՁՈՒ-ի բժշկական ապահովման գործում, բայց դրանք արդեն առանձին խոսակցության նյութ են:

ՀՕՊ-Ի ԶՈՐՔԵՐՈՒՄ

ԶԵՆԻԹԱՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՄԱՐՏԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Ս. Ս. ԽՈՉՈՅԱՆ, գնդապետ, ՀՕՊ-ի զորքերի վարչության ՉՀԶ պետ

1. ԶԵՆԻԹԱՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՆԱԽԱՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Զենիթահրթիռային զորքերի (ՉՀԶ) սպառազինության մեջ մտնում են զենիթահրթիռային համալիրներ (ՉՀՀ-ներ) (համակարգեր), ռադիոտեղորոշման կայաններ (ՌՏԿ-ներ), ռադիոտեղորոշման համալիրներ (ՌՏՀ-ներ), կառավարման ավտոմատացված համակարգեր (ԿԱՀ-եր), մարտական կառավարման և փոխադրման տարբեր միջոցներ: ՉՀՀ-ները լինում են.

— ըստ կրակի հեռավորության՝ հեռահար (200 կմ-ից ավելի), միջին հեռավորության (մինչև 200 կմ), փոքր հեռավորության (մինչև 50 կմ) և մերձավոր գործողության (մինչև 10 կմ),

— ըստ շարժունության աստիճանի՝ ստացիոնար, շարժական (ինքնագնաց, քարշային) և փոխադրովի,

— ըստ նշանառության փողանցքերի քանակության՝ միափողանցք և բազմափողանցք:

Որպես հետախուզման և նշանակետերի որոնման կայաններ օգտագործվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ կիրառության ՌՏԿ-ները (ՌՏՀ-ները):

ՉՀԶ-ն ըստ կառուցվածքի բաղկացած են զենիթահրթիռային բրիգադներից (ՉՀԲ) և գնդերից (ՉՀԳ):

Բրիգադը (գունդը) իր կազմում կարող է ունենալ մի քանի խումբ զենիթահրթիռային դիվիզիոններ (ՉՀԴ-ներ), տեխնիկական դիվիզիոններ և մարտական սպասարկման ու ապահովման ստորաբաժանումներ: Բրիգադի (գնդի) կազմը որոշվում է նրա հաստիքային կառուցվածքով և, որպես կանոն, մշտական է: ՉՀԴ-ների քանակը բրիգադում (գնդում) կախված է այն մարտական խնդրից, որ նա կատարում է, պաշտպանվող օբյեկտի բնույթից և կարևորությունից: Տեխնիկական դիվիզիոնների և մարտական ապահովման ստորաբաժանումների քանակն ու կազմը որոշվում են ՉՀԴ-ների քանակով ու սպառազինությամբ և ԿԱՀ-ի տեսակով:

ՉՀԴ-ները մարտավարական-կրակային ստորաբաժանում են՝ նախատեսված հակառակորդի օդային հարձակման միջոցները (ՕՀՄ) կրակով ոչնչացնելու համար, բաղկացած են

ռադիոտեխնիկական և մեկնարկային մարտկոցներից, կառավարման, հետախուզության և սպասարկման ստորաբաժանումներից:

Տեխնիկական դիվիզիոնը (մարտկոցը, դասակը) մարտավարական հատուկ ստորաբաժանում է, որը նախատեսված է հրթիռների ընդունման, պահպանման, նախապատրաստման և ՉՀԴ-ների դիրքերը հասցնելու համար, ինչպես նաև այնպիսի համալիր տեխնիկական միջոցառումների անցկացման համար, որոնք ապահովեն հրթիռների մշտական պատրաստությունը մարտական կիրառման:

ՉՀԶ ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների կազմակերպական-հաստիքային կառուցվածքին ներկայացվող հիմնական պահանջը դրանց մշտապես պատրաստ լինելն է իրադրության տարբեր պայմաններում մարտական խնդիրների կատարմանը և առավելագույն արդյունավետության ապահովմանը: Այդ կառուցվածքը պետք է ապահովի զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների որոշակի ինքնուրույնությունը մարտական խնդիրների կատարման ժամանակ, ՀՕՊ-ի մյուս ուժերի ու միջոցների հետ համագործակցության հնարավորությունը, տեղաբաշխման առանձնահատկությունների, մարտական գործողությունների շրջանի (հատկապես լեռնային) աշխարհագրական ու բնական պայմանների հաշվառումը, մարդկային ու նյութական պաշարների խնայողական օգտագործումը:

Խաղաղ պայմաններում ՉՀԶ զորամիավորումներն ու զորամասերը, գտնվելով առաջադրված մարտական խնդիրների կատարման համար մարտական պատրաստության վիճակում, մարտական հերթապահություն են կատարում՝ կրակ բացելու պատրաստության համար 5-ից մինչև 20 րոպե ժամկետներով:

ՉՀԶ զորամիավորումներն ու զորամասերն իրականացնում են օբյեկտների, շրջանների և ուղղությունների զենիթահրթիռային պաշտպանությունը, որը ներառում է օդից հակառակորդի հարձակումը հետ մղելու և օբյեկտներն ու զորքերը օդային հարվածներից պաշտպանելու միջոցառումների ու մարտական գործողությունների մի համալիր: Պաշտպանության կազմակերպման

հիմքը վենիթահրթիռային կրակի, հետախույզության և կառավարման համակարգերի ստեղծումն է:

Օբյեկտների վենիթահրթիռային պաշտպանությունը պետք է լինի՝

— շրջանաձև, արդյունավետությամբ հավասարապես ամուր, օդային հակառակորդի գործողությունների ամենահավանական ուղղություններում ջանքերի կենտրոնացմամբ,

— նախատեսված՝ բոլոր բարձրությունների համար, օդային հակառակորդի ոչնչացումը նրա թռիչքի բոլոր բարձրություններում ապահովող (սահմանային փոքր բարձրությունները՝ 200 մ-ից պակաս, փոքրերը՝ 200-ից մինչև 1000 մ, միջինները՝ 1000-ից մինչև 4000 մ, մեծերը՝ 4000-ից մինչև 12000 մ, ստրատոսֆերայում՝ 12000 մ-ից ավելի),

— կայուն, մարտական պայմաններում արդյունավետության պայմաններն ապահովող, ինչն առաջին հերթին ձևեր է բերվում մարտակարգի կենսունակությամբ, խանգարումների նկատմամբ կրակի, հետախույզման ու կառավարման համակարգի դիմացկունությամբ, սպառազինության հուսալիությամբ, անձնակազմի բարձր բարոյահոգեբանական պատրաստականությամբ,

— շարժուն, ստեղծվող իրադրությանը համապատասխան մարտակարգի արագ վերադասավորումը, կրակի ու ստորաբաժանումների տեղաշարժն ապահովող:

ԶՀԶ զորամասերի ու զորամիավորումների նախապատրաստումը մարտական գործողություններին, որպես կանոն, հիմնվում է վենիթահրթիռային պաշտպանության կազմակերպման վրա և լինում է երկու տեսակի՝ վաղորոք կատարվող և անմիջական:

Վաղորոք կատարվող նախապատրաստումը սկսվում է մարտական առաջադրանքի ստացման պահից, ավարտվում է սահմանված ժամկետում, անընդհատ կատարելագործվում է մինչև զորամիավորումը (զորամասը) բարձրագույն աստիճանի մարտական պատրաստության բերելը:

Ներառում է՝

— մարտական գործողությունների վերաբերյալ որոշման ընդունումը,

— ստորաբաժանումներին մարտական առաջադրանքներ տալը,

— մարտական գործողությունների ծրագրումը,

— մարտակարգի կազմումը և կրակի համակարգի ստեղծումը,

— զորամիավորման (զորամասի) ստորաբաժանումների և հարևան վենիթահրթիռային ու վենիթային հրետանու զորամիավորումների ու

զորամասերի, ավիացիայի կործանիչ ստորաբաժանումների ռադիո-տեխնիկական զորքերի (ՌՏԶ) ու ռադիո-էլեկտրոնային պայքարի (ՌԷՊ) զորամասերի ու ստորաբաժանումների միջև համագործակցության կազմակերպումը,

— ստորաբաժանումների նախապատրաստումը մարտական գործողությունների,

— բոլոր տեսակի մատակարարումների և կառավարման ապահովումը,

— մարտական հերթապահության կազմակերպումը և կատարումը:

Ջորամիավորման (զորամասի) *անմիջական նախապատրաստումը* մարտական գործողություններին սկսվում է զորամիավորումը (զորամասը) բարձրագույն աստիճանի մարտական պատրաստության բերելուց: Այն ներառում է՝

— բրիգադը (գունդը) մարտական պատրաստության բերելու ծրագրով նախատեսված միջոցառումների անցկացումը,

— հետախույզման ուժեղացումը օդային հակառակորդի հայտնաբերման համար,

— կրակի, հետախույզման և կառավարման համակարգերի բերումը զորամիավորման (զորամասի) ստորաբաժանումների կողմից մարտական խնդիրների կատարման համար պատրաստ վիճակի,

— զորամիավորման (զորամասի) մարտական գործողությունների ծրագրերի ճշգրտումը՝ հաշվի առնելով կոնկրետ իրադրությունը,

— դիրքային շրջանի ինժեներական սարքավորման և ստորաբաժանումների դիրքերի թողարկման միջոցառումների անցկացումը,

— հրթիռների և այլ նյութական միջոցների համալրումն ու ապակենտրոնացումը, ինչպես նաև ԶՀԶ զորամիավորման (զորամասի) մարտական պատրաստության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումներ:

Չենիթահրթիռային զորամիավորումներն ու զորամասերն իրենց մարտական գործողությունները վարում են հակաօդային մարտերի ձևով:

ԶՀԶ բրիգադի (գնդի) հակաօդային մարտը ենթադրում է՝

— կրակի նշանակետի, տեղի և ժամանակի համաձայնեցում,

— հարվածներ վենիթային կառավարվող հրթիռներով,

— օդային հակառակորդի ոչնչացման նպատակով վենիթահրթիռային դիվիզիոնների զորաշարժ,

— պաշտպանվող օբյեկտներին ուղղված թշնամու հարվածի և նրա կողմից կրակի գոտու ձևերման կասեցում:

Հակաօդային մարտը բացառիկ արագընթաց է, վարվում է այնպիսի պայմաններում, երբ հա-

կառավորողը կիրառում է կառավարման ու հրաձգության նկատմամբ հակապոզիտիվ ամբողջ համալիրը, այն հրամանատարների, շտաբների, ու փոքրերի պահանջում է ծայրահեղ լարում: ՋՀԶ փորձավորման (փորձասի) հակաօդային մարտըն սկսվում է պաշտպանվող օբյեկտների վրա օդային հակառակորդի հարձակումը բացահայտելու պահից և ավարտվում է օդային հակառակորդի ոչնչացմամբ կամ բրիգադի (գնդի) բոլոր դիվիզիոնների կողմից կրակի դադարեցմամբ:

Ըստ օդային հակառակորդի վրա կրակային ներգործության հատկանիշի հակաօդային մարտ վարելու հիմնական միջոցներն են՝

— առավել կարևոր օդային նշանակետերի դեմ կրակի կենտրոնացումը՝ դրանք հուսալիորեն ոչնչացնելու նպատակով,

— կրակի ապակենտրոնացումը օդային հակառակորդին առավելագույն կորուստներ պատճառելու համար,

— ՋՀԶ-ների կողմից կրակի ինքնուրույն վարումը:

Կրակի կենտրոնացումը բրիգադի (գնդի) մարտ վարելու հիմնական եղանակն է այն դեպքում, երբ հրամանատարին հաջողվել է բացահայտել հակառակորդի մտահղացումը և որոշել հարվածին մասնակցող նշանակետերից առավել կարևորները, ինչպես նաև, երբ օդային հակառակորդի հարվածի խորությունը չի գերազանցում բրիգադի (գնդի) կրակային հնարավորությունները:

Հակաօդային մարտի բացառիկ արագընթացությունն ու լարվածությունը օդային հակառակորդի հարվածը հետ մղելու ժամանակ սահմանափակում են զորամասերի և ստորաբաժանումների զորաշարժի հնարավորությունը: Նման զորաշարժ անցկացվում է հատուկ դեպքերում կամ շարժման ընթացքում և կարճատև կանգառներին հընթացա կրակ վարելու ընդունակ ստորաբաժանումների կողմից: ՈՒստի ստորաբաժանումների զորաշարժը, որպես կանոն, կատարվում է զենիթափոխարկային պաշտպանության մտահղացմանը համապատասխան և ըստ մարտն սկսվելուց առաջ եղած իրադրության, հակառակորդի հարվածների միջև ընկած ընդմիջումներին:

Չենիթափոխարկային պաշտպանության արդյունավետության հիմնական ցուցանիշներն են.

1. Օբյեկտի պահպանման հավանականությունը, օբյեկտի ներուժի՝ պահանջվողից ոչ պակաս մասի պահպանման հավանականությունը, կանխված վնասի (օբյեկտի պահպանված ներուժի) մաթեմատիկական սպասումը: Այս ցուցանիշը առավելագույն չափով է համապատասխանում ՋՀԶ խմբավորումների կողմից լուծվող խնդիրներին:

2. Մինչև իրենց խնդրի կատարման սահմաններին հասնելը հակառակորդի ոչնչացված օդային հարձակման միջոցների թվի մաթեմատիկական սպասման հարաբերական մեծությունը: Իր տեխնիկական իմաստով այս ցուցանիշը նույնպես արտացոլում է զենիթափոխարկային պաշտպանության նպատակը՝ թույլ չտալ ՕՀՄ հարված օբյեկտին:

3. Հակառակորդի ոչնչացված ՕՀՄ-ի թվի մաթեմատիկական սպասումը (բացարձակ կամ հարաբերական արժեքներով), որպես կանոն, օգտագործվում է սովորական վեներ կրող օդային հակառակորդի հարվածի հետմղման ժամանակ պաշտպանության արդյունավետության գնահատման համար: Չենիթափոխարկային պաշտպանության արդյունավետությունը կանխորոշվում է հակամարտ կողմերի ուժերի հարաբերակցությամբ և նրանց մարտական գործողությունների արդյունավետությամբ՝ իրենց մարտական հնարավորություններն իրացնելու աստիճանի տեսակետից: Պաշտպանության արդյունավետությունը գնահատվում է՝ հաշվի առնելով հակառակորդի գործողությունների բոլոր հնարավոր տարբերակները:

2. ՋՀՀ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Հակաօդային մարտը զենիթափոխարկային դիվիզիոնների կամ այլ ստորաբաժանումների գործողություններն են՝ ուղղված օդային հակառակորդի ինքնուրույն կամ կործանիչ ավիացիային և զենիթային հրետանու հետ համագործակցմամբ ոչնչացմանը սահմանափակ շրջանում ու սահմանափակ ժամանակամիջոցում:

Ժամանակակից հակաօդային մարտի հիմնական գծերն են՝ նպատակների վճռականությունը, տարբեր սպառազինության ու ռազմական տեխնիկայի լայն կիրառումը, շարժունակությունը, դինամիկությունն ու արագընթացությունը, հանկարծակիությունն ու իրադրության արագ փոփոխումը, հակամարտ կողմերի ակտիվությունն ու վանազան տեխնիկական հնարքների կիրառումը:

Հակաօդային մարտի հիմնական բաղադրիչներն են՝ կրակը, զորաշարժը, ՌԷՊ-ը, բոլոր տեսակի հետախուզությունները, ինչպես նաև հատուկ տեխնիկական ապահովումը:

Օդային մարտի ցուցանիշներն են՝ հարվածում նշանակետերի գտնվելու տարածությունը (տարածական և ժամանակային), կրակի բնութագծերը (կրակոցների քանակը, հրթիռների ծախսումը), մարտի արդյունավետությունը (ոչնչացված նշանակետերի քանակը, յուրաքանչյուր

ոչնչացված նշանակետի համար հրթիռների ծախսումը), ինչպես նաև զենիթահրթիռային ստորաբաժանումների անձնակազմի և տեխնիկայի կորուստները:

ՉԸՁ մարտական խնդրի կատարման արդյունավետությունը էապես կախված է կառավարման որակից: Կրակի կառավարումը զենիթահրթիռային վորամասերի մարտական գործողությունների կառավարման հիմնական և կարեւոր մասն է: Հակաօդային մարտը բացառիկ դիւնամիկ է և արագընթաց, այդ պատճառով ՉԸԳ-ների կրակի կառավարումը կատարվում է ժամանակի պակասի պայմաններում և պետք է կառուցվի գործողությունների կենտրոնացման և ինքնուրույնության համակցման վրա:

Մինչև կրակի կառավարման գործընթացը հավաքվում և մշակվում է տեղեկությամբ մարտական գործողությունների թատերաբեմում և շրջանում օդային հակառակորդի վիճակների տեղակայման, հետախույզության միջոցների գործողության գոտում օդային և ցամաքային իրավիճակի, սեփական դիվիզիոնների ու համագործակցող ստորաբաժանումների կազմի և մարտական պատրաստության աստիճանի, զենիթային կառավարվող հրթիռների քանակի և վիճակաշարի համարման հնարավորությունների մասին:

Կրակի կառավարումը ներառում է՝

- ՉԸՁ-ն հ. 1 պատրաստության (հրթիռներն արձակելու և պատրաստ լինելը) բերելը,
- օդային հակառակորդի հարվածը հետ մղելու առաջադրված խնդրի պարզորոշումը,
- իրադրության գնահատումը,
- հակառակորդին ոչնչացնելու որոշման ընդունումը,
- դիվիզիոններին խնդիրների առաջադրումը և դրանց կատարման վերահսկողությունը,
- նշանակետերի խմբերի և ինքնուրույն կերպով հայտնաբերված նշանակետերի դեմ դիվիզիոնների և վորամասերի մարտական գործողությունների փոխհամաձայնեցումը,
- մարտական գործողությունների արդյունքները հաշվի առնելը և հետագա հարվածները հետ մղելուն նախապատրաստվելու վերաբերյալ կարգադրություններ անելը:

Հ. 1 պատրաստության բերելը իրականացվում է ՉԸԲ-ի ՀԿ-ից կամ մարտական կառավարման կետից տրվող հրամանով: Միացվում են ՀԿ սարքավորումները, ՉԸՀ-ները և տեխնիկական ստորաբաժանումների միջոցները, իրականացվում է դրանց վերահսկողություն և այն հաշվով, որ առաջին նշանակետերը ոչնչացվեն խոցման գոտու հեռավոր սահմանում:

Առաջադրված խնդրի պարզորոշումը ներառում է օդային հակառակորդի հարվածը հետ մղելու վերաբերյալ ավագ հրամանատարի մտահղացումների պարզումը, մարտական գործողություններում սեփական դերի և սեփական կրակային խնդրի կոնկրետացումը, այն նպատակակետերի որոշումը, որոնք անհրաժեշտ է ոչնչացնել ինքնուրույն կերպով կամ ՀՕՊ-ի այլ ուժերի ու միջոցների հետ համագործակցելով:

ՕՀ-ի հարվածը հետ մղելու որոշումը հրամանատարն ընդունում է առաջադրված խնդրի պարզորոշման և հակառակորդի ու իրադրության համակողմանի գնահատման հիման վրա: Որոշումը ներառում է մարտի մտահղացումը, կրակի բաշխումն ըստ օդային նշանակետերի, համագործակցության եղանակները, մարտական գործողությունների ապահովումը, խնդիրների առաջադրման սահմաններն ու կարգը, ռազմական խորամանկությունները և հակառակորդի խաբուսիկ գործողություններին հակազդման եղանակները:

Դիվիզիոններին (մարտկոցներին) կրակային խնդիրների առաջադրումը ներառում է նպատակադրումը, սրա վերջնամշակման և նախատեսված նշանակետերի որման վերահսկողությունը՝ ընդամին նշելով զենիթային կառավարվող հրթիռների (ՉԿՀ-ների) տեսակն ու քանակը:

Մարտական գործողությունների փոխհամաձայնեցումը իրականացվում է հարվածը հետ մղելու ընթացքում՝ հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, սեփական և հակառակորդի կորուստները, նկատի ունենալով ՌՏԶ-ից և դիվիզիոններից ստացվող լրացուցիչ տվյալները:

Մարտական գործողությունների արդյունքների հաշվառումը կատարվում է անընդհատ՝ մարտի ծավալումը կանխատեսելու նպատակով, հետագա մարտական գործողությունների վերաբերյալ որոշումների հիմնավորման համար:

3. ՉԸՀ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՉԸՀ մարտական հնարավորություններ անելով հասկացվում է նրա ունակությունը՝ անցնելու մարտական պատրաստության վիճակի, ապահովելու մարտական նշանակետերի ոչնչացումը և պահպանելու սեփական մարտունակությունը: ՉԸՀ մարտական հնարավորությունների հիմնական ցուցանիշներն են՝ նրա խոցման գոտիների հաշվարկային և իրացվող չափերը, տարբեր պայմաններում նշանակետերի ոչնչացման հավանականությունները, մարտական պատրաստության անցնելու ժամանակը, հրա-

ձգույթյան ցիկլը և խոցելիության աստիճանները:
 Հրթիռակոծման գոտի կոչվում է տարածության այն մասը, որը հարում է ՉՀՀ-ին և որի սահմաններում հնարավոր է հրթիռներն ուղղորդել նշանակետերին և վերջիններս խոցել թեկուզև վրոյից բարձր հավանականությամբ: Այդ գոտին որոշում է հրթիռներն ուղղորդելու ՉՀՀ-ների առավելագույն հնարավորությունները:

Խոցման գոտին ՉՀՀ շուրջը գտնվող տարածությունն է (հրթիռակոծման գոտու մի մասը), որի սահմաններում ապահովվում է հանձնարարվածից ոչ պակաս հավանականությամբ պենիթենցիան կառավարվող հրթիռներով օդային նշանակետերի ոչնչացումը: Խոցման գոտիները տարբեր պայմաններում օդային նշանակետերը ոչնչացնելու ՉՀՀ մարտական հնարավորությունների ամենակարևոր ընդհանրացված բնութագծերն են: Որպեսզի հրթիռի հանդիպումը նշանակետի հետ տեղի ունենա խոցման կետում, հրթիռի արձակումը պետք է կատարել վաղորդ՝ հաշվի առնելով մինչև հանդիպման կետը հրթիռի թռիչքի ժամանակը և նշանակետի արագությունը:

Արձակման գոտի կոչվում է նշանակետը որոնելիս տարածության ՉՀՀ շուրջը գտնվող այն մասը, որի սահմաններում հրթիռի մեկնարկի պահին ապահովվում է նրա հանդիպումը նշանակետին խոցման գոտում: Չմաներող նշանակետին կրակելու դեպքում արձակման գոտի սարքավորելիս խոցման գոտու յուրաքանչյուր կետը պետք է տեղաշարժվի նշանակետի շարժման գծին համապատասխան այնպիսի հեռավորության վրա, որը հավասար լինի մինչև խոցման գոտու ընտրված կետը թռիչքի ժամանակ նշանակետի անցած տարածությանը:

Արձակման գոտու ցանկացած կետի համար հորիզոնական և թեք հեռավորությունները խոցման գոտու համապատասխան կետի թեք և հորիզոնական հեռավորությունների հետ կապված են հետևյալ հարաբերակցություններով.

$$\begin{aligned} \zeta_{\text{արձ}} &= \sqrt{(\sqrt{d_{\text{ju}}^2 - P_{\text{u2}}^2} + V_{\text{u2}} \cdot t_{\text{h}})^2 + P_{\text{u2}}^2} \\ \Gamma_{\text{արձ}} &= \sqrt{\sqrt{r_{\text{ju}}^2 - P_{\text{u2}}^2} - H_{\text{u2}}^2 + P_{\text{u2}} + H_{\text{u2}}^2} \end{aligned}$$

որտեղ

d_{ju} -ն նշանակետի շարժման տվյալ բարձրության և պարամետրի դեպքում խոցման գոտու հեռավոր սահմանն է,

P_{u2} -ը՝ նշանակետի շարժման պարամետրը,

V_{u2} -ը՝ նշանակետի արագությունը,

t_{h} -ն՝ հրթիռի թռիչքի ժամանակը,

r_{ju} -ն՝ նշանակետի խոցման թեք հեռավորությունը,

H_{u2} -ը՝ նշանակետի թռիչքի բարձրությունը:

Խոցման և արձակման գոտիները ընդունված է բաժանել հաշվարկային և իրացվող գոտիների:

Որպես խոցման հաշվարկային գոտի ընդունված է տարածության այն շրջանը, որտեղ նշանակետի շարժման տրված պարամետրների դեպքում հնարավոր է նշանակետի ոչնչացում որոշակի արդյունավետությամբ:

Առավել պարզ պայմաններում օդային նշանակետերի ոչնչացման համալիրների սահմանային հնարավորությունները բնութագրվում են խոցման հաշվարկային տվյալներով:

Խոցման իրացվող գոտիները պայմանավորված են հրաձգության կոնկրետ պայմաններում ՉՀՀ-ով նշանակետերի ոչնչացման իրական հնարավորություններով: Խոցման հաշվարկային գոտիների համեմատությամբ այստեղ լրացուցիչ հաշվի է առնվում նշանակետի տեսակը (դիա արդյունավետորեն անդրադարձնող մակերեսը, չափերը, խոցելիության աստիճանը), դիրքում ՉՀՀ տեղադրման պայմանները, հակառակորդի հակազդեցությունը, ռադիոալիքների տարածման պայմանները և այլն:

Խոցման իրացվող գոտին, որպես կանոն, գտնվում է հաշվարկային գոտու ներսում: Հեշտությամբ խոցելի խոշոր, դանդաղաշարժ և չըմաներող նշանակետերի համար խոցման իրացվող գոտիները որոշվում են հետևյալ գործոններով՝

— հրթիռների թռիչքի հեռավորությամբ և արագությամբ,

— հրթիռների թռիչքաբալիստիկական և կառուցվածքամեխանիկական բնութագծերով,

— հրթիռների մարտական հանդերձանքի բնութագծերով,

— հրթիռների ունեցած և թույլատրելի սահմանային ծանրաբեռնվածությամբ,

— հրթիռների կառավարման եղանակով և նշանառության մեթոդով,

— ՉՀՀ կառավարման շրջային պարամետրներով և նշանառության սխալներով,

— ՉՀՀ ռադիոտեղորոշման միջոցների հնարավորություններով,

— նշանակետի շարժման V_{u2} , H_{u2} , P_{u2} պարամետրներով,

— նշանակետի մանրելու հնարավորություններով (թույլատրելի ծանրաբեռնվածությունների մեծությամբ),

— նշանակետի տեսակով (նշանակետի

չափերը, արդյունավետորեն անդրադարձնող մակերեսի մեծությունը, խոցելիության աստիճանը),

— հակառակորդի հակազդեցության բնույթով (մանր, խանգարումներ),

— դիրքում ՋՀՀ տեղադրման պայմաններով (ծածկոցի անկյունով և տեղանքի թեքությամբ, ոտքի տակ գտնվող մակերևույթի բնույթով):

Խոցման գոտու սահմանների դրությունը որոշող հիմնական ընդհանրացված գործոնը հրթիռի անհրաժեշտ և առկա ծանրաբեռնվածությունների հարաբերակցությունն է՝

$$O_{տոկա} \geq O_{անոթ} = O_{կին} + O_{հատ} + O_{շնդ} ,$$

որտեղ՝

$O_{կին}$ -ը անհրաժեշտ կինեմատիկական ծանրաբեռնվածությունն է,

$O_{հատ}$ -ը՝ նշանառության պարբերաբար կրկնվող դինամիկական սխալների բաղկացուցիչների հատուցման համար ծախսվող ծանրաբեռնվածությունը,

$O_{շնդ}$ -ը՝ նշանառության դինամիկական սխալների շեղման բաղադրիչների հատուցման համար ծախսվող ծանրաբեռնվածությունը:

4. ՋՀԶ ՋՈՐԱՄԱՍԵՐԻ, ՋՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՁԵՆԻԹԱՀՐԹԻՈՒՍՅՈՒՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Կարևոր գործնական նշանակություն ունեն սեփական պորքերի մարտական հնարավորությունների գնահատման, հակամարտ կողմերի ուժերի հարաբերակցության հարցերը:

Մարտական հնարավորությունների ճիշտ որոշումը ՋՀԲ (ՋՀԳՊ) հրամանատարին թույլ է տալիս հիմնավորված որոշումներ կայացնել, որակյալ և նպատակամետ կերպով ծրագրել մարտական գործողությունները, ստորադրյալներին ուժերի համեմատ մարտական խնդիր առաջադրել, խնդիրները հաջողությամբ լուծելու համար արդյունավետորեն օգտագործել նդած ուժերը:

Մարտական հնարավորությունները իրադրության տարբեր պայմաններում մարտական խնդիրների կատարման բրիգադի կարողությունն են: Դրանք կախված են սպառազինության մարտական կազմից, բրիգադի (գնդի) լրակազմվածությունից, անձնակազմի մարտական պատրաստակալության աստիճանից, մարտական գործողությունների ապահովումից, ինչպես նաև հակառակորդի գործողության բնույթից,

տեղանքից և այլ գործոններից:

Մարտական հնարավորությունները պետք է պատասխանեն այն հարցին, թե ինչ մարտական խնդիրներ տարածության որ մասում և ինչ արագությամբ կարող են կատարվել: Կրակային և ծածկապաշտպանական հնարավորությունները միասին վերցված որոշում են ՋՀԶ պորամասի, ստորաբաժանման հնարավորությունները գենիթախորհրդային կրակի համակարգ ստեղծելու գործում:

Կրակային հնարավորությունները մարտին նախապատրաստված բրիգադի (գնդի) կողմից իրադրության տարբեր պայմաններում օդային հակառակորդին ոչնչացնելու կարողությունն են: Կրակային հնարավորությունների ընդհանրացված ցուցանիշն է որոշակի տևողությամբ հարվածը հետ մղելու կամ հրթիռների որոշակի քանակություն ծախսելու դեպքում ոչնչացված ՕՀՄ-երի թվի մաթեմատիկական սպասումը, իսկ մասնավոր ցուցանիշերն են հրաձգությունների քանակը ($N_{հրձ}$) և դրանց արդյունավետությունը (Z_n):

Օդային հակառակորդի հարվածները հետ մղելու ժամանակ նրան հասցված կորուստների մեծությունը կախված է բազմաթիվ գործոններից:

1. Չորամասի կազմից, սպառազինության համակարգերի ՏՏԲ-ից, մարտական լրակազմի մեծությունից և հրթիռների առկայությունից: Դրանք անձնակազմի համապատասխան պատրաստակալության դեպքում որոշում են օդային հակառակորդի ոչնչացման գործում գենիթախորհրդային պորամասերի և պորամիավորումների սահմանային հնարավորությունները ($M_{տո}$):

$$M_{տո} = \sum_{i=1}^{N_{հրձ}} Z_{ni} ,$$

որտեղ $N_{հրձ}$ -ը հրաձգության քանակն է, Z_n -ը՝ հրթիռների քանակը:

2. Մարտական գործողությունների նախապատրաստման և վարման ժամանակ հրամանատարների և շտաբների նպատակամետ գործունեության որակից:

Այսպիսով, հրամանատարը և շտաբը տարբեր ձևերով պետք է կարողանան հաշվարկել ՋՀԶ պորամիավորումների (պորամասերի) մարտական հնարավորությունները՝ մարտական գործողությունների վերաբերյալ հիմնավորված որոշումներ կայացնելու համար, իրադրության տարբեր պայմաններում գործունեությունը նրա պատակառդել այդ որոշումների կատարմանը:

ՀՕՊ-Ի ՈՐՈՇ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԾԵՐԸ*

F-14 ԿՈՐԾԱՆԻՉ

F-14 կործանիչը բազմանպատակ նախանշանակման ինքնաթիռ է, նախատեսված է օդում գերազանցու թյուն նվաճելու և ավիակիրների միավորումները օդային հարվածներից պաշտպանելու համար: Կործանիչը թողարկվում է մի քանի տարբերակով: Ըստ անբողիմամիկական ուրվագծի կործանիչը մոնոպլան է՝ փոփոխվող պաթաձևությամբ, բարձր տեղադրված թևով:

- Տակտիկատիկական բնութագրերը
- Անձնակազմը՝ 2 հոգի
- Առավելագույն արագությունը 12000 մ բարձրության վրա՝ 2650 կմ/ժամ
- Կրելներակալ արագությունը՝ 740 — 1000 կմ/ժամ
- Վայրէջքի արագությունը՝ 220 կմ/ժամ
- Գործնական բարձրակետը՝ 21000 մ
- Թռիչքային առավելագույն բաշը՝ 27000 — 33000 կգ
- Վառելանյութի պաշարը՝ 7350 կգ
- Մարտական գործողության շառավիղը՝ 700 կմ
- Մարտական բեռնվածությունը՝ 3200 կգ
- 18000 մ բարձրության հասնելու ժամանակը 25000 կգ թռիչքային բաշի դեպքում՝ 2,1 րոպե
- Չարփերը.
- Երկարությունը՝ 18,9 մ
- Բարձրությունը՝ 4,88 մ
- Թևի բացվածքը՝ 19,45 մ:
- Սպառազինությունը.
- թողանոթային՝ 1x20 մմ Վուլկան հրթիռային՝ 6 Ֆենիքս ԿՌԱ
- հրթիռային՝ 2 Սայդվինդեր ԿՌԱ
- հրթիռային՝ 4 Սպարեյ ԿՌԱ

Պ-19 (ՈՒԱ-134) ՌՏԿ

Ցածր թռչող նշանակեաների հայտնաբերման երկկողմի հնատային Պ-19 ռադիոտեղորոշման կայանը նախատեսված է ցածր թռչող նշանակեաների հայտնաբերման, ջրջանաձև տեսածիրով ինդիկատորի վրա դրանց պատկերման, հրամանատարական կետերին տվյալների հայտնման և կցորդված սարքավորմանը պահանջվող ձևով տեղեկությունների հարդրման համար:

ՌՏԿ-ն հնարավորություն է ընձեռում որոշելու նշանակեանի ազիմուտը, թեքությունը հեռավորությունը և ցամաքային ռադիոտեղորոշային հարցումներով օդնությանը ճանաչելու հայտնաբերված նշանակետը:

Կայանը տեղավորված է երկու ՋԻԱ-131 ավտոմեքենաների վրա: Մակում է 400 հյ հաճախականությամբ 220 վ եռաֆազ լարումով, տրվող ԱԲ-16 ազրեզատից:

Օգտագործվող հզորությունը 15 կվտ է: Մեկ ժամում ազրեզատի ծախսած վառելանյութը 11,2 լ է: Կայանը կարող է աշխատել երբ՝ շրջապատող օդի ջերմաստիճանը ըստ Ցելսիուսի —40°-ից +50° է,

խոնավությունը՝ մինչև 98 %, քամին՝ մինչև 25 մ/վրկ, անձրևի, եղամի, ձյան տեղալու ժամանակ:

ՌՏԿ հաղորդիչն իմպուլսի դեպքում ունի 210 կվտ-ից ոչ պակաս հզորություն:

Շրջանաձև տեսածիրով ինդիկատորն ունի չորս մասշտաբ՝ 100 կմ, 200 կմ, 300 կմ, 50 կմ հապաղումով:

Կայանի ալեհավաքն ունի պտտման երկու արագու-

*Նյութերը պատրաստել են Ս. Գ. Գուրոբյանը, Բ. Ռ. Տոնոյանը, Վ. Ա. Կարոյանը:

թյուն՝ 6 և 12 պտույտ/րոպե: ՌՏԿ անընդմեջ աշխատանքի առավելագույն ժամանակը 24 ժամ է:

Նշանակեաների հայտնաբերման առավելագույն բարձրությունը 6000 մ է:

Միգ-17 տիպի միայնակ ինքնաթիռի հայտնաբերման հեռավորությունը կազմում է.

Ի մ՝ 100 500 1000 4000 6000

Հեռ. կմ՝ 32 60 140 180 150

Նշանակեաների կորողինատների որոշման սխալը չի գերազանցում հետևյալ արժեքները.

հեռավորության՝ 2000 մ, ազիմուտի՝ 2°:

Երթային վիճակից կայանի ծավալման և միացման ժամանակն է 20 րոպեից ոչ ավելի: Ծավալված վիճակից և մուտքման ազրեզատի աշխատելու դեպքում կայանը մարտական աշխատանքի միացնելու ժամանակն է 3 րոպեից ոչ ավելի: Շտապ միացման ժամանակն է 1,5 րոպեից ոչ ավելի:

ՌՏԿ տեղափոխման միջին արագությունը պլինո ծածկ ու նեցող ճանապարհներով 30 կմ/ժամ է:

ՄՈՒ-24 ՈՒՄԿԱՆՈՇԻՉ

Ուղեգնաձև կատային ուղեգնային է, կա ռազմաճակատային հետախույզի վերափոխված տեսակը, թեր փոփոխվող պաթաձև է:

Տակտիկատիկական բնութագրերը.

Անձնակազմը՝ 2

Թևի բացվածքը՝ 10,3 — 17,6 մ

Երկարությունը՝ 24,5 մ

Բարձրությունը՝ 6,2 մ

Թևի մակերեսը՝ 51 — 55,1 քառ. մ

Շարժիչը՝ ԱԱ-21Ֆ3

Թռիչքային ցանցվածքը՝ 39,7 տ

Արագությունը.

առավելագույնը՝ 1050—1600 կմ/ժամ

գեոմին մոտ՝ 800—1000 կմ/ժամ

Գործնական բարձրակետը՝ 500 — 800 մ

Մարտական գործողությունների շառավիղը՝ 500—600 կմ

Սպառազինությունը՝

մինչև 8 «Օդ — երկիր» ԿՌԱ

4 «Օդ — օդ» ԿՌԱ

գնդակի՝ ԳԵ-30

ոմբարտնավածությունը՝ 2 — 3 տ

ՋԱՅՄ (ԱՏԵԱ-10) ՁԵՆԻԹԱՀՐԹՈՒՄԵՆԻ ՀԱՄԱԽԻՐ

Ինքնավար, թեթև ՋԱՅՄ ՋՀՀ-ն նախատեսված է հակառակորդի օդային հարձակման ցածր թռչող միջուկների ոչնչացման համար: Օգտագործվում է որպես մոտոհրաձգային փորքերի գնդերի ու բրիգադների ՀՕՊ-ի միջոց, ինչպես նաև տարբեր ռազմական օբյեկտներ օդից անմիջականորեն ծածկապաշտպանելու համար:

Մեկ համալիրի կազմի մեջ մտնում են.

1. Մեկ ՋԱՅՄ մարտական մեքենա և բեռնամփոփում (կոնտեյներում) տեղավորված մեկ ՋԱՅՄ հրթիռ:

2. Մեկ ՋԱՅՄ վերահսկիչ-ստուգողական մեքենա և մեկ ՋՖ616 տրենաժոր:

ՋԱՅՄ մարտական մեքենան բաղկացած է.

— ՄՏԲ-2 բազային մարտական մեքենայի՝ ՅՄԶ-238ՎՄ շարժիչով,

— արձակման սարքից,

— ՋԱՅՄ արձակման սարքավորումից,

— ցամաքային ռադիոհարցումներով (ՑՌՀ),

— նշանառության միջոցից,

- ուղղորդման միջոցից,
 - կապի միջոցից:
- 9Մ37Մ հրթիռը կառուցված է «ՌԻտկա» սխեմայով, կառավարող օրգանները գտնվում են հրթիռի առջևի մասում, իսկ «Կոնյա» կայունարարը (ստաբիլիզատորը)՝ պոչի մասում:
- Հրթիռը բաղկացած է 5 մեկուսամասերից.
- առաջին մեկուսամասում ինքնանշանատման զբլխիկն է,
 - երկրորդ մեկուսամասում՝ ավտոռաչուն, սնուցման բլոկը և պայթեցնող սարքի միացման տվիչը,
 - երրորդ մեկուսամասում՝ մարտական մասը,
 - չորրորդ մեկուսամասում՝ ոչ կոնտակտային տվիչը,
 - հինգերորդ մեկուսամասում՝ պինդ վառելանյութով հրթիռային շարժիչը:

9Մ35Մ ԶՀՀ տակտիկատեխնիկական բնութագծերը

Բաշը՝ 8000 կգ
Երկարությունը՝ 6550 մմ
Լայնությունը՝ 2770 մմ
Բարձրությունը.

- երթային դրությունում՝ 2550 մմ
 - մարտական դրությունում (տեղի 80° անկյան դեպքում)՝ 3990 մմ
- Շարժման արագությունը.
- խճուղիով՝ 55 — 60 կմ/ժամ
 - գյուղամիջյան ճանապարհով՝ 40 — 50 կմ/ժամ
 - ճանապարհավրության դեպքում՝ 20 — 30 կմ/ժամ
- Երթային դրությունից մարտական դրության անցնելու ժամանակը՝ 2530 վրկ
- Հրթիռը արձակման պատրաստելու ժամանակը՝ 6 վրկ
- Չորս հրթիռներով արձակման կայանքի վերալցումը՝ 2 — 3 րոպե:

9Մ37Մ հրթիռ.

Տրամաչափը՝ 120 մմ
Հրթիռի քաշը բեռնամփոփում՝ 68 կգ
Նշանակետի խոցման հեռավորությունը՝ մինչև 5500 մ
Նշանակետի խոցման բարձրությունը՝ 50 — 3000 մ
Նշանակետին հասնելու արագությունը.

- հանդիպական ընթացքի դեպքում՝ 300 մ/վրկ,
- հետապնդման ընթացքի դեպքում՝ 220 մ/վրկ:

ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ НАД ФАШИЗМОМ

К. А. АРУТЮНЯН, доктор исторических наук,
руководитель группы "Участие армянского народа во Второй мировой
и Великой Отечественной войне" Института истории НАН РА.

1 сентября 1939 г. вторжением войск фашистской Германии в Польшу началась Вторая мировая война. Воспользовавшись пассивностью Западных держав, Гитлер вскоре подчинил себе не только большую часть Польши, но и Бельгию, Голландию, Данию, Францию, Югославию, Грецию. Еще до этого Германия присоединила Чехословакию и Австрию. Ранним утром 22 июня 1941 г. фашистская Германия, в нарушение Договора о ненападении, заключенного с СССР 23 августа 1939 г. сроком на 10 лет, внезапно напала на Советский Союз с целью уничтожения в молниеносной войне этой великой державы, составляющей 1/6 часть мира, порабощения ее народов и создания Великой Германской империи.

